


Huey P. Newton



1915

29.05.2013

84 MAY 2010

491.99-8

6-86
Մ. 2

498
127-40



ՀԱՍԻԿՆԵՐ

ԸՆԹԱՑԱՆՈՒԹԵԱՆ ԶԵՐՆԱԿ

ԵՐՐՈՐԴ ԵԽ ԶՈՐՐՈՐԴ ՏԱՐԻՆԵՐԻ



Կ. ԿՈՒՍԻԿԻՆԻ ԵԽ ԱԼ. ՊԱՍԻԿԻՆԻ
ԿԱՅԱՑՎԱԿԻ

ՄԱՍԻԿ
ՏՊԱՐԱՐԱ Բ. ԲԱՐԻՆՈՒԴՅԱՐԵԱՆԻ
1915

ԿԱԶՄՈՂՆԵՐԻՑ

Օ Ե Մ Պ Գ Ա Յ Հ

ԹՎԱՅԻՆ ԺԱՌԱՅԻՆ ԵՐԵՎԱՆ

ՊԱՏՇԱԽ ՔՐՈՎՈՅ ՀՅ ՊՐՈՎՈՅ

ՄԱՍԻՆ

ՊՐՈՎՈՅ ԱՅ ՊՐՈՎՈՅ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆ

6191

Մայրենի լեզուի դասագիրքը կարող է ծառայել իր նը-
պատակին այն ժամանակ, երբ նրա մէջ զետեղուած
նիւթը հետաքրքրական է իր բովանդակութեամբ, գրուած
է կանոնաւոր, սահուն լեզուով և մատչելի է մանկական
հասակի ըմբռնողութեան համար։ Կազմելով մեր ձեռնարկն
այս ուղղութեամբ, մենք խոյս ենք տուել ձգձգուած,
տաղակալի հատուածներից և ընտրել ենք մեր ինքնարոյն
ու թարգմանական գրուածքներից միայն այնպիսի արձակ
ու ոտանաւոր կտորներ, որոնք ուսանելի լինելով հանդերձ
դիւրամարս են աշակերտների համար։

Այս դասագիրքը բաժանուած է երկու մասի։ Առաջին
մասը պարունակում է իր մէջ դիւրըմբռնելի ոտանաւոր-
ներ, առակներ և փոքրիկ պատմուածքներ մեկնողական
ընթերցանութեան և բանաւոր վարժութիւնների համար։
Երկրորդ մասը բաղկացած է աւելի բարդ բանաստեղծու-
թիւններից և պատմուածքներից, նաև պատմական-նկա-
րագրական հատուածներից, որոնք ծանօթացնում են մեր
երկրի ու ժողովրդի ներկայի և մասամբ անցեալի հետ։
Այս վերջին կտորները զետեղուած են, իբրև նիւթ աշա-
կերտների յատուկ ընթերցանութեան համար, անշուշտ,
ուսուցչի ղեկավարութեամբ և օգնութեամբ։

Չեռնարկիս յարմարութեան համար, մանկավարժական
նկատումներով, հարկ համարեցինք մի քանի փոփոխու-
թիւններ և կրծատումներ անել թէ արձակ հատուածների,
թէ ոտանաւորների մէջ։

Լոյս ընծայելով «Հատիկները», կըցանկանայինք, «ը նա
լինէր ոչ միայն դպրոցական ձեռնարկ, այլ և ընթերցա-
նութեան սիրելի գիրք հայ մանուկների համար։ Գուցէ,
այս մեր հրատարակութիւնն օգտակար լինի և այն չափա-
հասներին, որոնք սկսում են ծանօթանալ հայոց լեզուին։

ՅԱՆԱՐԱԿԱՐ

-ով զի լրացած է բաղադ զարդի վահայս Ս
նաւրձամքը Չի այս զի վահական մշտ մթնառուք
նուոք պատճետիւրմանը զի է մաքսացառութ զի էր
աստիճանն է մածանի և խորժ մուռու զատաւնութ է
մթաւնձն զի իսկ սերութ գրւառ անձերուսոցից վահայս
հաւրձին լաւու զի ուրու գրձն պահանջուր ու ոչ
արզանակի զի զի լրացը է պահանջուրու զատաւնութ
մակար գրական մասն թիգմացառուք մաքսաներուն և
Եզրին իսկ մասն զի վահա զի մասնութ ու աստիճանը ու

յանու գրմադիմուն մէ սպականուք
անառ մասն որդէ է նաւասանայ զարդրանուք ու Ս
ու սուստ պատճետոյ զի Չի զի է նավասանայ յանու
մաքսանձն զի մասնութանու թիգմութ և զի մասնութ զի
շունչ ձգմանին ու եղան գրւառ և անձերուսոցից
աներձաւնայ բաց մինչ է նավաթրայ յանու բացուց
անձ-մաքսանայ մաս թիգմացառութանու և թիգմութ ու ի
զի մէ նավաթրայ յանու թիգմացառութ մաքսանը
ու մէ յանու յանու և մատիսն գրական ու մաքսանը
ու այս մասն մէ նաւրձամք թիգմութ մէջդի ու մէ
ու ու յանու յանու անձի ամասնադիմութ չ ու ու յանու գրմադի

յանու ամասնադիմութ և յանու մաքսանուք մէ յանու անձ
ամասնի յանու ամասնութ մասն չ ու ու յանու
մատիսն յանու և մատիսն յանու մատիսն յանու անձնութ
մատիսն յանու անձնութ մատիսն յանու անձնութ մէ յանու անձ
անձնութ մատիսն յանու անձնութ մէ յանու անձնութ մէ յանու անձ

ՀՅՈՒՅՑԻ ԽՈՎԱՅ

Ճանաչու իր նայա կներք վարիքի թուա մեացիր քայ
յիսոյ կրո չաչոք մամանայի եթու տառու նայա որ
պատճետու ու ու ու թագի պատճետու մատիսն յարամի
ըստու ու ու

Տարածու ենու որ ամասնութ մատիսն յարամի ան

Ա.Պ.Ա.Զ.Ր. Մ.Ա.Մ.

(ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ)

ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ

ԵԲԱ իշտ ամասնութ
ԱԱԱԱԱԱ բայուն
ԱԱԱԱԱԱ առ առան
ԱԱԱԱԱԱ ԵՐ ԵՐ ԵՐ
ԱԱԱԱԱԱ ամասնութ

1.

ՃՆՃՂՈՒԿԻ ԽՐԱՏԼ

ՃՆՃՂՈՒԿԻ իր ձագուկներին փափլիկ բնում մեծացնելուց
յետոյ, եթե թռչելու ժամանակն եկաւ, տարաւ նրանց մի
տափարակ տեղ, որ թռչել սովորեցնի: Հետն էլ այսպիսի
խրատ տւաւ.

— Զաւակներ, հենց որ տեսաք՝ մարդիկ կռանում են,
որ գետնից քար առնեն, իմացէք, որ ձեզ համար է: Իս-
կոյն թռէք, որ ազատուէք թշնամու ձեռից:
Այդ լսելով, ձագուկներից մէկը ճարպիկութեամբ վրայ
բերեց.

— Մայրիկ, բայց եթէ քարը առաջուց ծոցում պահուած
լինի, այն ժամանակ ի՞նչ անենք:

Մայրը զարմացաւ ու պատասխանեց.

— Ել խօսք չունեմ ասելու, որդիս: Դու խրատը բնումդ
ես առել: Գնա, ի՞նչպէս ուզում ես, այնպէս էլ ապրիր:
Եւ մայրը ազատ թողեց իր ձագուկներին:

Ժողովրդական

2.

ՏԱԿԱՐԱԾԻ ՃԱՇԼ

Մէկ խամ տաւարած,
Բաւական քաղցած,
Աղբրի մօտ նստած,
Ուտում էր չոր հաց:
— Ցամաք մի՛ ուտիր,

Ասաց ընկերը.
 —Բա ի՞նչով ուտեմ,
 Ուրիշ բան չունեմ:
 —Դանակով, եղբայր, դանակով...
 —Այդ լաւ ասացիր.
 Դանակով կտրեմ,
 Զըրումը թրջեմ,
 Ել ցամաք չուտեմ...

Դ. Աղայեան

3.

Կ Ո Ր Ի Զ

(Հ. Տօղամոյից)

Մայրը սալոր էր առել, որ ճաշից յետոյ բաժանի երեխաներին: Սալորները գարսած էին ամանի մէջ: Օնիկը երէք սալորի համը չէր առած: Սալորները նրան շատ էին դուր գալիս և շատ էր ուզում մի համը տեսնի: Նա շարունակ պտուտ-պտուտ էր գալիս ամանի չորս կողմը ու հոտ-հոտ էր անում: Երբ սենեակում մարդ չկար, սիրտը չհամբերեց, մի հատ սալոր թոցրեց ու կերաւ:

Դեռ ճաշի չնստած՝ մայր հաշուեց սալորներն ու տեսաւ, որ մէկը պակաս է: Նա յայտնեց հօրը:

Երբ ճաշի նստեցին, հայրը հարցրեց.

—Երեխայք, ձեզանից հօ սալորն ուտաղ չի եղել: Մէկը պակաս է:

Ամենքն էլ ասացին՝ «Ո՛չ»:

Օնիկը կաս-կարմիր կտրեց ու նոյնպէս ասաց՝ «Ո՛չ, ես չեմ կերել»:

Այն ժամանակ հայրն ասաց.

—Որ մէկն ու մէկը ձեզանից կերել է՝ լաւ բան չի արել: Բայց ցաւն այդ չի: Ցաւն այն է, որ սալորը կորիզ ունի և ովտելու ձեւ չի իմանում ու կորիզը կուլ

է տալիս, մի օրից յետոյ մեռնում է: Ես այդ բանիցն եմ վախենում:

Օնիկի գոյնը թռաւ ու ասաց՝ «Ո՛չ, ես կորիզը դէն գցեցի»:

Ամենքն էլ կուշտ-կուշտ ծիծաղեցին, իսկ Օնիկը լաց կղաւ:

Ա. Ծատուրեան

4.

ԱՅԼՈՐՆ ՈՒ ՄԱՐԳԱՐԻՏ

Օրուան մէկը մի աքոր

Քջուջ-մջուջ անելիս՝

Տեսաւ մի հատ մարգարիտ

Աղբի միջին փայլելիս:

Կացեց, ասաւ. «Ես ի՞նչ է:

Ի՞նձ հարցնես, ոչինչ է:

Այ վայր տամ էն մարդին,

Որ գին կլտայ էս զատին.

Իսկ ի՞նձ համար մի գարին

Արժէր էսպէս հազարին»...

Ա. Խնկոյեան

5.

ԲԱՐԵԿԱՄՆԵՐՆ ՈՒ ԱՐՁԸ

Երկու բարեկամ գնացին անտառ՝ որս անելու: Յան-կարծ անտառից մի արջ դուրս պլծաւ ու կատաղութեամբ նրանց վրայ վազեց: Նրանցից մէկը, տեսնելով արջին՝ շտապով ծառը բարձրացաւ, իսկ միւսը, յիշելով, որ արջը մեռեներին չի դիպչում, գետին փռուեց, շունչը իրան քաշեց ու անշարժ մնաց, որ արջը կարծի, թէ նա մեռած է: Արջը մըթմըթալով մօտեցաւ նրան, ականջը կամացուկ

դէմ արեց բերնին, դէս-դէն հոտոտեց և, մեռած կարծելով հեռացաւ:

Վտանգն անցաւ: Ծառի վրայ նստած ընկերը վայր իշաւ ու հարցրեց. «Բարեկամ, արջն ինչ ասաց ականջիղ»:

Ընկերը պատասխանեց. «Արջը խրատ տուաւ, որքեզ պէս մարդու հետ էլ տեղ չգնամ, որ մի փորձանք պատահելիս՝ չթողնես ինձ մենակ ու ինքդ փախչես»:

Ճշմարիտ բարեկամը նեղութեան ժամանակն է իմացւում:

Խ. Արովեան

6.

ՍԵՐՄՆԱՑԱՆԻ ԵՐԳԸ

Ահա ծագեց կարմիր արև,
Տաք ու պայծառ է օքը.
Դէ, քաշեցէք, սիրան եղներ,
Յառաջ տարէք արօրը:
Վարը վարենք, ակօս փորենք,
Խոր ակօսներ հողի մէջ.
Սերմը ցանենք, որ հունձ հընձենք,
Յորեն դիղենք կալի մէջ:

Ռաֆֆի

7.

Ե Ր Կ Ո Ւ Խ Ո Փ

Երկաթավաճառը երկու հատ խոփ ունէր, երկուսն էլ մի մեծութեան և մի վարպետի ձեռքով շինած:

Մի երկրագործ սրանցից մինը գնեց ու տարաւ գործածելու, իսկ միւսը երկար ժամանակ մնաց խանութում ընկած:

Մի քանի ժամանակից յետոյ երկու ընկեր խոփերը պատահեցին իրար:

Գործածուած խոփն արծաթի պէս պլազլում էր և աւելի էր գեղեցկացել, քան թէ նոր շինած ժամանակն էր, իսկ խանութում անգործ մնացածը՝ ժանգոտել ու սեացել էր:

—Այդ ինչիցն է, որ դու այդքան գեղեցկացել ես, —հարցրեց սեացած խոփն ընկերին:

—Աշխատելուցն է, բարեկամ: Աշխատանքն է, որ ինձ գեղեցկացը է, —պատասխանեց ընկերը:

—Այս, ինչքան բախտաւոր ես, որ երկրագործի ձեռքն ընկար: Իսկ ես այստեղ մնացել եմ բանտարկուած և, ինչպէս տեսնում ես, անգործութիւնից ժանգոտել ու սեացել եմ:

8.

ԵՐԿՈՒ ԳԻՒՂԱՑԻ ԸՆԿԵՐՆԵՐ

Երկու գիւղացի ընկերներ —Թագէսսն ու Մարկոսը — միասին ձանապարհ ընկան մի օտար քաղաք՝ փող վաստակելու: Քաղաքը իրանց գիւղից շատ էր հեռու, բայց ձանապարհը կարճ էր երեսում, որովհետեւ նրանք գնում հանում էին և, կարծես, յոգնածութիւն չէին զգում:

—Ի՞նչ լաւ բան է մի սիրտ, մի հոգի լինել, —ասաց մէկը միւսին, —առաւօափց մինչև այժմ ձանապարհ ենք գնում, բայց, ասես, տանից նոր ենք դուրս եկել:

Կարճ ժամանակից յետոյ նրանք համնում են մի անձանոթ գիւղ և իջևանում են գիւղապետի տանը: Գիւղապետը սիրով ընդունում է նրանց և ուզում է իմանալ, թէ իր հիւրերն ինչ մարդիկ են: Նա գաղտնի հարցնում թագէսսին. «Ընկերդ ով է, լաւ մարդ է»:

—Մի հարցնիլ, ասում է թագէսսը, —էշի մէկն է: Գիւղապետը, զարմանալով թագէսսի պատասխանի վըրայ՝ հարցնում է Մարկոսին. «Ո՞վ է բարեկամդ»:

ԷՇՆ ԱՌԻՒԾԻ ՄՈՐԹՈՎ

Էշն ձանձրացել էր աշխատելուց: Նա մի օր թողեց իր ախրոջն ու փախաւ: Ճանապարհին գտաւ առիւծի մորթի:
«Օ՛, սա ինձ պէտք կըդայ», ասաց էշն: Փաթաթուեց առիւծի մորթու մէջ ու սկսեց ման գալ անտառում, հէնց իմանաս՝ առիւծ լինէր: Եւ, իսկ որ, բոլոր գազանները նըրան առիւծի տեղ էին ընդունում և ան ու դողով փախաւ էին նրանից: Գոռոգացաւ էշն: «Արի առիւծի նման չում էին նրանից», — մտածեց նա, — բոլորը լեղապատառ կը փախչեն, այն ժամանակ ես անտառի միակ տէրը կը լինեմ ու ինձ համար կ'ապրեմ ազատ», — և սկսեց էշն պէս զըռալ: Հէնց որ գազանները լսեցին այդ զըռոցը, իսկոյն հասկացան բանի զօրութիւնը և սկսեցին իրանց ոխը հանել էշն: Տէրն էլ էր լսել էշն գոռոցը. նա շտապեց անտառ՝ մի մեծ մահակ ձեռին, և ծեծ ու դմբոցով տուն բերաւ ականջեղ անտառնին:

Եղողոս

9.

ՄՈՒԿՆ ՈՒ ԿԱՏՈՒՆ

«Բնկել եմ ճանկըդ, դէհ ուտում ես՝ կէր,
 էլ ի՞նչ ես խառնում իմ գառը ցաւեր. Գիտեմ, որ իմ վերջն ճանել է այսօր,
 և եղձ ձագս էլ ընում անտէր է, անզօր» —
 Ասաց մի խեղճ մուկ անիրաւ կատուին,
 Որ ճանկել նըրան՝ դըրել էր տակին:
 — Հօ ուտելուն չեմ մենակ կարօտած, —
 Պատասխան տուեց կատուն բարկացած.
 Անմշշ ծըւոցիդ ականջ դընելիս,
 Ու թուլանալըդ աչքով տեսնելիս,
 Սիրարս այնպէս է ցընծում, հովանում,
 Որ ասես, թէ նոր կեանք եմ ստանում:

Խ. Արովեան

Ճ Ա Ն Ճ

Խոնարհ ու հեղ
 մի յոզնած եղ
 արօրն ուսին,
 ճանճը պոզին,
 մի իրիկուն,
 գալիս էր տուն:
 Մին էլ ճամփին
 մի ուրիշ ճանճ
 էն նստածին

ասաւ. «Տօ մանչ,
 էս եղան հետ
 որտեղից էտ»:
 Սա ցից արտւ
 քիթը, ասաւ.
 — Մենք որտեղից.
 վարում էինք,
 վարատեղից:

ԱԹ. Խնկոյեան

ՊԱՊՆ ՈՒ ԹՈՌԵՒԻԿԵՐ

Պապը սաստիկ ծերացել էր: Նրա աչքերը լաւ չէին տեսնում, ականջները ծանրացել էին, ձեռներն ու ոտները ծերութիւնից դողդողում էին և գդալը բերան տանեմ՝ կերակուրը կաթկըթացնում էր:

Դուք չէր գալիս այս բան նրա որդուն ու հարսին: Նը բանք ծերին իրանց հետ սեղան չէին նստեցնում, այլ վառարանի ետևը, մի անկիւնում, կաւէ ամանով էին կերակուր տալիս ուտելու: Խեղճ ծերուկի աչքերը լցւում էին արտասուքով: Նա տխուր ու տրտում նայում էր այն կողմը, ուր փոած էր լինում հացի սեղանը:

Մի անգամ, հաց ուտելիս՝ ծերի ձեռները դողդողացին, ամանը վայր ընկաւ ու կոտրուեց: Է՛լ աւելի բարկացան հարսն ու որդին: Նրանք գնեցին մի փայտէ աման և այնուհետեւ այդ ամանով էին կերակուր տալիս իրանց հօրը:

Ծերուկը մի չորս տարեկան թոռնիկ ունէր: Մի անգամ մանկիկը, յատակի վրայ նստած՝ փայտից մի բան էր տաշում:

—Ի՞նչ ես անում, որդի, —հարցրեց նրան մայրը:

—Փոքրիկ աման եմ շինում, որ, երբ հայրիկս ու մայրիկս ծերանան, այդ ամանով կերակուր տամ նրանց, —պատասխանեց երեխան:

Հայրն ու մայրը իրար երես նայեցին ու ամօթից կարմրեցին: Այդ օրուանից նրանք սկսեցին ծերին իրանց հետ սեղան նստեցնել. էլ երեք հետը կոպիտ չէին վարւում ու միշտ պատուով էին պահում նրան:

ՊՈՉԱՏ ԱՂՈՒՔԵՐ

Փախաւ աղուէսը, արս ողիսացագ վԱ
փախաւ թակարդից,
բայց պոչի կէսը
թողեց նա ներսը:
Էտովէս պոչատ,
պոչից անջատ,
գնաց, ասաւ ընկերներին.

—Այ ձեզ մատաղ, ես ձեր գերին,
գէն գցեցէք ձեր պոչերը,
ի՞նչու են պէտք էտ փչերը.
Գրանք զարդ չեն ու զարդարանք,
այլ մեր զլսին պատիժ, փորձանք,
գետնի աւել,
վաղքի խափան
մեզ անվայել
աւելորդ բան:

Եգտեղ մի ծեր վարպետ աղուէս
ասաւ նրան՝ «Ապրես, ապրես,
այ ծակամուտ թոռիս թոռը,
էտքան չեն տայ խելքին զոռը.
Բա քանի որ տեղն էր պոչըդ,
ի՞նչու չարիր դու էտ կոչըդ»:

ԱԹ. Խնկոյեան

ԶԻՆ ՈՒ ԵԶԸ

Մի քաջասիրտ տղայ կրակոտ ձի էր նստել ու չափ էր
գցում:

Ամեհի եզն ասաց ձիուն.

—Ամօթ քեզ: Ես իսկի թոյլ կըտամ, որ մի պղալիկ
տղայ վըաս նստի ու ինձ կառավարի:
Զին պատասխանեց.

—Իսկ ես թոյլ եմ տալիս: Ի՞նչ մի մեծ պարծանք կը-
մինի ինձ համար, եթէ առնեմ ու գետին զարկեմ նրան:

Լեսսինդ

ՄԱՅՐՆ ՈՒ ԵՐԵԽԱՆ

(Ուշանդից)

«Գիտես, որդիս, եղբայր ունես
Դու երկնքում: Խոնարհ ու հեղ՝
Զէր չարացնում երբէք նա ինձ.
Աստծոյ հրեշտակն իջաւ երկնից
Ու հեղ եղբօրդ իր ծոցն առաւ,
Երկինք տարաւ...»
—Օ՛, մայրիկ ջան, վայ թէ մէկէն
Ինձ էլ առնեն, քեզնից ջոկեն...
Ա՛խ, ասա ինձ, ի՞նչպէս անեմ,
Քեզ չարացնեմ, սիրալդ հանեմ,
Որ այն հրեշտակն ինձ էլ, նանի,
Զառնի, տանի...

Ալ. Ծառուրեան

ԹՐԻԹԱԿՆ ՈՒ ՍՈՒԱԿՆ

Մի թութակ տան մէջ այնքան ճղաց ու շըւշըւաց, որ
տանուտէրը նրան գուլը հանեց տանից:

Թութակը խիստ նեղացաւ այդ քանից և սկսեց գանդա-
տուել սոխակին, որ եկել էր նրան տեսնելու:

—Աչքի լոյս, —ասաց թութակը սոխակին, —ես լսել եմ,
որ գու վարպետ երգ առող ես. խնդրեմ, լսես իմ երգերը
և ասես, թէ ինչ պակասութիւն ունեմ, որ իմ տիրոջը
դուր չեմ գալիս: Նա շատ սիրով լսում է արտուտին ու
ծիծեռնակին, որոնց երգածը մկան ծըւծըւոցի է նման,
բայց հէնց որ ես եմ երգում և իմ բոլոր ճարտարութիւնը
ցոյց տալիս իսկոյն հրամայում է, որ ինձ հեռացնեն:

—Շատ լաւ—ասաց սոխակը—երգիր, տեսնեմ ի՞նչպէս
ես երգում: Ես ուրախութեամբ կը լսեմ քեզ պէս սիրուն
թոշնի երգը:

Թութակն սկսեց իր բոլոր ճարտարութիւնը թափել.
հաւի պէս կըկըչաց, շան պէս հաջեց, կատուի պէս մլա-
ւեց, մի խօսքով՝ կրկնեց իր բերան արած բոլոր բառերն
ու երգերը:

—Այժմ, սիրելիս, —ասաց նա սոխակին, —ի՞նդրեմ ա-
սես, այսպիսի բան գու քո օրում իսկի լսած կաս:

—Սիրուն թութակ, —պատասխանեց սոխակը, —գու ինձ
կը ներես, եթէ ես քեզ մի համեստ նկատողութիւն անեմ:
Դու երգում ես ուրիշների նման, ուրիշների ձայնով. ու-
րիշների երգերն ես երգում: Եթէ ունենաս քո սեփական
երգը՝ էլ քեզ տանից դուրս չեն անի:



ԹՐՉՆԻԿՆԵՐ

իզնւր, իզնւր, այ թոշնիկներ,
ինձ որ տեսաք, լըռեցիք...
թող ձեր ազատ դայլայլիկներ
Լըցնեն դաշտերն ու այգիք...
Մի վախենաք դուք փորձանքից—
Զեզ որոգայթ չեմ լարում.
Ես լաւ գիտեմ—ազատ կեանքից
և բան չըկայ աշխարհում...

Ալ. Ծատուրեան

18.

ԿԱՄԱԿՈՐ ՍԱՅԼԱՊԱՆՆԵՐ

(Լ. Տօլստոյից)

Երկու սայլապան ճամբի նեղ տեղումը դէմ առ դէմ
եկան: Նրանցից մէկը գնում էր քաղաք, իսկ միւսը՝ տուն:
Մէկը բղաւում է.

—Ճանապարհ տներ, ես շտապում եմ, քաղաք պիտի
գնամ շուտով:

Իսկ միւսը գոռում է.

—Ես աւելի եմ շտապում, պէտք է շուտով տուն գնամ:

Այսպէս յամառուել էին երկուն էլ և երկար ժամանակ
բղաւում էին:

Բարեբախտաբար, մի երրորդ գիւղացի հանդիպեց դը-
րանց և ասեց.

—Էմ կարծիքով ով ուզում է աւելի շուտով տեղ հաս-
տի, նա աւելի շուտ պէտք է ճանապարհ տայ միւսին:

Այս որ լսեցին կամակոր սայլապանները, երկուն էլ

կոտրուեցին և ամեն մէկը նրանցից շտապեց շուտով ճամ-
բայ տալ միւսին:

Դ. Աղալեան

19.

ԳԻՏՈՒՆ ՈՐԴԻՆ

(Լ. Տօլստոյից)

Որդին քաղաքից գիւղ եկաւ հօրը տեսութեան:
Հայրն ասաց.

—Որդիս, խոտահարքի ժամանակ է, առ փոցիը, գլ-
նանք, օգնիր ինձ:

Որդին աշխատել չէր ուզում ու ասաց հօրը.

—Ես քաղաքումն եմ ուզում տեղ ու ուսմկական բոլոր
խօսքերը մոռացել եմ: Փոցիս ո՞րն է:

Այս ասաց-չասաց՝ յանկարծ ոտքը կոխեց բագում ըն-
կած փոցիի վրայ ու փոցիը վեր նետուելով կպաւ ճակա-
տին: Նա իսկոյն յիշեց, թէ ինչ բան է փոցիը, ձեռքը
տարաւ ցաւած ճակատին ու բացականչեց:

—Այս ո՞ր յիմարն է փոցիը գցել այստեղ:

Ալ. Ծատուրեան

20.

ԱՐՁՆ ՈՒ ԳԱՅԼԻ

Քայլը մի գառը յափշտակած տանում էր ուրախ ու-
րախ, որ մի ապահով տեղ նախաճաշիկ անի:

Որտեղից որ էր, հանդիպեց նրան արջը և ճանկերիցը
խլեց գառը:

Գայլը մի կողմ քաշուեց և արջից բաւական հեռու կան-

գնելով՝ սկսեց աղիողորմ օռնալ՝ զունչը դէպի երկինք ցըցած:

— Այդ ինչ ես աղաղակում, մէկ թարգմանիր ինձ, — ասեց արջը, որպինետեղ գայլն արջերէն գիտէր, իսկ արջը չըգիտէր գայլերէն:

Գայլը պատասխանեց.

— Ես դէպի երկինք եմ աղաղակում ու ասում, որ ուժեղները թոյլերից ոչ վախում են և ոչ ամաշում, այս ինչ օրէնք է:

— Ի՞նչու այդ մասին դժգոհ չէիր՝ գառը յափշտակելիս, — պատասխանեց արջը, ու գլանով արդարացրեց իրան:

Դ., Աղայնան

21.

ՊԱՐՏԻԶՊԱՆԻ ԿՏԱԿԸ

Մի ծերունի պարտիզպան շատ անդամ ասում էր որպոցը, որ ջանասէր լինեն, բայց որդիքը ծոյլ էին և ականչ չէին զնում: Երբ ծերունին զգաց, որ մահը մօտ է կանչեց որդոցն ու ասեց.

— Եիրելի՛ զաւակներս, իմ ունեցած-չունեցածս այս առունն ու պարտէզն է. ուրիշ բան չունեմ, որ ձեզ թողնեմ: Բայց պարտիզումս իմ պապից ու հօրիցս մնացած գանձ կայ թաղած, եթէ լաւ փորէք, փորփրէք, անշուշտ կրգանէք:

Ծերունու մահից յետոյ որդիքն սկսեցին փորփրել պարտէզը: Փորեցին, փորփրեցին, ոչինչ չըգտան, բայց հետեւալ տարբին ծառերն այնքան պտուղ տուին, այնպէս առատ, որ երբէք տուած չէին: Այդ ժամանակ միայն հասկացան տղերքը, թէ ինչ գանձ էր իրանց պապերի թողածը: Այնունետեղ սիրեցին աշխատութիւնը և աշխատասիրութեամբ ապահով ապրելու հնարք գտան:

20

22.
ԱՄՐՍՆ ԱՆՁՐԵՒ
(Մակովից)
«Ոսկե է, սոսկ թափւում երկնքից».
երեխայքն ընկած անձրես ետքից,
ձըշում են, վազում,
բլոնել են ուզում...
— Կացէք, փոքրիկներ,
Այդ անձրես մենք
Ո՞ղջ կը ժողովենք,
իբրև հատիկներ,
Ոսկե հատիկներ—լի ամբարներում,
Ուր հացն է այնպէս անուշակ բարում:

Ար. Ծատուրեան

23.

Գ Ա Ր Ո Ւ Ւ

Գարուն է: Բնութիւնը վազուց արդէն զարթել է իր ձմեռնային քնից: Արարատեան նահանգում ամեն ինչ կենդանացել է, կենք առել, ամեն ինչ ծառ ու տունկ է. կանաչները գուրս եկած՝ ցնծին են տալիս այգիների ափերումը. ունոր գուրս եկած՝ ցնծին են տալիս այգիների ափերումը. ունի ծառերը՝ բաց արած իրանց լեզուիկ տերևները, գարնան մեղմ քամուց խշխալով՝ իրար են զիպչում, հէնց իմանաս, թէ իրար բարեւում են. պտղատու ծառերն իրանց կարգին՝ կոկոնել է, կարծես, շարած մարդարիտ լինի, որն էլ ծաղնը կոկոնել է, կարծես, շարած մարդարիտ լինի, որն էլ ծաղն կել է եօթանասուն տարեկան ալեորի նման. մանուշակն կել է յասմիկը իրանց անուշ՝ հոտերով քաղցր քուն են բեռ յասմիկը իրանց անուշ՝ հոտերով քաղցր քուն են բեռ յասմիկը իրանց պրօնողին. մանուշակը, պատիկ հարսիրում այգու մէջ զբոնողին. մանուշակը, պատիկ հարսիրում այգու մէջ զբոնողին. մանուշակը, պատիկ հարսիրում այգու մէջ զբոնողին. մանուշակը, պատիկ հարսիրում այգու մէջ զբոնողին.

21

մարուի. իսկ յասմիկը իր թփի վրայից ճիթ-ճիթ կախ ընկած՝ լցրել է աշխարհքը հոռաւէտ բուրմունքով. վարդն էլ հագել է կանաչ ատլաս շորեր և իր ոսկէ կոճակի նըման կոկոններովն իմաց է տալիս, թէ «ես ուղարկել եմ ինձանից առաջ իմ քոյրը մանուշակին, որ ձեզ ուրախացնի, մինչև որ ես էլ կը գամ իմ մէկէլ ընկեր ծաղիկների հետ»: Այսպէս ամեն բան մեծ ուրախութիւն էր բերում մարդուն կարմիր կիրակի օրուան առաջին շարաթօրը: Սարեկներն էլ՝ ծառի ճղերին կանգնած, կարմիր արեգակի դիմացը, հազար ու մի տեսակ ճլվացնում էին ու իրանք ածում, իրանք պարում:

Պ. Պողեան

24.

ԴԱՇՏԻ ՎԱՐԴԻ

(Գեօթէից)

Փոքրիկ տղան մի վարդ տեսաւ,
Սիրուն վարդը դաշտի միջին.
Ուրախ ուրախ շուտ մօտեցաւ,
Որ լաւ նայի սիրուն վարդին:
Այս իմ վարդին, կարմիր վարդին,
Կարմիր վարդը դաշտի միջին:

Մանուկն ասաց. Քեզ կը քաղեմ,
Այս իմ վարդիկ դաշտի միջին:
Վարդիկն ասաց. Փշեր ունեմ,
Դու ձեռ մի տալ կարմիր վարդին:
Այս իմ վարդին, կարմիր վարդին,
Կարմիր վարդը դաշտի միջին:

Չար երեխան վարդը քաղեց,
Սիրուն վարդը դաշտի միջին:

Վարդը նրան խիստ ծակծկեց,
Բայց և գերի մընաց ձեռին:
Այս իմ վարդին, կարմիր վարդին,
Կարմիր վարդը դաշտի միջին:

Յ. Յովհաննիսեան

25.

ԵՂԻԱՅԻ ՀԱՆԱՔԻ

Մէկ օր Եղիան վերեկց կանչեց
Եւ մարդկանց յայտնեց,
Թէ այսուհետեւ ձեզ չեմ օգնելու,
Անձրև չեմ տալու:

Այս ասաց թէ չէ երկինքը կապուեց,
Էլ ոչ մի կաթիլ անձրև չը կաթեց:
Եւ այսուհետեւ աղբիւրը լըռեց,
Առուն ցամաքեց, վարդը թառամեց,
Դաշտը սկացաւ, արտը չորացաւ,
Բանական, անբան, թռչուն ու գազան
Անջուր մընալով, ուշաթափ եղան:
Եղիան որ տեսաւ, թէ ինչ բան եղաւ,
Ծիծաղը եկաւ և ծիծաղեցաւ:
Բայց լնչպէս ծիծաղ... այնպէս որոտաց,
Որ երկինք, գետինք թընդաց, գըղոդաց.
Մութ ամպերն իրար այնպէս զարկուեցին,
Որ փայլակ, կայծակ, շանթեր հանեցին:
Երկինքը մըթնեց, յորդ անձրև թափեց,
Ուշպնացներին թըրջեց, ողողեց
Եւ ուշքի բերեց:

Ու այսուհետեւ սար ու ձոր զարթնեց,
Աղբիւրն քըլքըլաց, շուշանը ծաղկեց,
Առուն քըլքըլաց, արտը կանաչեց,
Արտուտը երգեց, արլարը կանչեց,

23

Հաւը ձու ածեց, մաքին գառ ձնեց.
Գառը մորթեցինք Եղիայի համար,
Որ մեզ խնայի
Ել հանաք չանի:

Ղ. Սղայեան

26.

ԳԻՒՂԱՑԻՆ ՈՒ ԶԻՆ

Կոռւի տարի էր. մարդիկ փախչում էին թշնամիներից:
Գիւղացու ձին արածում էր դաշտումը. տէրը մօտեցաւ
ձիուն ու ասեց.

—Շուտ արա, հետս եկ, թէ չէ թշնամիները կըդան ու
քեզ կըտանեն:

—Ինձ ի՞նչ կանեն, որ տանեն,—հարցրեց ձին:

—Քեզ կըբանացնեն, —պատախանեց տէրը, —և, եթէ
չլուս, կըծեծեն:

—Միթէ գու նոյնը չես անում, թէկ քեզ հաւատա-
րիմ եմ ծառայում: Միկնոյն չէ ինձ համար, թէ ով պի-
տի լինի իմ տէրը, —գու թէ մի ուրիշը: Ուրեմն էլ ինչու-
պիտի փախենամ ես թշնամուց:

Ղ. Սղայեան

27.

Ք Ա. Ի

(Ղ. Տօլսոյից)

Աղքատի մէկը մօտեցաւ հարստին և ողորմութիւն
խնդրեց: Հարուսաը ոչինչ չտուեց ու ասաց.

—Գնամ, կորիք:

Աղքատը տեղից չշարժուեց:

Հարուսաը զայրացաւ, գետնից մի քար վերցրեց ու աղ-

քատի վրայ նետեց: Աղքատը քարն առաւ, դրեց ծոցը ու
ասաց.

—Այս քարը ծոցումս կըպահեմ, մինչև որ գայ ժամա-
նակ, երբ ես էլ կարողանամ քարը հարստի վրայ նետել:
Եւ այդ ժամանակն եկաւ:

Հարուսաը մի վատ բան արաւ: Ունեմ-չունեմը ձեռքից
առան ու բանտ տարան: Երբ նրան բանտն էին տանում,
աղքատը մօտեցաւ, քարը ծոցից հանեց ու ուզում էր հա-
րստի վրայ նետել: Բայց մէկէլ մտածմունքի մէջ ըն-
կաւ, քարը դէն գցեց ու ասաց.

—Զնւր էի ես այսքան ժամանակ քարը ծոցումս պա-
հում: Երբ նա հարուստ էր ու զօրեղ, ես փախենում էի
նրանից: Իսկ այժմ նա մեղքս է գալիս:

Ալ. Ծատուրեան

28.

ԱԳՐԱԿԵՍԸ

Բախտի բերմամբ
թէ պատահմամբ
մի մեծ ագուաւ
մի գունդ պանիք
դաշտում գլտաւ,
կըտուցն առաւ,
ծառին թառաւ:
Օ՛, ինչ պանիք, դեղին ոսկի...
Բայց դեռ չառած համը իսկի,
աղուէնն անցաւ
ծառի մօտով,
գերուեց
էրուեց
պանիք հոսով:
Վազեց գնաց բերնի ջուրը

և թուլացաւ կուռն ու ճուռը: բայի ժամաց
էն ժամանակ, իրա ձեին,
ծառի տակից, աչքն ազուալին,
հեղիկ-նազիկ, անհարազ է ու զար ժամ
փափկամազիկ, ամեն պատճեն իւր է
բացեց լեզուն
անուշ-մեղուշ,
թափեց-չափեց
շաքար ու նուշ.

—ի՞նչքան լաւն ես,
ես քո գերին,
քո էտ սկիկ,
վառ աչերին,
նուրբ ծալքերով
զոյգ թևերին:
Մի դու մըտիկ,
էտպէս քըթիկ,
էտպէս ճըտիկ,
մախմուր ագին,
խաս ու խումաշ
ատլասն հագին:
Գիտեմ, անշուշտ իմ քուրիկի
ձայնն էլ կըմ հըրեշտակի:
երգի, քուրիկ, մի ամաչի,
իմ ուղածը մի մեծ բան չի:
Թէ որ չըքնաղ էտ տեսքիդ նետ
երգելում էլ եղար վարպետ,
օ, կը դառնաս, իմ սըրբուհի,
թըռչունների մայր թագուհի:

Ազուաւ ազին
իրա մասին
գովեստներից

շըշմած, ուռած,
ազուաւային
բըկովը մին
որ չը կըռոաց,
պանիրն ընկաւ կտցիցը ցած.
շողոքորթը ոըխեց, գընաց:

ԱՅ. Խնկոյեան

29.

ՍՈՂՈՄՈՆԻ ԴԱՏԱՍՏԱՆԸ

Հրէաների Սողոմոն թագաւորը շատ համարեղ մարդ էր:
Նրա իմաստութիւնն աշխարհին յայտնի եղաւ նրա թա-
գաւորութեան հէնց առաջին օրերում:

Մի օր թագաւորի մօտ գանգատուելու են գալիս երկու
կին, նրանցից մէկն ասում է.

—Ճէր իմ, ես ու այս կինն ապրում ենք մի տան
մէջ: Աստուած ինձ մի որդի տուեց: Երեք օրից յետոյ
ստ էլ մի որդի ունեցաւ: Մեր տանը մեղնից զատ ոչ ոք
չի ապրում. մենք մենակ ենք: Պատահմամբ այս կինը զի-
շի ապրում. մենք մենակ ենք: Իրենք վրայ ու խեղճ ե-
շերը, քնի մէջ, ընկնում է իր երեխայի վրայ ու խեղճ ե-
շերէն խեղդում, մեռնում է: Կէս զիշերին ստ վեր է կե-
րեխան խեղդում, մեռնում է: Կէս զիշերին ստ վեր է կե-
րեխան նում ու, իմ քնած ժամանակը, երեխան զրկիցս առնելով
ու, իմ քնած ժամանակը իմ ծոցն է դնում: Առաւօտը զարթ-
իր խեղդուած որդին իմ ծոցն է դնում: Առաւօտը զարթ-
իր խեղդուած որդին իմ ծոցն է դնում: Կէս զիշերին ստ վեր է կե-
րեխան նում ու, իսկ զերեկն ուշիւշով նայելով տեսնում եմ,

որ իմ որդին չէ:

—Այդպէս չէ, ասում է միւս կինը, —կենդանի երեխան
իմն է, մեռածն է՝ քոնը:

—Ո՛չ, մեռածը քոնն է, կենդանի երեխան է իմը պատաս-
խանում է գանգատող կինը:

Թագաւորը տեսնելով որ վկայ չկայ, որից կարողանայ
ճշմարիտն իմանալ, առանց երկար մտածելու հրամայում

է սպասաւորներին. «Մի սուր բերէք այստեղ»։ Երբ սուրը
բերում են, Սողոմոնը պատուիրում է. «Կէս արէք այս
կենդանի երեխային. կէսը տուէք մէկին, կէսը՝ միւսին»։
Կանանցից մէկը բացականչում է. «Մի սպանէք»։ Իսկ
միւսն ասում է. «Թռղ սպանեն, ոչ իմը լինի, ոչ քոնը»։
Թագաւորն ասում է. «Մի սպանէք. երեխան տուէք
առաջին կնկան, որովհետեւ նա է հարազատ մայրը»։

Ա. Գիրը

30.

ԹԱԳԱՒՈՐՆ ՈՒ ԽՐՃԻԹԸ

(Լ. Տօւտովից)

Արևելեան մի թագաւոր հրամայեց, որ իր համար մի
շքեղ պալատ շինեն և տուշեն էլ պարտէզ տնկեն։ Շուտով
պալատն ու պարտէզը պատրաստ էին։ Միայն պարտիզի
հէնց մուտքի մօտ մի փոքրիկ խրճիթ կար, որի մէջ մի
խեղճ գիւղացի էր ապրում։ Թագաւորն ուղեց այդ խրճիթը
քանդել տայ, որ պարտիզի գեղեցկութիւնը չփչանայ։ Եւ
իր վէղիրին ուղարկեց գիւղացու մօտ, որ խրճիթը փողով
առնի։

Վէղիրն ասաց գիւղացուն։

Բախտաւոր մարդ ես։ Թագաւորն ուզում է քո խրժ-
ճիթն առնի։ Խրճիթդ իսկի տասը մանէթ չարժի, բայց թա-
գաւորը քեզ հարիւր մանէթ է տալիս։

Գիւղացին ասաց։

Ո՛չ, ես խրճիթս հարիւր մանէթով չեմ ծախի։
— Դէ, լաւ, — ասաց վէղիրը, — թագաւորը քեզ երկու
հարիւր կը տայ։

— Երկու հարիւր չէ, հազար էլ որ տայ՝ չեմ տայ, — ասաց
գիւղացին։ — Պատու հայրս այս խրճիթումն նա ապրել
ու մեռել, ինըն էլ այս խրճիթումն եմ ծերացել ու, Առ-
տծով, այս խրճիթումն էլ կը մեռնեմ։

Վէղիրը գնաց թագաւորին ու ասաց.
— Շատ կամակորն է այդ գիւղացին։ Ինչ էլ ասում ես՝
խրճիթն չի նստում։ Թագաւոր, իսկի կոպէկ էլ մի տուր-
իրամայիր, որ քանդեն։

— Ո՛չ, ես այդ չեմ ուզում։

— Հապա ինչ անենք, — ասաց վէղիրը։ — Միթէ կա-
րելի է թողնել, որ այդ փատած խրճիթը կանգնած մնայ-
պալատի առաջ։ Ամեն անցնող մտիկ տալով պալատին,
պալատի պալատը լաւ է, բայց խրճիթն է փշացնում։ Ու կը-
կասի՝ պալատը լաւ է, բայց խրճիթն է փշացնում։ Ու կը-
մտածի՝ երկի, թագաւորը փող չի ունեցել, որ խրճիթն
առնի։

Թագաւորն ասաց.

— Ո՛չ, պալատին նայողը կասի՝ թագաւորը, երկի, շատ
փող է ունեցել, որ այս տեսակ պալատ է շինել տուել, իսկ
խրճիթին նայելով, կը մտածի՝ երեւում է, այս թագաւորը
շատ էլ արդարասէր է եղել։ Թռղ, խրճիթը մնայ։

Ա. Ծատուրեան

31.

ԱԳԱՀՈՒԹԵԱՆ ՀԵՏԵԽԱՆՔԸ

Երեք ընկեր միասին ճանապարհորդելիո՞ւ գանձ գտան
ու բաժանեցին իրար մէջ։ Բայց որովհետեւ նրանց ճանա-
պարհի պաշարը պակասել էր, իրանցից փոքրիկին ուղար-
կեցին քաղաք, որ կերակուր բերի։ Նա գնաց ու ճանապար-
հին այսպէս էր մտածում ինքն իրան։ «Ես հիմայ հարուստ
եմ. բայց աւելի հարուստ կը լինեմ, թէ որ ընկերներիս բա-
ժինն էլ ես վեր առնեմ։ Եւ դա մի դժուար բան չի։ Կը
թունաւորեմ այն կերակուրը, որ պէտք է գնեմ։ իսկ իմ
մասին կ'ասեմ, որ արդէն ճաշել եմ»։

Իսկ միւս ընկերներն այսպէս էին խօսում. «Ինչու մենք
բաժին առնք մեր ընկերին. եթէ նրա բաժինն էլ մենք
վեր առնենք՝ աւելի կը հարստանանք։ Ուրեմն, հէնց որ նա
զայ՝ իսկոյն սպանենք»։

Պատահին բերեց թունաւորած կերակուրը։ Ընկերներն իսկոյն սրերն հանեցին ու սպանեցին նրան։ Իսկ յետոյ կերակուրն ուտելով՝ իրանք էլ մեռան։ Գանձը մնաց անտէր։

Ա. Նաղարեան

32.

ՀԱՅ ՏՈՒՂՋԸ

Ֆրանսիայի մի թագաւոր իմացել էր, որ իր իշխաններից մէկը յանդինել է ծեծել մի երկրագործի։ Յանցաւոր իշխանին պալատ հրաւիրեց ու առանց մի բան ասելու՝ ճաշի նստեցրեց։ Թագաւորը հրաման էր տուել ծառաներին, որ փառաւոր սեղան պատրաստեն։ Սեղանի վրայ շարած էին ամենապատւական կերակուրներ առատ-առատ, բայց հաց չկար։

Իշխանը տեսնելով անհաց սեղանը, զարմանում է։ Նոյն միջոցին թագաւորը ներս է մտնելում ու հարցնում։ «Ի՞նչպէս է, իշխան, կերակուրները լաւ են, հաւանում ես։»

— Սքանչելին է, տէր իմ, շատ համեղ կերակուրներ են։ Բայց, ներեցէք համարձակութեանս, բերանս բան առնել չկարողացայ. ապրելու համար հաց է պէտք, տէր իմ։

— Այն, պատասխանում է թագաւորը՝ դէմքը խոժուելով. — հասկացիր հիմայ քեզ տուած դաս։ Քանի որ ապրելու համար հաց է հարկաւոր, ուրեմն իմացիր լաւ վարուել մեզ հաց տուող գիւղացիների հետ։

33.

ԱՆՁՐԵԻԻ ԿԱԹԻԼ

(Հարտմանից)

Փայլուն կաթիլը գարնան անձրեի
Մի օր հարց տուաւ իր ընկերներին.
«Ի՞նչի ենք այս հին, աղքատ խըրճիթի
Լուսամուան այսպէս ծեծում անլըռին։»

Կաթիլներն իսկոյն տուին պատասխան.
— Գեղջուկն է ապրում այս հին տընակում.
Ուրախ համբաւ ենք մենք բերում նրան,
Որ նըրա արտը ծըլում է, ծաղկում...

Ա. Ծառուրեան

34.

ՄԱՅՐԻԿԻ ԿԻՍ

Հայրենիքէս հեռացեր եմ,
Խեղճ պանդուխտ եմ, տուն չունիմ,
Ազիզ մօրէս բաժանուեր եմ,
Տիուր-տրտում—քուն չունիմ։

Սարէն կու գաք, նշխուն հաւքէր,
Ակի իմ մօրս տեսեր չէք։
Ծովէն կու գաք, մարմանդ հովէր,
Ախըր, բարե բերեր չէք։

Հաւք ու հովէր եկան կըշտիս,
Անձէն զիպան ու անցան.
Պապակ-սրտիս, փափագ-սրտիս
Անխօս դիպան ու անցան։

31

Այիս, քու տեսքին, անուշ լեզուին
կարօտցեր եմ, մայրիկ ջան,
Երնէկ, երնէկ երադ լինիմ,
Թոնեմ մօտդ, մայրիկ ջան:

Երբ քունս գայ, լուռ գիշերով,
Հոգիկ գրկեմ, համբոյր տամ,
Սըտիկ կըպնիմ վառ կարօտով,
Լամ ու խնդամ, մայրիկ ջան...

Աւ. Խոահակեան

35.

ԳԱՌՆ ՈՒ ԳԱՅԼԸ

(Կոհլովից)

Հընուց մընացած մի լաւ առակ կայ, և շատ ուղիղ է,
Աստուած է վկայ, թէ հզօրի գէմ, թէն մեղաւոր՝ անզօր
արդարն է լինում յանցաւոր:

Այսպէս՝ մէկ անգամ շոգից նեղացած, հօտից մոլորած՝
մի ծարաւ գառնուկ խայտալով վազեց գէպի առուակը, որ
քիչ ջուր խըմէ, ծարաւը կոտրէ, փոքր ինչ զովանայ, վազէ
տուն զընայ:

Այդ իսկ բոպէին, որտեղից որտեղ, մի վայլ դուրս պըր-
ծաւ և կամաց-կամաց, սուս-փուս, գողի պէս, շան կեր-
պարանքով, գառին մօտեցաւ: Ի՞նչ ասել կ'ուզէ, թէ ին-
չու համար. — Քաղցած գազան, փափիկ գառնուկ. — կ'առ-
նէր կը տանէր և անուշ կ'անէր:

Բայց մէկէնիմէկ նա այդպէս չարաւ, խակոյն չըտարաւ:
Չըգիտեմ որտեղ՝ մեր ծաղկաթաւան ուսում էր առել,
օրէնք սովորել, ուզեց իր գործը խեղճ գառնուկի հետ օ-
րէնքով տեսնել. որպէսզի չասեն, թէ գառն արդար էր,
գայլը՝ մեղաւոր: Բայց ինչ էլ լինէր՝ դարձեալ գազան էր,

կոպիտ բաւական. հետք չըկար վըրան ուսման, կըթու-
թեան, ինչպէս կը տեսնէք նրա խօսելու, վարուելու ձեից:
— Այ դու անպիտան, կենդանի անբան, ասում է գա-
ռին գայլն ուսումնական. — Ի՞նչ իրաւունքով և որ օրէնքով
համարձակում ես իմ մաքուր ջուրըս, պարզ խըմելիքըն
քո պիղծ բերանով այսպէս պըդասորել՝ աւազով, ցեխով
հազար տեսակ աղտեղանքներով: Քո այդ յանդուգն չարու-
թեան համար, գիտես, ինչպիսի պատիժ կայ գըրուած:
— Վսեմափայլ տէր, — ասում է գառը, — ես գիր չըգիտեմ,
բայց թէ թոյլ կըտառ՝ այսքանը կ'ասեմ, որ ջուրը ցածից
վերև չի գնայ, դու էլ կ'իմանաս:

— Ի՞նչ ես դուքս տալիս, ես չեմ հասկանում. ջուրը
ներքեց վերև չի գնայ. ով այդ չըգիտէ, էլ ասելու ի՞նչ է:

— Իմ ասելն այն է, վսեմափայլ տէր, որ դու վերքից
եկար գէպի ինձ: Այդ էլ որ չասենք՝ հէնց ջըրին նայենք,
եկար գէպի ինձ: Այդ էլ որ չասենք՝ հէնց ջըրին նայենք,
քուր է: Զուր է, ճշմարիտ, քո բարկութիւնը:

— Տեսէք այս ստահակին, սրա սսածին: Համարձակւում
ես, կենդանի անբան, տալ ինձ պատասխան: Քո խելքով՝
լաւ ուրեմն ես սուտ եմ խօսում, շառ եմ հնարում: Ես լաւ
եմ յիշում և չեմ մոռացել, որ մէկէլ տարին էլի դու էիր,
որ յանդընեցիր, ինձ ընդդիմացար և հայհոյելով այստե-
ղից փախար, ձեռքիցըս պըրծար:

— Այս, ի՞նչ ես ասում, տէր իմ պատուական, դեռ ևս չը-
կամ ես մէկ տարեկան:

— Ուրեմն եղբայրդ էր. էլ ով կը լինէր այնքան քեզ
նըման, քեզ պէս անպիտան:

— Ողորմած տէր իմ, ես եղբայր չունիմ:

— Ինձ համար մէկ է, ով կ'ուզէ լինի. միթէ, դու չու-
նիս քաւոր, խընամի: Մէկ խօսքով՝ նա ձեր յիմար ցեղիցն
էր: Դուք, ձեր ըըները, ձոր հովիւները, ինձ չըսիրելով,
իմ չարն ուզելով՝ երբոր կարենաք՝ միշտ վասա կը տաք:
Այդ մեղքի համար ես հիմա գիտեմ, թէ քեզ ի՞նչ կ'անեմ:
Այդ մեղքի համար ես հիմա գիտեմ, թէ քեզ ի՞նչ կ'անեմ:

— Այս, Տէր իմ Աստուած, — գառն աղաղակեց. — Ի՞նչ է

իմ մեղքըս, սա չըհաստատեց...։ Կոեմափայլ տէր, ողորմած
եղիր. ես ինքս անմեղ եմ..., — լըովիր, անպիտան, ոչխորի լակնտ, իմ բան ու գործըս
խօմ չէ կըտըռուել, որ քո մեղքերդ սկսեմ քըննել։ Եկ, զը-
նանք անտառ, ես այնտեղ կ'անեմ քո դատաստանիր։ — Ա-
սաց գագանը, և մեր գառնուկին դրեց շալակին...։

Նա տղիր լար ծախար զավազն անուր պահան մանի
նկամքը զիր ում — զար չ'առա ոչ ոչ ունի լավագութ

Դ. Աղայեան

ոճնար զար ունի անուր զավազն անուր ուով Ան ընդ
պահան անուր ուով ուով անուր զավազն անուր ուով
ուով անուր ուով ուով անուր զավազն անուր ուով

36.

ԷՇՆ ՈՒ ՍՈԽԱԿԸ

(Կոհլովից)

Նա անմարտ ունի անուր անուր ուով ուով ուով

Զըռան էշը սոխակ տեսաւ.

— Մէկ ինձ նայիր, նըրան ասաւ.

Սսում են՝ դու լաւ ես երգում.

Բայց չը գիտեմ, զմրդ են ասում:

Ես ականջներ ունիմ լայն-լայն,

Լաւ եմ լսում ամեն մի ձայն.

Բայց քո ձայնը ես չեմ լսած,

Թէև լսել շատ եմ ուզած։

Այս լաւ եղաւ, որ քեզ գտայ,

Դէ, մէկ երգիր, մէկ ըըլըըլա,

Տեսնեմ, ուղիղ լաւ ես երգում,

Թէ իղուր են այնքան գովում։

Սոխակն անմեղ, դէ, նազ չարաւ,

Անուշ լեզուն նա բաց արաւ,

Ուզեց ցոյց տալ աւանակին,

Որ չեն գովում զուր սոխակին։

Զայնը լարեց ու սկսեց։
Սոխակի ձայն... ինչեր չասեց.
Մէկ խօսում էր ու մէկ երգում,
Հազար խաղով խաղացընում.
Մէկ դայլայլում, դըլկըցնում,
Մէկ գեղգեղում, կըլկըցնում,
Այսպէս շըւում, սըրնգում էր,
Որ սար ու ձոր զմայլում էր.
Լեռ քարերն էլ լարեցին ուշ,
Այնքան քաղցը էր, այնքան անուշ։
Ամեն մի շունչ ու արարած
Լսում էր լուռ, ապուշ կտրած։
Քամին կտրեց իր վըզգոցը,
Աղբիւրն իրա քըչքըչոցը.
Ոչ մի տերև չէր սըլսըլում,
Ոչ մի թոշուն չէր ծըլվլում.
Տաւարներն էլ չարածեցին,
Այլ նստեցան, ականջ դրին։
Տաւարածն էլ շունչը քաշած,
Սոխակին էր լսում ապշած,
Անմեղ ժպտում ու հիանում,
Ընկերին էր ձեռքով անում։
Մեր սոխակը, վերջը, լոեց,
Իշի վճոխն ականջ դրեց.
Երկարականջ զըոզըռանը
Այսպէս կտրեց դատաստանը.
«Էհ, ինչ ասեմ, վատ չես երգում։
Լաւ ես շըւում, կըլկըցնում։
Բայց ես շատ եմ ափսոսում քեզ,
Որ չես երգում աքլորի պէս։
Աքլորին էլ որ դու տեսնես,
Նըրանից էլ որ դաս առնես,
Այնուհետեւ նըրա նման։
Դու կը երգես շատ աննման»։

Այդ վճիռը երբոր լսեց,
Մեր սոխակը նոր աչք բացեց.
Նա նոր տեսաւ, որ իր գիմաց
Մի գեռագլուխ էշ է կանգնած...
Թևին խփեց, խկոյն թռաւ,
Իշխ ձեռքից ազատուեցաւ:

Դ. Աղայեան

37.

ԾԱՇԿԱԶՄՐԴ

Մեծ պասն ամբողջ վեց շաբաթ տիսուր ու բարկացած
մնալուց յետոյ, յանկարծ սկսում է ծիծաղել, խնդալ, ու-
րախանալ:

Այդ լինում է Ծաղկազարդին:

Ամբողջ տարուայ մէջ եկեղեցին ոչ մէկ անգամ այն-
պէս լիքը չի լինում, ինչպէս Ծաղկազարդի գիշերը:

Մեծ ու փոքր, ծեր ու մասուկ, մարդ ու կին, նորա-
հարսներ ու նորափեսէք, նշանած ու նշանելու տղերք ու
աղջկերք, հանդերից հաւաքուած տաւարածներ, հովիներ,
խոզարածներ, — մի խօսքով՝ ամենքը, ամենքը Ծաղկազար-
դի գիշերը ժամումն են լինում:

Հէնց որ մտնում ես եկեղեցի, կարծում ես թէ մի
հարսնքատուն ես մտել: Ամենքն էլ իրանց հին ու կեղ-
տոտ հագուստը փոխած, նոր զարդարանքներով զարդա-
րուած, մաքրուած, գեղեցկացած:

Եկեղեցու պատերի, սիւների, ջահերի, աշտանակների
գրայ էլ տեղ չի լինում, այնքան մոմեր են լինում վա-
ռած: Բացի զբանից, ամեն մի հոգի մէկ-երկու վառած
մոմ էլ ձեռին է ունենում բռնած: Նշանած աղջկերանց
ձեռքի մոմերը ոոկի վարազով նախշած են լինում:

Եկեղեցու մէջ այնպիսի աղմուկ է լինում, որ չի լը-
ռում, թէ տէրտէրն ինչ է ասում, տիրացուն՝ ինչ:

Փոքր երեխաների ճիչն ու աղաղակը, հարսների քըչփը-
չոցը, տաւարածների քըչոցը, ծերերի հազալը, ժամհարի
բարկանալը, — այդ ամենը իրար խառնուած, եկեղեցին շի-
բարկանալը, — այդ ամենը իրար խառնուած, եկեղեցին շի-

բարկանալը, — այդ ամենը իրար խառնուած, եկեղեցին շի-

բարկանալը, միասին հարիւրաւոր երեխաների ձեռքում մի

այնպիսի աղմուկ են բարձրացնում, որ կարծես եկեղեցու

պատերի բոլոր քարերը լեզու առած՝ գոռալիս լինեն:

Ահա ուսփի ճղներից մեծ-մեծ խուրձեր կապած՝ դրած

են եկեղեցու մէջտեղը:

Երբոր ժամանակը հասնում է, վրայ են թափւում ու

կոտրատում:

Պէտք է տեսնել, թէ ինչ ձըրթճըրթոց է բարձրանում:

Ինչպէս շտապում են ամենքն էլ, որ մի-մի ճիւղ ունե-

նան ձեռներին ու նրանով գիմաւորեն Քրիստոնին, ինչպէս

որ գիմաւորել են նրան երուսաղէմացիք արմտենու և
ձիթենու ճղներով:

Երբոր ժամասացութիւնը վերջանում է, դեռ լոյսը բա-
ցուած չի լինում: Ամենքն էլ դուրս են գալիս ու տուն

գնում խումբ-խումբ, ճղները ձեռներին, վրան մոմեր վառած:

Այս ու այն կողմ ցըռւելով, ամբողջ գիւղը լուսաւոր-
ւում է: Ամեն գոան, ամեն կտրան, ամեն փողոցում լոյս է

երեւում և ամեն կողմից ուրախութեան ձայներ են լսում:

Վերջապէս, ամենքն էլ մտնում են իրանց աները, ճըդ-

ները խըռում են պատերի արանքները և սուրբի պէս պա-

հում: Մոմերն էլ հանգցնում են, որ, երբ, Աստուած մի

արասցէ, տան մէջ մի նեղութիւն պատահելու լինի կամ

կարկուտ լինի գալիս՝ վառեն:

Այսպէս ամենքն էլ ուրախ են լինում այդ օրը: ամենքն

էլ հաղորդում են:

Դ. Աղայեան

ԹԱՐԱԽՄԱՆ ԵՐԵԿՈՅ

Զատիկ է։ Շուշի քաղաքում բոլոր ժողովուրդը ոտքի է կանգնել։ Տղամարդիկ վաղուց են դուրս եկել՝ տան համար հաւկիթ, իւղ ու բրինձ առնելու։ Իսկ կանայք տուն ու դուրսը մաքրում են, զարդարում կամ թէ օջախի առաջ կանգնած՝ կարմիր ու գեղին հաւկիթներ ներկում։ Փոքրիկ երեխաներն իրանց մօր վեշից բռնած՝ անհամբեր սպասում են, որ իրանց վէգերն էլ ներկեն։ Իսկ չափահաներն այստեղ-այստեղ խմբուած՝ հաւկիթ են խաղում, առնում են հաւկիթները, ատամներին խփում, խեճեճն ու պինդը իմանում և կոռւեցնում։ Հըրթ — կոտրում է մէկի հաւկիթը, յաղթողը փառաւորւում է, յաղթուողն հաւկիթից զրկում ու գլուխը կախ անում։

Երեկոյեան չորս ժամն է. զօղանջում են եկեղեցիների զանգակները և ժողովրդին աղօթքի կանչում։ Ահա տներից դուրս են զալիս մարդ ու կին, տղայ ու աղջիկ՝ նոր ու խշխռն շորերով, զուգուած, զարդարուած, և դէպի եկեղեցի գնում։ Ամենքի դէմքն էլ ուրախ է ու զուարթ, սմենքի բերանին էլ ժպիտ է երկում։

Ահա և Աստուծոյ տաճարը, որտեղ թէ աղքատն ու հարուսար, թէ մեծն ու փոքրը, թէ ծառան ու աղան հաւասար են։ Ամենքն էլ աղօթում են ու իրանց ցաւերին գեղ դարման խնդրում։ Խունկի անուշահոտ ծուխն ամպի պէս փուռում է կամարակապ առաստաղի տակ։ Քահանաներն ու դպիրներն անուշ երգերով փառաբանում են Աստծուն։ Արեի ճառագայթներն ու ջաների և աշտանակների վառվուն մոմերը պապում են։ Յանկարծ բացւում է վարպոյրը և պատարագիչ քահանան խաղաղութիւն ու սէր է քարոզում։ սարկաւագն աւետում է ժողովրդին Քրիստոսի յարութիւնը. ժողովուրդը միաբերան կանչում է. «Օրհնեալ է յարութիւնն Քրիստոսի», և միմեանց ողջունելով՝ այդ աւետիսը հաղորդում է ամենքն։

Ժամերգութիւնը վերջացաւ. փողոցները կըկին լցւում են մեծ ու փոքրով. ամեն մարդ տուն է շտապում. ամենքն էլ գոհ են ու ուրախ։

Խոհանոցներից բարձրանում է խորովուն ու տապակուած ձկան հոտը, լուսում է փլաւի ճճլոցն ու թշթշոցը, երեխաների ուրախ երգերը, մարդկանց մէկ մէկու տուած աւետիսն ու պատասխանը՝ «Քրիստոս յարեալ ՚ի մեռելոց»... «Օրհնեալ է յարութիւնն Քրիստոսի»...
Ծերուկ

ՃՈՒՆՆ ՈՒ ԿԱՏՈՒՆ

Ժամանակով կատուն ճոն էր,
Շունն էլ գըլիկն գըլակ չունէր,
Միայն, զիտեմ ոչ՝ որդիանց որդի,
Ճանկել էր մի գառան մորթի։
Եկաւ մի օր, ձմռնամըտին,
Կատուի կուշտը տարաւ մորթին։
— Բար' աղողում, ուստա Փիսօ,
Գլուխը մըրսեց, ՚ի սէր Ասծոյ,
Առ էս մորթին ու ինձ համար
Մի գգակ կարի գըլիկս յարմար.
Վարձիդ համար միամիտ մնա,
Համա-համա շատ չուշանայ։
— Աչքիս վրբայ, քեռի Քուշի.
Մի գըլակ ա, հօ մի քուրք չի.
Քու թանկագին խաթեր համար
Ուրբաթ օրը համեցէք տար։
Փողի մասին աւելնորդ ա,
Մեր մէջ խօսալն էլ ամօթ ա.
Ի՞նչ մեծ բան ա, տօ հէր օրհնած,
Միայն, միայն, մի գգակի վարձ...

Ուրբաթ օրը քեռի Քուչին,
Ուստից առաջ, բաց բաց կուճին
Թափ թափ տալով, ծանդը ու մեծ
Ուստա կատուի շեմքում կանգնեց:

—Ուստին ուր ա... փափախս ուր ա...
—Մի քիչ կացի, հրէս կերևայ,
Պատասխանեց կատուի ձագը,
Որ մտել էր դըռան ծակը:

Ուստին եկաւ քուրքը հազին,
Շանը տեսաւ, բեղի տակին
Իրան-իրան քիչ փընթփընթաց
Ու մուշտարու վըրայ թընդաց.

—Ցուրտը տարածւ... վահ, տընաշէն,
Զես թողնում, որ մի շունչ քաշեն.
Հեշտ բան հօ չի, հրլա նոր եմ
Ցըրցամ տուել, թէ որ կարեմ»:
—Դէ հէր օրհնած, էտէնց տսա,
Եդ բարկանալդ էլ ընչիս ա:

Փող եմ տուել, շուտով կարի,
Թէ չէ, ասա էգուց արի:
Համ ասում ես, համ չես կարում,
Համ խօսում ես, վըրէս գոռում,
Համ, համ, համ, համ,
Քանի, ախպէր, զընամ ու դամ...
Ասաւ Քուչին ու նեղացած
Վերադարձաւ գըլուիը բաց:

Մին էլ եկաւ, դարձեալ չըկար.
Էս անգամը դիպան իրար:
Էլ անպատիւ, պետոը խօսքեր,
Էլ հին ու նոր, էլ հէրն ու մէր,
Էլ գող Փիսօ, էլ քաշալ Շուն...
Բանը հասաւ գիւանբաշուն:

Շունը մինչև գընաց, եկաւ,
Ուստա կատուն կոտըրն ընկաւ,
Գըլուին առաւ ու մի գիշեր
Հայդէ, կորաւ. Էս կորչին էր...

Էս օրուանից մինչև օրս էլ
Շունն էս բանը չի մոռացել,
Մըտքում հլա դեռ պահում ա.
Որտեղ կատուին պատահում ա,
Վեր ա թըռչում, վըրայ վազում,
Իրան մորթին ետ ա ուզում.
Խոկ սեերես կատուն յանկարծ
Ետ ա գառնում ու բարկացած
Փըշտացնում ա. մըթամ նոր եմ
Ցըրցամ տուել, թէ որ կարեմ:

Յովն. Թումանեան

40.

ՀԻՆ ԶՐՈՅՑ

Շատ հին ժամանակ մի թագաւոր կար՝
Զօրեղ, իմաստուն և շատ էլ արդար.
Երբ որ ծերացաւ, մօտեցաւ մահուան,
Զը գիտէր՝ ով կը յաջորդի իրան:
Թէպէտ նա ունէր տասներկու որդի,
Բայց չէր իմաստում թէ որին ընտրի.—
Մեծը ուժով էր, բայց անգութ ու չար,
Նըրանից փոքրը՝ թոյլ ու ցաւագար;
Երբորդն էր անհոգ ու խելքից պակաս,
Զորբորդն էլ անմիտ, թէկ անվընաս.
Այսպէս ոչ մէկը իրա որտով չէր,
Ոչ մէկն իր հոգին, իր խելքը չունէր:

41

ԶԱՐԻՎԵՐ ԶԼ

Լինում է մի սար,
Էն սարում մի ծառ,
Էն ծառում փրչակ,
Փրչակում մի բուն,
Բընում երեք ձագ,
Ու վլրէն կըկուն:
—կուկու, կուկու, իմ կուկուներ,
Ե՞րբ պիտի դուք առնեք թեր,
Թըռչէք, գընաք,
Ուրախանաք...

Երգում էր մարիկ կըկուն: Մին էլ, ըհը, Աղուէսն
եկաւ:

—Էս սարը իմն է,
Էս ծառը իմն է,
Ծառում փրչակ կայ,
Փրչակում մի բուն,
Էս ով է եկել
Տիրացել թագուն:
Ախ, դու կըկու, յիմար կըկու,
Քանի փոքրիկ ձագ ունես դու:
—Երեք հատ ձագ, աղայ Աղուէս:
—Երեք հատ ձագ ցնյց կը տամ քեզ:
Ու չես ասիլ, դու, անամօթ,
Մինը ծառայ ղըրկես ինձ մօտ:
Զըգիր շուտով մի հատը ցած,
Թէ չէ կացինս հըրէն սըրած,
Գընամ բերեմ,
Ծառը կըտրեմ...
—Վայ, չը կտրես,
Աստուած սիրես,

Էս մինն ահա
Տար քեզ ծառայ,
Միայն թէ էդպէս
Մի ջընջիլ մեզ
Բընով-տեղով,
Ամբողջ ցեղով:

Խնդրեց մարիկ կըկուն ու ձագերից մինը ձգեց ներ-
քև: Աղուէսը հափ, առաւ գնաց:

—Վայ-վայ, դու-դու,
Իմ լաւ կուկու.
Ո՞ր սև սարում,
Ո՞ր անտառում,
Ո՞ր թըրի տակ
Կորար մենակ...
Վայ-վայ, դու-դու,
Իմ լեռդ կուկու...

Լաց էր լինում մարիկ կըկուն: Մին էլ, ըհը, Աղուէսը
ետ եկաւ:

—Էս սարը իմն է,
Էս ծառը իմն է,
Ծառում փրչակ կայ,
Փրչակում մի բուն.
Էս ով է եկել
Տիրացել թագուն:

Ախ, դու կըկու, յիմար կըկու,
Քանի փոքրիկ ձագ ունես դու:
—Երկու հատ ձագ, աղայ Աղուէս:
—Երկու հատ ձագ ցնյց կը տամ քեզ:
Ախ, չարամիտ դու աւազակ,
Ի՞նչ իսբար է, երկու հատ ձագ.
Ի՞նչ, ուզում ես էստեղ զօռով
Լըցնես ամբողջ կըկուներով...
Զըգիր շուտով մի հատը ցած,
Թէ չէ կացինս հըրէն սըրած,

Գլուհամ բերեմ,
 Ծառը կըտրեմ...
 —Վայ, չը կտրես,
 Աստուած սիրես,
 Էս էլ առ, առը,
 Ու տներ դադար.
 Վերջինը գէթ
 Մընայ ինձ հետ...

Աղաչեց մարիկ կըկուն ու երկրորդ ձագն էլ ձգեց
 ներքեւ: Աղուէսը հափ, էս էլ առաւ ու գնաց:
 —Վայ-վայ, վույ-վույ,
 Է՞նչի համար
 Եկայ էս սար,
 Բուն շինեցի,
 Չագ հանեցի...
 Աղուէսն եկաւ,
 Տարաւ, կերաւ
 Երկնւ, Երկնւ
 Կուկնւ... կուկնւ...

Լաց էր լինում մարիկ կըկուն: Էս միջոցին—դա, դա
 դա, Ագուաւն անց էր կենում էն կողմերով: Լսեց կըկուի
 լացի ձայնը:

—Էդպէս տխուր, սըրտաճմլիկ
 Ի՞նչ ես լալիս, կըկու քուրիկ,
 —Ի՞նչպէս չը լամ, ա սանամէր,
 Աղուէսն եկաւ՝ էն սրտամեռ,
 Գըլիսիս էպէս փորձանք բերաւ,
 Չագուկներըս տարաւ, կերաւ:
 —Վույ իմ աչքին, անխելք կըկու,
 Ի՞նչպէս իզուր խարուել ես գու
 Առւտ խօսքերից չար Աղուէսի:
 Ո՞նց թէ սարը իմն է՝ կասի.
 Ո՞վ է տուել էն լըրբին սար.
 Սարն ամենքինս է հաւասար:

Ո՞վ կը թողնի վեր կենայ նա
 Ամբողջ սարին գայ տիրանայ.
 Անունը տայ սըրած կացնի,
 Սըրան, նըրան սուտ վախացնի,
 Որ մինն էսօր, միւսը երէկ
 Չագեր տանի, ուտի մէկ-մէկ...
 Աև գըրողի էն տարածին
 Ո՞վ է տուել սըրած կացին:
 Մին էլ որ գայ, գայ ու սպանայ,
 Մի վախենայ, քըշի գընայ:

Էսպէս ասաւ Ագուաւն ու թուաւ գնաց: Ահա կըկին
 Աղուէսն եկաւ:

—Էս սարը իմն է,
 Էս ծառը իմն է...

Հաղիւ էր ասել, կըկուն բնից գլուխը հանեց՝
 Սուտ ես ասում, գու, խաբեթայ,

Անխիղճ գազան, անկուշտ, ագահ:

Ո՞վ է տուել էստեղ քեզ սար,

Սարն ամենքինս է հաւասար:

Ի՞նչ ես եկել, սուտ տէր գարձել,

Ես էլ յիմար՝ ճիշտ եմ կարծել,

Չագուկներըս տուել եմ քեզ...

Կորի, գընա, գու չար Աղուէս.

Հերիք՝ ինչքան սուտ ես ասել,

Հիմի գիտեմ, չեմ վախում էլ.

Կացին չունես, ծառը կըտրես:

—Ո՞վ ասաւ քեզ:

—Ագուաւն ասաւ:

—Ագուաւը. լաւ:

Ու Ագուաւի վրայ բարկացած՝ Աղուէսը պոչը քաշեց,
 հեռացաւ: Գնաց, մի դաշտում սուտմեռանուկի տուաւ,
 վէր ընկաւ, իբրև թէ սատկել է: Ագուաւն էլ կարծեց, ի-
 բաւ սատկել է, թուաւ եկաւ, վրէն իջաւ, որ աչքերը հա-
 նի: Աղուէսը հափ, յանկարծ բռնեց:

— Ղաղա, ղաղա,
 Աղուէս աղայ...
 — Այ դու կռաւան չարալեզու,
 Ո՞նց թէ կը կուին ասել ես դու,
 թէ ես կացին չունեմ սըրած...
 Կացին չունեմ... չէ, հիմի կաց...
 — Վայ, քեզ մեղայ,
 Աղուէս աղայ,
 Ես եմ ասել, չեմ ուրանում,
 Ինձ քըրքըրի, ինձ կեր հում-հում,
 Տնւր, ինչ պատիժ սիրտը կուզի,
 Բայց մի վերջին խօսքըս լըսի:
 Ես էն սարում, հէնց դէմուդէմ,
 Էնպէս մի թանգ պահուստ ունեմ,
 Որ չես գըտնի դու քու օրում
 Ոչ մի թառում կամ անոտառում:
 Ընչե՛ համար էն ահազին
 Գանձը կորչի հողի տակին:
 Արի գընանք, հանեմ տամ քեզ,
 Էնքան ուտենս, էնքան ուտենս...
 Թէ չը լինի ու սուտ դուրս գամ,
 Ես հօ էստեղ միշտ կամ ու կամ:
 — Գնանք, ասաւ Աղուէսը: — Թէ կը լինի, շատ լաւ, թէ
 չի լինի, էլի քեզ կուտեմ:
 Գնացին:
 Վերևից թոչելիս՝ Աղուաւը նկատել էր, որ մի թփում
 պառկած էր գիւղացու շունը: Աղուէսին տարաւ, տարաւ,
 դուրս բերաւ ուղիղ էն թփի վրայ:
 — Այ, ասեց, էս թփումն է իմ պահուստը: Աղուէսը
 ագահ վրայ ընկաւ թփին: Շունը վեր թռաւ, կոկորդից
 բռնեց ու դրեց տակին: Աղուէսը խեղզուելով սկսեց խրռ-
 խրռալ:
 — Ախ, ես... ախ, ես...
 Զգոյշ Աղուէս,

Փորձանքի մէջ
 Ընկնեմ էսպէս...
 Ախ, անիրաւ
 Դու սև ագուաւ...
 — Ի՞նչքան էլ որ լինես զգոյշ,
 Զարի համար թէ վաղ, թէ ուշ,
 Ե՞տ է պահուած, Աղուէս աղայ,
 Ղաղա, ղաղա, ղաղա...
 Պատասխանեց Աղուաւն ու թռաւ, ինքն էլ ազատուեց,
 Կը կուն էլ:

Յովհ. Թումանեան

42.

ԳՈՂԱՑԱԾ ԶԻՆ

Մի գիւղացու ախոռից գողացան նրա ձիերից ամենա-
 լաւը: Մի քանի օրից յետոյ, նա գնաց շուկայ, որ մի ուրիշ
 ձի առնի. բայց մեծ եղաւ նրա զարմանքը՝ երբ նա ճանաչեց
 ծախու հանած ձիերի մէջ իր սեփական ձին:
 Իսկոյն բռնեց սանձից ու պոռաց. «Սա իմ ձին է. երեք
 օր է, որ ինձանից գողացել են»:
 «Սխալում էք, պարոն, — ասաց քաղաքավարի ձեռվ
 ձիավաճառը, — մի տարի կայ, որ այս ձին իմն է. Էլ ո՞ր-
 տեղից նա ձերը եղաւ: Գուցէ նման է ձեր ձիուն, բայց
 այդ նմանութիւնը ոչինչ չի ապացուցանում»:
 Գիւղացին իսկոյն երկու ձեռքը ձիու աշքերի վրայ
 դրեց ու ասաց. «Լաւ, թէ որ դու այս ձիու տէրն ես եղել
 մի ամբողջ տարի, ապա ասա, տեսնեմ, ո՞ր աշքն է կոյր»:
 Գող ձիավաճառն, ուշադրութեամբ չէր զննած գողացած
 ձին. նա շուարած մնաց: Բայց քանի որ մի բան պէտք է
 ասէր, պատասխանեց. «Զախ աշքը»:
 — Սխալ է, — ասաց գիւղացին:

— Զէ, չէ, — խօսքը կարեց գողը, — սխալուեցի, ուզում էի
ասել՝ աջ աչքը չի տեսնում:

Այդ միջոցին գիւղացին բացեց ձիու աչքերն ու ասաց.
«Հիմա հասածառուեց, որ դու ստախօս ես ու գող. ձին
ոչ կոյր է, ոչ էլ մի աչքանի»:

Բոլոր ներկայ եղողները ծիծաղեցին և աղաղակեցին.
«Գողը բռնուեց, բռնուեց»:

Գողը ստիպուած եղաւ ձին յանձնել իր օրինաւոր տի-
րոջը. ապա բանտարկուեց ու կրեց արժանի պատիժը:

Ս. Նազարեան

43.

Կ Կ Ո Ւ

(Գելլէրտից)

«Քաղաքիցը նոր ես չուել, բարեկամ,
Ասա, ի՞նչ են այստեղ խօսում մեր մտախն.
(Կըկուն հարցրեց կաչաղակին մի անգամ).
Օրինակ՝ հէնց առնենք փոքրիկ սոխակին,
Շատ կ'ուզէի իմանալ, թէ քաղաքում
Ով ինչպէս է նըրա երգը հաւանում»:
— Օ՛, սոխակը տաղ ասելիս այդու մէջ,
Ովզ քաղաքի հիացմունքին չըկայ վերջ:
«Իսկ արտաւոր»:

— Արտուան էլ է՝ երգելիս,
Իր երգերով շատ շատերին գուր գալիս:
«Ա՛յ զարմանք բան: Իսկ սարեկին լըսելով՝
Ի՞նչ են ասում քաղաքացիք»:
— Շատ սիրով
Նըրան էլ են գովում:
«Միթէ... Բայց էլի
Քեզ, բարեկամ, մի բան հարցնել կ'ուզէի».

Արդեօք երբէք քաղաքում դու չես լըսած
իմ մասին էլ մի քանի խօսք»:
— Ճիշտն ասած,

Այնտեղ, քոյրիկ, անունդ անգամ, որ ասես,
Ոչ տալիս են, ոչ էլ երբէք յիշում քեզ:
«Ա՛, — պինդ ճաւեց կըկուն սաստիկ զայրացած, —
Որ այդպէս է, ես ցոյց կըտամ այդ մարդկանց.
Քանի ողջ եմ, քանի մէջըս ոյժ ունեմ,
Ես ինքըս ինձ կը գովեմ»:

Ա. Ծատուրեան

44.

ԳԱՐՆԻԿ ԱԽՊԵՐ

1.

Մայրիկը մեռաւ, հայրիկը մեռաւ,
Մանուկն ու Մանուշ անտէր մնացին.
Մարդիկ անկշտում, մարդիկ անիրաւ,
Փոքրիկ որբերին չըպահպանեցին:
Ելան, բոնեցին իրարու ձեռքից
Անձանօթ ճամբով, տըկոր ու սոված,
Հեռացան, կորան էն չար աշխարհքից:
Երկու որբեր, քուր ու ախաղէր, կորած գընում են հեռու.
արել վառ, ճամբէն երկար, ոչ աղբիւր կայ, ոչ առու:
Քոյրը մեծ էր. ոնց որ լինէր՝ կըհամբերէր արելն, բայց
ախաղէրը փոքրիկ էր դեռ, չէր դիմանում ծարաւին:
Գնում են, գնում, տեսնում են ճամբին կովի ոտնա-
տեղ, մէջը լիքը ջուր:
«Քուրիկ ջան, քուրիկ, ես շատ եմ ծարաւ, ի՞նչ կըի
թողնես, խմեմ մի պուճուր»:
— Զէ, ախաղէր ջան, չէ. դու կով կըդառնաս. կովի
կաղակի տեղից մի խըմի, մի քիչ էլ կացի... քիչ էլ որ
կենաս, առաջներիս պաղ աղբիւր կայ հիմի:

Երկու որբեր՝ քուր ու ախպէր՝ կորած գնում են հեռու.
արել վառ, ճամբէն երկար, ոչ աղբիւր կայ, ոչ առու:
գնում են գնում, տեսնում են ճամբին ձիու ոտնատեղ,

մէջը լիքը ջուր:
«Քուրիկ ջան, քուրիկ, ես շատ եմ ծարաւ, ի՞նչ կըի
թողնես՝ խմեմ մի պուճուր»:

—Զէ, ախպէր ջան, չէ, դու ձի կըդառնաս, ձիու սմբա-
կի տեղից մի խըմի, մի քիչ էլ կացի, քիչ էլ որ կենաս,
մօտիկ մի զուլալ աղբիւր կայ հիմի:

Երկու որբեր, քուր ու ախպէր, գնում, գնում են հեռու.
արել վառ, ճամբէն երկար, ոչ աղբիւր կայ, ոչ առու:
գնում են, գնում, տեսնում են ճամբին գառան ոտնա-
տեղ, մէջը լիքը ջուր. փոքրիկ ախպէրը էլ չի համբերում,
քըոջից թաքուն խմում է պուճուր:

Քոյրը մին էլ ետ է նայում, որ մի գառը մըղկըտալի
իր ետեից ախուր մայում ու մայելով վազ է տալի:
—Ա՛խ, իմ Մանուկ, որբ ու անտէր, իմ անլեզու Գառ-
նիկ-Ախպէր, էլ ոնց անեմ, ի՞նչ անեմ ես...

Կանչում է խեղճ Մանուշն էսպէս, վայ է տալիս, լա-
լիս, լալիս, բայց էլ ի՞նչ անէր, բայց էլ ոնց անէր...
Երկու որբեր, քուր ու ախպէր, դառն ու աղջիկ մոլոր-
ւած, հեռու հանդում, տխուր-տրառում գնում, գընում են
կորած:

2.

Սոված ու ծարաւ գնում են, գնում,
գնում են, գնում, չըգիտեն թէ ուր.
Վերջապէս մի հով անտառ են մտնում,
Անտառի միջին մի զանգակ աղբիւր:
Կուշա-կուշա խմում են էս սառը ջըրից,
Յետոյ Մանուշը ծառ է բարձրանում.
Գառնիկ-Ախպէրն էլ ծառերի տակին,
Մուշ-մուշ արածում, արոճ է անում:
Իրիկուան պահին խըրինջ ու քըրքիչ...

Լցւում է յանկարծ անտառն աղմուկով.

Մօտիկ են գալիս ձայները քիչ-քիչ...

Լսում են նըրանք վրդովուած հոգով...

Եւ ահա ոսկի սանձերից բռնած,

Բերում են ջրեն ձիանքն արքայի.

Ամեհի ձիանքն աղբիւրից խրտնած,

Ծառս-ծառս են կանգնում ու մօտ չեն գալի:

Մտիկ են տալի ծառայքը մէկ էլ,

Որ սիրուն մի ցոլք ջըրի մէջ ընկել,

Որ ջուրը քանի ալիք է տալի,

Նա էլ ջըրի հետ գընում է գալի:

Նայում են վերեւ: Ի՞նչ տեսան, Աստուած,

Մի հուզ-հըրեղէն, մի շարմաղ աղջիկ,

Ծառի ձիւղերին նազելի նստած,

Նայում է ներքև լրոիկ ու մընջիկ:

Մի սիրուն աղջիկ արմանք ու զարմանք.

Զարմանք է պատում խեղճ ծառաներին:

Տէր Աստուած, արդեօք ի՞նչ հրաշք է սա,

Վայրի անտառում իջած էս ծառին:

—Ո՞վ ես, չքնաղ, տեսիլք ես դու, թէ հողէղէն արա-
րած. թէ տեսիլք ես՝ կաց մի քիչ էլ, թէ աղջիկ ես՝ արի
ցած: Եկ, տեսնենք, էղ ոնց էլաւ, որ ծագեցիր դու մեզ
մօտ. որ երջանիկ հողմ բերաւ քեզ մեր անտառն ան-
ձանօթ:

«Մեզ որբութեան ցաւն է բերել ձեր աշխարհը հեռա-
ւոր,—պատասխանեց մեր Մանուշը, հառաչելով զլիիկոր:—
Մենք տուն չունինք, ոչ ապաւէն էս լայն արձակ աշխար-
հում. մութն էլ հիմի շուտով կընկնի, վախենում ենք
անտառում: Ես ձեզ համար աղօթք կանեմ, եթէ անէք
օգնութիւն. էս վայրենի խոր անտառից եթէ տանէք մեզ
մի տուն»:

Ու ծառաները գառն ու աղջկան

Առնում են բերում պալատն արքայի:

«Ո՞վ ես դու, սիրուն, —հարցնում է արքան,

Անրան գառան հետ ի՞նչ ես ման գալի»:
 կանգնում է աղջիկն էստեղ նորից նոր
 Պատմում է, ինչ որ պատմեցի ես ձեզ—
 Թէ ապրած կենաս, ահեղ թագաւոր,
 Մեր բանը՝ հապա, էսպէս ու էսպէս...

Թագաւորը երբ լսում է մին-մին՝
 Եւ շատ ցաւում է, և շատ հաւանում,
 Կարգում է նրան իրեն թագուհին,
 Եօթն օր, եօթ գիշեր հարսանիք անում:
 Ու փառքի միջում, շրբեղ դահլիճում,
 Լիքն ու երջանիկ ապրում է Մանուշ,
 Գառնիկ-Ախալէրն էլ ճոխ պարտէզներում
 Արօտ է անում ու խաղում անուշ:

3.

Պալատումը կար նախանձոտ ու չար
 Մի պառաւ կընիկ, հնուց աղախին:
 Նախանձում է սա, թէ ո՞նց պիտի գայ
 Մի որբ՝ թագուհի գառնայ մեր գլխին:
 Մի օր էլ գալիս, գըլուխ է տալի,
 Առաջը կանգնում, կեղծաւոր գովում.
 —Արի, քեզ տանեմ, սիրուն թագուհի,
 Զը՞փ-շը՞փ լողացնեմ շարմաղ էս ծովում:
 Խաբում է, տանում, գըցում ծովի մէջ,
 Շորերը առնում, ետ բերում քաղաք.
 Հագցընում իր սև խափշիկ աղջկան,
 Պալատ ուղարկում թագուհու տեղակ:
 Երեսը ծածկած թանձըր շըղարշով,
 Պալատ է մտնում էն սուտ թագուհին,
 Ու թագաւորն էլ կասկած չի տանում,
 Թէ ով է եկել բազմել իր գահին:
 Բայց ի՞նչ անում են, ի՞նչ որ չեն անում,
 Չեն կարում էլ առւն բերեն Գառնիկին.
 Բըղում, էս ափից էն ափն է վազում,

Բըղում, էն ափից ետ գալի կրկին:
 Ի՞նչ անենք սրան, ո՞նց անենք սրան,
 Աղջիկն ու մայրը շատ են միտք անում.
 Վերջը գալիս է դարձուոր թագուհին,
 Անկողին մտնում, հիւանդ ձևանում:
 —Վայ, աման, մեռայ... հայ-հարայ, մեռայ...
 «Ո՞րտեղդ է ցաւում, սիրուն թագուհին,
 Ի՞նչ կուզես, ասա».—խնդրում է արքան,
 Խնդրում, գըլիսովը պտոյտ է գալիս:
 —Ախորժակ չունեմ... ես բան չեմ ուզում...
 Գառնիկի մըսից որ լինի կուտեմ...
 Եւ թագաւորը մընում է սառած,
 Սառած, շուարած, կանգնած կնոջ դէմ:
 «Բայց չէ որ, Մանուշ, քո եղբայրն է նա,
 Ո՞նց ես նըրա միսն ուզում դու հիմա»...
 —Ի՞նչ անեմ, ինձնից նա ազիզ հօ չէ.
 Ես որ մեռնում եմ, թող նա էլ կորչի...
 Վայ, հարայ, մեռայ... հայ-հարայ, աման...
 Ու թագաւորը տալիս է հրաման.—

«Կըրակ վառեցէք,
 Դանակ սըրեցէք,
 Բերէք մորթեցէք Ախալէր-Գառնիկին,
 Որ առողջ լինի իր քոյրը տիկին»:

Թագաւորն էսպէս պատուէր է տալի,
 Պատուէր է տալի ու գուրս է գալի,
 Գընում է ծովափ սաստիկ սըրանեղած,
 Թէ որքան Մանուշն անդութ է եղած:

4.

Մայում է, լալիս խեղճ Գառնիկ-Ախալէր,
 Եւ լացացընում ծովի ժէռ ափեր.
 Մի ափից բռնած միւս ափն է թոչում,

Մարդկային լեզուով քըրոջը կանչում.
— Քուրիկ ջան, քուրիկ, կրակ են վառում, կրակ յեն
վառում, դանակ են սրում: Քուրիկ ջան, քուրիկ, լսիր
անդունդից, սպանում են ինձ:

Լսում է արքան՝ տեղը քար կտրած, և ալիքների մի-
ջիցը յանկարծ շատ ծանօթ մի ձայն հեռու, խուլ ու խոր
կանչում է անզօր.

«Ախալէր ջան, ախալէր, անհէր ու անմէր, անքնւր ու
անտէր, իմ Գառնիկ-Ախալէր: Կատաղի ծովի պաղ գերին
եմ ես, փրփրած ալիքը պահապան վըրէս: Դժար է տեղս,
ձէնս չեն լսում, ձէնս չեն լսում, ձեռքս չի հասնում: Ա՛յ
շար պառաւը աև արաւ օրըս, այժմ էլ կըսպանի Գառնիկ-
Ախալէր»:

Լսում է արքան, պալատն է վաղում,
Պատուում է քօղը թագուհու դէմքի,
Պատուում է, տեսնում... բայց ի՞նչ է տեսնում,
Ո՞վ է իր դահին եղել թագուհի...

Եկէք, ձկնորսներ, ուռկան ձգեցէք,
Հանեցէք ծովից մեր լաւ Մանուշին.

Եկէք դահիճներ, ծովը ձգեցէք,
Կախարդ պառաւին ու էս հըրէշին:

Այսպէս բարկացած զոռում է արքան,
Ժողովուրդն ամեն թնդում է ցաւից,
Գալիս է կանգնում, ձոռւմ է ուռկան,
Անմեղ Մանուշին հանում է ծովից:

Հանում է ծովից, գահին բազմեցնում,
Յաղթում է այսպէս անմեղը կրկին.
Գառնիկ-Ախալէրն էլ անչափ խնդումից,
Պատուում է իրան ոչխարի մորթին:
Քուրս գալի, կանգնում սիրուն արդամարդ,
Ճակատը պայծառ, աչքերը վառ-վառ,
Ոչխարի տկար մայիսի տեղակ,
Խօսում է լեզով ազատ ու ճարտար:
Իսկ չար պառաւին ու իր աղջըկան,

Որ խաբել էին աշխարհ բովանդակ,
Վլըզներից կապում ջաղացի քարեր,
Զգում են ծովի անդունդն անյատակ:
Երկու որբեր՝ քուր ու ախալէր՝
Առած պատիւ, գահ ու թագ,
Աշխարհըն էլի խաղաղ ու լի,
Զարը թաղուած ծովի տակ...

Յար զի սկսվին վյան մարտ մարտ
Երաց զի զարդ մասն մարդ վյան
Վասով մարդ ուն այսան ու մարդ
Ամիւնդն լսու 45. բայց զի զարդ
Այբարձնակ զարդ զարդ այսան ու մարդ
Համար ուն այսան ու մարդ
(Պուշկինից)

1.

Մի ծերուկ ձկնորս և իր պառաւ կին
Բընակում էին Մեծ ծովի ափին.
Ծերը զընում էր ձուկ բռնում ծովից,
Պառաւն էլ տանը թել մանում բըրդից.
Այսպէս միասին՝ մի հին գետնատան,
Երեսուն երեք տարի ապրեցան:
Ահա մէկ օր էլ ծերը զընաց ծով,
Որ ձուկը որսայ իր մաշուած ցանցով.
Նա ուրախ-ուրախ ցանցը ծով ձրգեց—
Առաջին անգամ միայն տիղմ հանեց.
Երկրորդ անգամը ցանցը ձրգեց ծով—
Ցանցը դուրս եկաւ ծովային խոտով.
Իսկ երրորդ անգամ որ ցանցը ձրգեց,
Ո՞վ կարէ ասել, թէ ի՞նչ դուրս հանեց.—
Նա բերաւ իր հետ մի ոսկի ձրկնիկ,
Զըկանց արքայի դուստրը գեղեցիկ.
Ծերի ցանցն ընկաւ, իբրև խեղճ գերի,

Ոսկի աղջիկը ձուկ-թագաւորի:
 ԽԵՂԱ ոսկի ձըկնիկ, ի՞նչպէս է լունդրում,
 Մարգկային լեզուով ծերին աղաշում.
 «ԹՌՆՂ ինձ, թՌՂ, ծերուկ, թՌՂ ինձ անվտանգ,
 ՔԵԿ կը վըճարեմ թանկագին փըրկանք.
 Ի՞նչ սիրացդ ուզի, ի՞նչ որ կամենաս՝
 Ուղիղն եմ ասում, ի՞նձնից կըստանաս»:
 Վախեցաւ ծերը, մընաց զարմացած.
 Նա այնքան տարի ձըկնորս էր եղած,
 Բայց ձըկան մասին երբէք չէր լըսել,
 ԹԷ նա մարդու պէս կարող է խօսել:
 «Գընա, Տէր ընդ քեզ, ասաց ծերունին,
 Ինձ չէ հարկաւոր փըրկանք թանկագին.
 Գընա քեզ համար դու ծիրանի ծով
 Ու այնտեղ ապրիր աղատ, ապահով»:

2.

Այս դէպքից յետոյ ծերը տուն դարձաւ,
 Պատմեց պառաւին, թէ ի՞նչ բան տեսաւ:
 «Այսօր ես ծովից, գիտե՞ս ի՞նչ, ա կ՞իկ,
 Բըսնեցի յանկարծ մի ոսկի ձըկնիկ.
 Ոսկի եմ ասում և ոչ քո գիտցած.
 Այսպիսի հըրաշք ոչով չի տեսած:
 Նա խօսել գիտէր ուղիղ մեր լեզուով,
 Աղաչանք արաւ, որ յետ ձըգեմ ծով.
 «ԹՌՆՂ,—ասեց,—խնդրեմ, թՌՂ ինձ անվտանգ,
 ՔԵԿ կը վըճարեմ թանկագին փըրկանք»:
 Բայց ես ոչ մի բան չըպահանջեցի,
 «Ոչինչ չեմ ուզում, գընա, ասեցի.
 Գընա քեզ համար դու ծիրանի ծով
 Ու այնտեղ ապրի աղատ, ապահով»...
 Պառաւը երբ որ այս բանը լըսեց՝
 ԽԵՂԱ ալեորին շատ յանդիմանեց,
 ԹԷ ի՞նչու ձըկնից փըրկանք չի ուզել,

Ու այնպէս ձըրի յետ ծովով է ձըգել:
 «ԱՇ յիմար անմիտ,—հայհոյեց ծերին,—
 Գոնէ կասէիր ոսկի ձըկնիկին.
 Մի նոր տաշտակ տուր, տանեմ իմ կընկան,
 Մերը կոտրած է, էլ չէ պէտքական»...
 Դարձաւ ծերունին, ծովի ափ գընաց,
 (Տեսաւ նա ծովը մեղմիկ ծածանուած).
 Բակսեց կանչել ոսկի ձըկնիկին.
 Չուկը լողալով՝ մօտեցաւ ծերին.
 «Ի՞նչ ես կամենում, ծերուկ»—հարցրեց.
 Ծերը գլուխ տուաւ ու պատասխանեց.
 «Ողորմած լինիս, թագուհի-Ձըկնիկ,
 Ինձ նախատում է իմ պառաւ կընիկ,
 Հանգիստ չի թողում խեղճ ալեորիս,
 Վըրաս մըթմըրթում, ուշունց է տալիս.
 Մի նոր տաշտակ է հարկաւոր իրան,
 Մերը կոտրած է, էլ չէ պէտքական»:
 Ոսկի ձըկնիկը ծերունուն խըզճաց,
 «Գընա, Տէր ընդ քեզ, մի տըխրիլ, ասաց.
 Թող քո պառաւը շատ չընեղանայ.
 Այսօր նա մի նոր տաշտակ կունենայ»...

3.

Յետ դարձաւ ծերը գէպի իր տընակ,
 Տեսաւ կընկայ մօտ մի սիրուն տաշտակ:
 Բայց կինը գոհ չէր. նա այս անզամ էլ
 Բակսեց ծերին սաստիկ նախատել.
 «Գընացիր, անխելք, տաշտակ ուզեցիր,
 Ի՞նչու մի ուրիշ բան չըխնդրեցիր.
 Յետ գընա շուտով, անմիտ անասուն,
 Գլուխ տուր ձըկնիկին և ուզիր մէկ տուն»...
 Ծերունին դարձաւ, ծովի ափ գընաց.
 (Այս անզամ տեսաւ ծովը պըղտորած).
 Բակսեց կանչել ոսկի ձըկնիկին.

Զուկը լողալով՝ մօտեցաւ ծերին.
 «Ի՞նչ ես կամենում, ծերուկ», — հարցըրեց.
 Ծերը գլուխ տուաւ ու պատասխանեց.
 «Ողորմած լինիս, Թագուհի-Զըկնիկ,
 ինձ շատ նախատեց իմ պառաւ կընիկ.
 Խեղճ ալեորիս հանգիստ չի թողնում,
 չիմա էլ կատղել, մէկ տուն է ուղում»...
 Ոսկի ձըկնիկը ծերունուն խըդաց.
 «Գընա, Տէր ընդ քեզ, մի արխրիլ, — ասաց.
 Թող լինի այսպէս՝ ինչպէս կամենաք.
 Դուք ձեր ցանկացած տունն էլ կունենաք»...
 Ծերը ետ դարձաւ կըրկին դէպի տուն՝
 էլ նա չըգըտաւ իր հին գետնատուն.
 Մի նոր տուն տեսաւ լուսամուտներով,
 կըտուրից հանած ծըխահաններով.
 Պատ ու վառարան մաքուր սուաղած,
 կըրով ու կաւճով սիպտակացըրած,
 վարպետի տաշած կաղնի տախտակից՝
 Մեծ դուռն էր կախած լայն բակի կողմից:
 Պատուհանի տակ կինն ուռած նըստել,
 իր չարութիւնից ուղում է տրաքել.
 Ի՞նչ անէծք ասես աշխարհքիս տակին՝
 Բոլորն էլ թափեց խեղճ մարդի գըլխին.
 Վերջը, երբ փոքր ինչ բարկութիւնն իջաւ,
 Մըռութը կախած՝ ծերունուն դարձաւ.
 «Անշնորհք ծերուկ, արնակ ուղեցիր,
 Երկի քո մէջ մեծ բան կարծեցիր.
 Յետ դարձիր, անխելք, յետ դարձիր, գընա,
 Ոսկի ձըկնիկին իմ կողմից ասա,
 Որ էլ չեմ ուղում մընալ գեղջուկ կին,
 Ուղում եմ լինել գերազնիւ տիկին»...

4.

Ծերունին դարձեալ ծովի ափ գընաց.
 (Այս անգամ տեսաւ ծովը վրդոված).
 Հսկսեց կանչել ոսկի ձըկնիկին,
 Զուկը լողալով՝ մօտեցաւ ծերին.
 «Ի՞նչ ես կամենում, ծերուկ», — հարցըրեց.
 Ծերը գլուխ տուաւ ու պատասխանեց.
 «Ողորմած լինիս, Թագուհի-Զըկնիկ,
 չանգիստ չի տալիս ինձ իմ չար կընիկ.
 Էլ չի կամենում մընալ գեղջուկ կին,
 Ուղում է լինել գերազնիւ տիկին:
 Զըգիտեմ, գըլուխն ի՞նչ քամի մըտաւ,
 Որ գեղջկութիւնից յանկարծ ձանձրացաւ»...
 Ոսկի ձըկնիկը ծերունուն խըդաց.
 «Գընա, Տէր ընդ քեզ, մի արխրիլ, — ասաց.
 Թող քո պառաւը հէնց այսօրուանից
 Ազատ համարուի իր գեղջկութիւնից»...
 Յետ դարձաւ ծերը, և ի՞նչ է տեսնում.
 (Կարծեց ցընորք է աչքին երևում).
 Մի տուն հոյակապ, վերնասրահում
 Պառաւն է կանգնած ինչպէս նոր խանում.
 Հազին սամուրէ բաճկոնակ սիրուն,
 Գըլխին դիպակէ չարդաթ գոյնոգոյն,
 Վիզը զարդարած մարգարիտներով,
 Մատներին մատնիք անգին քարերով.
 Մաշկներն, ինչպէս կաս-կարմիր որդան,
 Միւս հագուստներն էլ մետաքս պատուական:
 Ծառաներ ունի մի քանի տասնեակ,
 Բոլորն էլ իրան հըլու հըպատակ:
 Մարդուն որ տեսաւ՝ պառաւը կատղեց,
 Խեղճ ծառաներին ծեծել ըսկսեց.
 (Երկի ուղեց ցոյց տալ ծերուկին,
 Որ հիմա ինքն է գերազնիւ տիկին):

Հայնոյանք թափեց ամենքի վըրայ,
 Տեղի-անտեղի քօթակ անխընայ.
 Մէկի մազերից բըռնեց, քաշքշեց,
 Միւսին էլ մի լաւ ապահներ զարկեց:
 Ծերը մօտեցաւ դող-դող քայլերով,
 Ասաց պառաւին՝ խորը զլուխ տալով.
 «Բարձվ գերազնիւ խանում-խաթունիս,
 Հիմա խօմ գոհն ես, հանգիստ կը լինիս»...
 Պառաւ տիկինը այնպէս բըղաւեց,
 Որ խեղճ ծերունու լեղին պատառուեց.
 Նըրան հրամայեց, որ խսկոյն զընայ,
 Գոմն աւլէ, քերէ ու այնտեղ մընայ:

5.

Մէկ երկու շաբաթ հազիւ անց կացաւ,
 Պառաւ խանումը նորից կատղեցաւ.
 «Շուտ կանես, կերթաս,—ասում է մարդին,—
 Ու իմ կողմանէ կասես ձըկնիկին,
 Որ էլ չեմ ուզում տիկնութիւն անել,
 Ուզում եմ ազատ թագունի լինել»...
 Այս խոռքի վըրայ ծերունին սոսկաց,
 Եւ ազաշելով պառաւին ասաց.
 «Քըժալ ես, ա կնիկ, ես չեմ հասկանում,
 Արգեօք դու գիտես, ինչ ես ցանկանում.
 Մէկ նայիր վըրադ, շէնք ու շընորհքիդ,
 Լըրլըբան լեզուիդ, ծուռումուռ քայլքիդ.
 Ալիք բնչ ունիս թագունու վայել,
 Որ խելքիդ այդպէս քամի է փըչել.
 Արի, լսիր ինձ, մի անիլ այդպէս,
 Ամբողջ աշխարհքին կը ծիծաղեցնես»...
 Էլ չը համբերեց մեր պառաւ տատը
 Որ մարդն աւարտէր խօսքն ու խըրատը,
 Նա այնպէս դուսաց, այնպէս որոտաց,
 Որ ամբողջ տունը հիմնովին թընդաց.

«Ի՞նչպէս թէ այդպէս, յանդուգն ըստահակ»—
 Գոչեց ու զարկեց մի ուժգին ապահակ...
 «Համարձակում ես, զըռեհիկ անդէտ,
 Վիճել ինձ նըման ազնիւ տիկնոջ հետ.
 Թեղ հրամայում եմ պատուաւոր խօսքով,
 Որ խսկոյն զընաս քո յօժար կամքով,
 Եթէ ոչ ահա ժողովուած կըշտիդ՝
 Սըրանք կը տանեն՝ խըրիելով վըզիդ»:
 Ծերունին դարձեալ ծովի ափ զընաց,
 (Այս անդամ տեսաւ ծովը սեացած).
 Հոկուց կանչել ոսկի ձըկնիկին.
 Չուկը լողալով՝ մօտեցաւ ծերին.
 «Ի՞նչ ես կամենում, ծերուկ», — հարցըրեց:
 Ծերը զլուխ տուաւ ու պատասխանեց.
 «Ողորմած լինիս, թագուհի-Զըկնիկ,
 Էլի է կըուում իմ պառաւ կընիկ.
 Ներիբ ինձ, խընդրեմ, ես ամաչում եմ,
 Որ չար պառաւիս նոր ուզածն ասեմ.
 Բայց մը ջուրն ընկնեմ, հանգիստ չի թողում,
 Կըրակն է զըցել, այրում, խորովում.
 Գընա, ասում է, — ախ, նըզովեալ կին—
 Շուտ զընա, ասա, ոսկի ձըկնիկին,
 Որ էլ չեմ ուզում տիկնութիւն անել,
 Ուզում եմ ազատ թագունի լինել»...
 Ոսկի ձըկնիկը ծերունուն խըրճաց,
 «Գընա, Տէր ընդ քեզ, մի տըխրիլ — ասաց.
 Թող քո պառաւի ուզածը լինի,
 Թող զընայ դառնայ ազատ թագուհի»:

6.

Ո՞վ կարէ պատմել, թէ ծերն ինչ տեսաւ,
 Երբ ձըկան մօտից տուն վերադառն.
 Էլ ինչ տուն, ինչ բան. դու արքայական
 Ապարանք ասա, կամ հըսկայական

Մեծ-մեծ պալատներ շարիշար կանգնած՝
 Բարձըր բուրգերով չորս կողմը պատած.
 Շըքեղ դահլիճներ, անթիւ սենեակներ,
 Մարդ կը շըշկուէր, եթէ մէջն ընկնէր:
 Ծերը բարձրացաւ մարմար սանդուխքով,
 Մի դահլիճ մըտաւ խիստ պատկառանքով.
 Առջեր բացուեց մի նոր տեսարան,
 Երբ այստեղ զըտաւ իր պառաւ կընկան.
 Նա հիմա ազատ թագուհի դառած
 Առօք ու փառօք ճաշի է նըստած.
 Մեծ-մեծ իշխաններ, խաներ ու բէզեր
 Ոտի են կանգնած, որպէս ծառաներ,
 Թագուհու համար դինի են ածում.
 Եւ ահ ու գողով աչք-ունքին նայում:
 Շեմքում կանգնել են ահեղ դինուըներ,
 Ուսներին բռնած կացնաձև սըրեր.
 Մենակ պառաւն էր սեղանին բազմել,
 Ո՞վ կը յանդգնէր նըրա հետ նըստել.
 Բայց կերակուըներն այսքան շատ էին,
 Որ հարիւր հոգի կը կըշտացնէին.
 Եւ քանի տեսակ անծանօթ բաներ,
 Ի՞նչ անուշեղէն, ի՞նչ տապականներ...
 Պառաւն ուտում էր մեծ ախորժակով,
 Դինին դատարկում լիքը բաժակով.
 Վերջն էլ մեղրահաց կերաւ բաւական,
 Որ անուշացնի շըրթունքն ու բերան:
 Ծերն այս տեսնելով՝ մընաց շըփոթուած,
 Բնկաւ պառաւի ոտքերն ու ասաց.
 «Բարնվ քեզ, բարնվ, ահեղ թագուհի,
 Քո մեծութիւնը յաւիտեա՞ն լինի»:
 Այս խօսքից յետոյ կամաց շընչեց
 Ու փըսփըսալով պառաւին հարցրեց.
 «Հիմա որ բախտի վերին ծալրումն ես,
 Խօմ բաւակա՞ն ես, ա կնիկ, ի՞նչ կասես...»

Թագուհի դառած պառաւն այս անգամ
 Մարդի երեսին չընայեց անգամ.
 Հրաման մըռմըռաց նա քըթի տակին,
 Որ դուրս վըռնդեն մեր անկոչ հիւրին:
 Հէնց որ լըսուեցաւ թագուհու հրաման,
 Հնազանդ երեալ ամենքն ուզեցան.
 Մեծ-մեծ իշխաններ, խաներ ու բէզեր,
 Ինչպէս որսորդի արնախում շըներ,
 Խըփելով ծերի շըլինքակոթին՝
 Շըքեղ դահլիճից դուրս վըռնդեցին:
 Շեմքումը կանգնած պահապաններն էլ
 Գիշատիչ ճանկերն էին պատրաստել,
 Վըրայ վազեցին ամէնքը մէկէն
 Ու քիչ մընաց որ՝ խեղճին պըլոկեն:
 Ինչպէս որ եղաւ, մի կերպ դուրս պըրծաւ,
 Դուրսն էլ ամբոխի ծաղրի տակն ընկաւ,
 Որ կարծես նըրան լինէր ըսպասում,
 Անձրեկ տակին, ցեխոտ փողոցում,
 —«Այ թէ լաւ արին, ծերուկ դու անգէտ,
 Ում հետ ես մեկնում անճոռնի ոտներդ.
 Թող այդ քեզ համար լինի լաւ խըրատ,
 Որ էլ չըցանես մանդըր կտուահատ»...

7.

Այս դէպքից յետոյ շատ օրեր չանցան՝
 Պառաւի այծերն էլի մօտ եկան.
 Ուղարկում է նա իր իշխաններին,
 Որ զըտնեն բերեն արտաքսած ծերին,
 Եկաւ ծերունին: Պառաւն ըսկաեց.
 «Դու պէտք է գընաս ձկան մօտ,—ասեց.
 Կ'երթաս ու խորը գլուխ կը տաս նըրան,
 Ու իմ փափազը կը յայտնես իրան.
 Կ'ասես՝ չեմ ուզում մընալ թագուհի,
 Ուզում եմ լինել ծովի տիրուհի.»

Ուզում եմ Ովկեան ծովումը կենալ,
 Ոսկի ձըկնիկին ծառայ ունենալ,
 Որ իմ հրամանին միշտ պատրաստ լինի
 Ու ինչ ուզենամ իսկոյն կատարի»...
 «Պառաւին լրսեց ծերը լուռ ու մունջ,
 Առանց յայտնելու որևէ աթրառունջ:
 Ծերունին գարձեալ ծովի ափ գընաց.
 (Այս անգամ ծովը խիստ էր փոթորկուած,
 Փրփրած ալիքներ սարեր գառնալով
 Իրար են գարկուում ահեղ գոռալով)
 Ողբաձայն կանչեց ոսկի ձըկնիկին,
 Զուկը լողալով՝ մօտեցաւ ծերին.
 «Ի՞նչ ես կամենում, ծերուկ», — հարցրեց.
 Ծերը գլուխ տուաւ ու պատասխանեց.
 «Ողորմած լինիս, Թագուհի՝ Ձըկնիկ,
 Իսպառ գըժուել է իմ պառաւ կընիկ.
 Ի՞նչ անեմ արդեօք այդ նըզովեալին,
 Մինչեւ Երբ տանջուեմ քաւթառի ձեռին.
 Էլ չի կամենում թագուհի լինել,
 Այլ, ահս, անիծածն ինչ է միտք արել.
 Իշել է ուզում բոլոր ջըրերին
 Ու իշխանուհի գառնալ ծովերին.
 Ուզում է Ովկեան ծովումը կենալ,
 Ոսկի ձըկանըդ ծառայ ունենալ,
 Որ իր հրամանին միշտ պատրաստ կենաս,
 Ու ինչ ուզենայ շուտ կատարում տաս»...
 Ոսկի ձըկնիկը լուռ ու մունջ լրսեց,
 Բայց էլ ծերունուն չըպատասխանեց.
 Ձըրի երեսին շըրըմփեց պոչով,
 Ու անցաւ-գընաց դէպի խորին ծով...
 Շատ մընաց ծերը և շատ նայեցաւ,
 Բայց Ոսկի Ձըկնիկն էլ չերեցաւ.
 Դարձաւ գըլխակոր, որ յայտնէ կընկան,
 Թէ ինչ փորձանքի մէջ զըցեց իրան...»

Եւ գընաց տեսաւ... (բայց ի՞նչ տեսնի լաւ,
 Որ արդար լինի և ոչ անիբաւ) —
 Հին խուղի շեմքում պառաւը նըստած,
 Կոտրած տաշտակը՝ առաջն ընկած...»

Դ. Աղայեան

46.

ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐ ՈՒ ԱՌԱԿԱԽՈՐ ԽՕՍՔԵՐ

Գիշերը՝ աղա, ցերեկը՝ ծառայ:

(Աչք)

Խոտ է ուտում — կով չի,
 Զու է ածում — հաւ չի:

(Կրիա)

Անկրակ այրուում է, անջուր հանգչում է:

(Սիրտ)

Սպիտակ քար եմ, բայց քար չեմ,
 Արև անի՝ կը հալչեմ:

(Սառոց)

Ո՞ր թռչուններն երգելիս՝ իրանց անունն են տալիս:
 (Կու-կու, Ցու-ցու)

Դատարկ հասկն է գլուխ ցցում,
 Իսկ լիք հասկը կախ ցցում:

Խելքը՝ խելք է բնովի,
 Խելքը՝ խելք չի գնովի:

Ուզում եմ Ովկեան ծովումը կենալ,
 Ոսկի ձըկնիկին ծառայ ունենալ,
 Որ իմ հրամանին միշտ պատրաստ լինի
 Ու ի՞նչ ուզենամ՝ խկոյն կատարի»...
 «Պառաւին լըսեց ծերը լուռ ու մունջ,
 Առանց յայտնելու որևէ տըրտունջ:
 Ծերունին գարձեալ ծովի ափ գընաց.
 (Այս անգամ ծովը խիստ էր փոթորկուած,
 Փրփրած ալիքներ սարեր դառնալով՝
 Իրար են զարկւում ահեղ գոռալով):
 Ողբաձայն կանչեց ոսկի ձըկնիկին,
 Զուկը լողալով՝ մօտեցաւ ծերին.
 «Ի՞նչ ես կամենում, ծերուկ», — հարցրեց.
 Ծերը գլուխ տուաւ ու պատասխանեց.
 «Ողորմած լինիս, Թագուհի-Զըկնիկ,
 Իսպառ գըժուել է իմ պառաւ կընիկ.
 Ի՞նչ անեմ արդեօք այդ նըզովեալին,
 Մինչև երբ տանջուեմ քաւթառի ձեռին.
 Էլ չի կամենում թագուհի լինել,
 Այլ, տես, անիծածն ի՞նչ է միաք արել.
 Իշխել է ուզում բոլոր ջըրերին
 Ու իշխանուհի գառնալ ծովերին.
 Ուզում է Ովկեան ծովումը կենալ,
 Ոսկի ձըկանը ծառայ ունենալ,
 Որ իր հրամանին միշտ պատրաստ կենաս,
 Ու ի՞նչ ուզենայ՝ շուտ կատարում տաս»...
 Ոսկի ձըկնիկը լուռ ու մունջ լըսեց,
 Բայց էլ ծերունուն չըպատասխանեց.
 Զըրի երեսին շըրըմփեց պոչով,
 Ու անցաւ-գընաց գէպի խորին ծով:..
 Շատ մընաց ծերը և շատ նայեցաւ,
 Բայց Ոսկի Զըկնիկն էլ չերեեցաւ.
 Դարձաւ գըլխակոր, որ յայտնէ կընկան,
 Թէ ի՞նչ փորձանքի մէջ գըցեց իրան...

Եւ գընաց տեսաւ... (բայց ի՞նչ տեսնի լաւ,
 Որ արդար լինի և ոչ անիբաւ) —
 Հին խուղի շեմքում պառաւը նըստած,
 Կոտրած տաշտակը՝ առաջեն ընկած...
Դ. Աղալեան

46.

ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐ ՈՒ ԱՌԱԿԱԽՈՐ ԽՕՍՔԵՐ

Գիշերը՝ ազա, ցերեկը՝ ծառայ:
(Աշք)

Խոտ է ուտում—կով չի,
Զու է ածում—հաւ չի:
(Կրիայ)

Անկրակ այբուում է, անջուր հանգչում է:
(Սիրտ)

Սպիտակ քար եմ, բայց քար չեմ,
Արև անի՝ կը հալչեմ:
(Սառոյց)

Ո՞ր թոշուններն երգելիս՝ իրանց անունն են տալիս:
(Կու-կու, Յու-յու)

Դատարկ հասկն է գլուխ ցցում,
Իսկ լիք հասկը կախ ցցում:

Խելքը՝ խելք է բնովի,
Խելքը՝ խելք չի գնովի:

Ենչտեղ անխելք ու բըռի—
Մարգարիտ մի փըռի:
Ծաղկի գեղեցկացնողը իր անուշ հոսն է:

Որդին որ բռնումը ձուաձեղ եփի, մօր լաւութիւնից չի
պըճնի:

Մէկ կայ, որ հազար արժի, հազար կայ, որ մէկ չարժի:
Ով կարդայ, նա մարդ ա:

Ի՞նչ ուզում ես՝ արա, որդի,

Չար ընկերի հետ մի մընար.

Ի՞նչ ուզում ես՝ արա, որդի,

Լաւ ընկերից յետ մի մընար:

Վար ընկնողի ձեռքից բըռնես՝

Աստուած քո ձեռքից կը բըռի.

Վար ընկնողին ոտքով զարնես՝

Աստուած էլ գլուխու կը զարնի:

Մի լինիր գու ուրագի պէս—

Միշտ դէպի քեզ, միշտ դէպի քեզ.

Հապա եղիր սըզոցի պէս—

Մէկ դէպի քեզ, մէկ դէպի մեզ:

(աշխան առջև)

Հերսոն մուր և միւսուր մասաւ

Հերսոն մուր մասաւ զի բայ

Հերսոն մուր և մուր ուրացի

Հերսոն մուր և մուր ուրացի

Բայ հերսոն մուր ուրացի

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍՆ

(ԶՈՐՅՈՐԴ ՑԱՐԻ)

Բայ առաջ այս մարդու որագունորդ որին
այս անձեղ իր թշումներին նրանք էլ այս համար
Թագուցուր շնու մենքուր որութիւնու մից եր համար
այս այստ էր, որ իր արքութեան միջ որ յար մասունք էր
Թագուցում շետանի որաց համարաց նաևն ուր Թագուցուր
ուսուի ուսուարի ներացու բարձրաց անուրի, որ եթե ուսու
ութիւն որուաբան այսու բարձրաց էլ ու որին իննազի
է թուզի:

Թագուցուր թուզի թուրանուր և այս երես այսու թուզի
Ներդ որ տան միջ զամու մի թուզի (առաջանակ)՝
ներան մի ուր թուրանուր որ տիզու նաման, մի
նոր մասունք երես զամու և թուզու ամու իր կուսու և
զարծում, նու երես երեացի օրորու և պրեամբ նու
և աստիքի մայ զորես և փափ մար մի քայու աստիք
ու, քոր իր կուսի թուզը զարծու է կուսու զարծու:

Քաղաքական պար
Աստվածաշնչի մեջ կայ

Մագիս զերեցի ամենը հայութ

Արդին որ բանամբ ձևաձեղ եփի, մօր բառ թիւնից չէ
պրծնի:

Մէկ կայ որ հազար արժի, հազար լրու որ մէկ չորժի
Այ կորույ, հայ մարդ ու

Ինչ ապահ են արա պարի,
Զօր բնիքի են մի մատուր:

ՄԱՍԻՆ - ԾՈՒՅՈՒՆ

Հայ բնիքից յետ ո՞ւ մատուր:

(ՃԱՅՑ ՔՊՈՂՂՈՉ)

Այս բնիքունի ձեռքից յարուս
Կառուսած քո ձեռքից իւ բրուս
Այս բնիքունի ութուն պարուս
Ենունուն է յարուս իւ զարուս

Ի՞ն էլքու զու տրութի ունուս
Ելքու գետ անգ միջաւ զիսի յետ
Հայուս եղիք սրբութ ունուս
Մէկ ու զիսի մէկ ունուս տեղ

Դաշտանուն ու մասրուն մէ և ու պայ պատառոցոց
Անամբուն պատառոց անամբուն է միջնամ պատառոց
Համան անամբուն անամբուն անամբուն անամբուն
Երան մի բնիքուն պատառոց մէ ու նաման անամբուն
Գո ու մ յետուն է նոր մի պատառոց վետք պատառոց պատառոց
Ենան նորուն է չու ինանը Այ լաւանի նաման անամբուն ու
Եպրան պատառոց անամբուն ու անամբուն պատառոց զայ զայ

Դ Ռ Ո Ւ Ա Գ Ա.

Արդ է նաման լուս, Է նաման չեղ մի պատառոց
Արանի խոյնան և անուր պատառոց միջնամ է յանու մի ու ըմբ
Այ պատառոց նոր ու ունան անուր պատառոց պատառոց պատառոց
Է նաման է ընու մուս ու ունան պատառոց պատառոց պատառոց
Անուր պատառոց ու ունան պատառոց պատառոց պատառոց պատառոց
ԽՄԱՍՈՒՆ ԶՈՒՅՈՒՆ

Մի թագաւոր նստած էր իր գահի վրայ: Հեռաւնը երկ-
րից մի գեսպան եկաւ, առանց խօսելու, թագաւորի գահի
շուրջը մի կող գիծ քաշեց ու լուռ ու մունջ մի կողմը
քաշուեց, նստեց:

Թագաւորն այս մարդու արարմունքից ոչինչ չհասկա-
ցաւ: Կանչեց իր իշխաններին. նրանք էլ բան չհասկացան:
Թագաւորը շատ անախորժ գրութեան մէջ էր: Նրա համար
մեծ ամօթ էր, որ իր տէրութեան մէջ մի խելօք մարդ չէր
գտնուում գեսպանի արածն հասկանալու համար: Թագա-
ւորը սաստիկ նեղացած՝ յայտնեց ամենքին, որ եթէ գես-
պանին պատասխան տուող չգտնուի, էլ ոչ ոքին կենդանի
չի թողնի:

Թագաւորի կողմից խնդրակներ ման եկան ամեն կողմը:
Վերջը՝ մի տան մէջ գտան մի ջուհակ (ոստայնանկ):
Տեսնում են՝ այդ ջուհակը մի տեղում նստած, միե-
նոյն ժամանակ երեք գործ է շինում.—համ իր կտաւն է
գործում, համ երկու երեխայի օրօրոցն է օրօրում, համ
էլ տանիքի վրայ ցորեն է փոել, մօտը մի ճիպոտ տնկել
ու, երբ իր կտաւի թելերը շարժում է՝ կտաւը գործում

է, օրօրոցներն օրօրւում են, այն ձիպոտն էլ շարժուելով՝
տանիքի ծտերին է փախցնում, ցորենից հեռացնում:

Նրանք այս բանի վրայ շատ են զարմանում: Յետոյ
ջուլհակին պատմում են, թէ հեռաւոր երկրից մի մարդ է
եկել, թագաւորի գանի շուրջը մի գիծ է քաշել և ոչ ոք
չի կարողանում իմանայ, թէ դրանով ինչ է ուզում ասել:
Վեր կաց, գնանք: Եթէ դու նրա միտքն իմանաս՝ թագաւորը
քեզ մեծ պարզեներ կը տայ:

Ջուլհակը մի քիչ մտածում է, յետոյ առնում է երկու
վէգ ու մի վառեկ և հետները գնում: Համելով թագաւորի
մօտ՝ վէգերն հանում է ու ձգում դեսպանի առաջը: Դեսպանը գրապանից մի բուռն կորեկ է հանում ու
շաղ տալիս գետին: Ջուլհակը բաց է թողնում վառեկը,
որն իսկոյն սկսում է կտցահարել կորեկը:

Այս բանը տեսնելով գետանը հողաթափներն հագնում
է ու սուս ու փուս դուրս գնում:

Թագաւորը ջուլհակին հարցնում է, թէ՝ «Այդ ի՞նչ արիր»: Ջուլհակը պատասխանում է. «Այդ մարդը եկել էր
ասելու, թէ՝ «Մեր թագաւորը գալիս է քեզ հետ պատերազմելու, քո երկրին տիրելու. հնազանդում ես, թէ կոռումի
ես ուզում պատասխանել»:

Ես նրա առաջը վէգեր ձգելով՝ հասկացրի, թէ՝ «Դուք
մեզ համար երեխաներ էք, գնացէք, վէգ խաղացէք. դուք
միշտ էք, որ մեր դէմ դուրս գաք»: Նա իր շաղ սուած կորեկով
ուզեց հասկացնել, թէ՝ «Մեր զօրքն անթիւ, անհամար
է. դուք ի՞նչ կարող էք անել»: Եւ երբ ես վառեկս բաց
թողի ու նրա բոլոր կորեկը կերաւ՝ դրանով պատասխանեցի, թէ՝ «Մեր մի մարդը ձեր հազար մարդուն կը ջարդի. գնա, պատմիր քո թագաւորին»:

Թագաւորն այս բացատրութիւնը լսելով՝ մեծամեծ պարզեներ տուեց ջուլհակին և ուզեց նրան վէգիրի պաշտօն
տայ: Բայց ջուլհակը պարզեների մի մասով բաւականացաւ ու թագաւորին ասաց. «Ոչ, թագաւոր, թնդ ջուլհակ միամ, միայն մի խնդիրք ունեմ,—չմոռանաս, որ

հասարակ արհեստաւորի մէջ էլ կը գըտնուի այնպիսին,
որ քո նեղ օրում քեզ պէտք կը գայ: Վէղիրներիդ ի՞նչ
պատիւներ ուզում ես տուր, միայն ջուլհակին ու կօշկակարին էլ մարդու տեղ դի՛ք»:

Գ. Սրուանծտեան

2.

Ա. Տ Ի Կ

Լոյսը բացւում է. շուտ արար գընամ,
Պատուեմ սուր խոփով ես կուրծքը հողի.
Իմ սիրուն հատիկ, քեզ նրան պահ տամ
Մինչև օրերը ամրան արկի:

Թաղեմ քեզ, հատիկ, և դարդը քեզ հետ.
Թէ Աստուած ուզեց, դու կանաչեցիր,
Թնդ դարդը մեռնի գետնի տակ անհետ,
Դու ինձ միսիթար կոկին տուն դարձիր:

Եւ ջերմ աղօթքով Տիրամօր առջեւ
Ես մոմ կը վառեմ, ես խունկ կը ծլխեմ,
Որ քեզ պարզեմի մի տոատ անձրեւ,
Որ քեզ միշտ սիրով նայէ խնդադէմ:

Բայց թէ այդ շնորհին մեղքերիս համար
Արժանի չլինիմ, ծով կը դարձնեմ
Ես տաք քրտինքը ճակտիս արևառ,
Որ քեզ, իմ հատիկ, ծարաւ չըթողնեմ:

Ծլիր, կանաչիր, ոսկէ սաւանով
Ծածկիր իմ արտը ողջ ալէծածան,
Նոր այն ժամանակ անուշ շրջիւնով
Տուր ջարդուած սըրտիս մի քուն հանգստեան:

Յ. Ցովհաննիսեան

միաժամանակ վայսուց 3.
չեմ բայց պարզ ուշադիր առաջ բայց առաջ ու ու
ուժամբ ու միշտ Առիշն ՈՒ ՄՈՒԿԸ

Առիւծն իր փառաւոր ճաշը վերջացրած՝ պառկել էր ան-
տառում, խիտ թփերի մէջ ու հանգստանում էր: Այդ մի-
ջոցին, որտեղից էր, մի մուկ դուրս պրծաւ, մօտ վաղեց
առիւծին ու սիրտ անելով՝ կամաց-կամաց բարձրացաւ
մէջքին. սկսեց մարմի ամեն տեղերը պտտել, մինչև ան-
գամ ականջն էլ մտաւ: Առիւծը մի թեթև անհանգստու-
թիւն զգաց. թաթը տարաւ դէպի զլուխն ու իսկայն բըռ-
նեց այդ չնչին արարածին: Բայց տեսնելով որ իր վեհանձ-
նութեանը չի վայելում պատժել ձեռքն ընկած ամեն մի
տկար արարածին՝ առիւծը բաց թողեց մկանը:

Մի քանի օր անցած, առիւծը թակարդ է ընկնում: Ոտ-
քեցի սաստիկ սեղմուելուց սկսում է այնպէս գոռալ ու
մոնչալ, որ լսողներն ահ ու դողից սիրտ չեն անում՝ թէ
մօտենան:

Առիւծի զարհուրելի ճայնը հասնում է և մկան ականջը:
Նա մօտ է վազում և լինչ տեսնի իր վեհանձն բարե-
րարը թակարդի մէջ է: Յիշում է առիւծի երախտիքն ու
միտք է անում մի կերպ օգնութեան հասնել նրա այդ
նեղ վիճակին: Նա աննկատելի ներս է սողում թակարդը
տեղաւորած փոսի մէջ ու սկսում է թակարդի բոլոր կաշուէ
փոկերը կուծուել: Այդպիսով նա կենդանիների նզօր թա-
գաւորին ազատում է կապանքներից:

Առիւծը տեսնելով մկան արած բարիքը, բացականչում է.
— Ճշմարիտ որ, ամենափոքրիկ արարածն էլ իր տեղին
մէծ է ու անգնահատելի:

Ժողովրդական

4. մասնաւութիւն մասն առաջ առաջ առաջ առաջ առաջ
առաջ առաջ առաջ առաջ առաջ առաջ առաջ առաջ առաջ
ՎԵՀԱՆՁՆՈՒԹԻՒՆ

Մի շատ հարուստ մարդ, ծերութեան օրերում ուզեց
իր ունեցած կայքը բաժանել իր երեք որդոց մէջ: Ամեն
մէկին իր մասը տալուց յետոյ, նա ասաց. «Մոռմ է էլլ
մի շատ թանկագին գոհար. այդ գոհարը կըտամ նրան, ով
ձեզանից մի վեհանձնութիւն կ'անի: Իսկ դրա համար ես
ձեզ երեք ամիս ժամանակ եմ տալիս»:

Շուտով որդիքը դէս ու դէն գնացին. մաս եկան զա-
նազան քաղաքներ ու, երբ հօր ուզածը կատարեցին,
կրկին վերադառն տուն: Նրանք սկսեցին պատմել հօրը
իրանց արած վեհանձնութիւնները:

Անգրանիկ որդին ասաց.

— Իմ ճանապարհորդութեան ժամանակ՝ մի օտարական
յանձնեց ինձ իր բոլոր հարստութիւնը և, թէպէտ նա ին-
ձանից ոչ մի ստացական չառաւ, բայց ես կրկին հաւա-
տարմութեամբ վերադարձի նրան այն՝ ինչ որ ստացել էի:

— Որդեակ, պատասխանեց հայրը, դու արել ես այն,
ինչ որ պէտք է անէիր. ով էլ ուրիշ տեսակ վարուէր՝
խաբեբայ կը լինէր, որովհետեւ ազնիւ լինելը մարդուս հա-
մար մի պարտականութիւն է: Քո արածում վեհանձնու-
թիւն չկայ:

— Յետոյ խօսեց միջակ որդին.

— Իմ ճանապարհորդութեան ժամանակ՝ մէկ օր ես անց
էի կենում լճի եղերքով. մի փոքրիկ երեխայ քիչ էր մը-
նում ջուրն ընկնի: Իսկոյն օգնութեան հասայ ու չխնա-
յելով իմ կեանքը՝ ազատեցի նրան:

— Ծնորհաւորնեմ եմ, — ասաց հայրը: — Բայց գարձեալ
այդ գործի մէջ վեհանձնութիւն չկայ: Քո արածը կարեկ-
ցութիւն է, բարեգործութիւն է, բայց ոչ վեհանձնութիւն:

Վեհապէս խօսեց կրտսեր որդին.

— Մէկ օր ես իմ թշնամուն տեսայ խորը քնած մի ան-

դունդի ծայրին։ Ամենաթեթև քամին անգամ կարող էր նրան անդունդը գլորել, բայց ևս նրան զարթեցը մեղմ ձայնով ու ապատեցի վտանգից։

—Օ՛, որդեակս,—բացականչեց բարի ծերունին, —գունը քննն է։ Ահա վեհանձնութիւն—լաւութիւն անել թշնամուն, մահից ազատել թշնամուն։

5

Ա ւ գ ը ս գ ե ս
(Սիրոկօմլիից)

Երբէք մէկին չեմ նախանձում ես աշխարհի երեսին,
Միայն, գրագէտ դուք պարզներ, նախանձում եմ ձեր
բախտին:
Այս, զթացէք գեղջուկ որբիս, կարդալ-զըրել սովորցրէք.
Տուէք մի թերթ ինձ ձերմակ թուղթ, մի փետուրէ գրիչ
տուէք.

Զեզ կըպատմեմ—ինչ ցնորքներ, ինչ մտքեր կան իմ գըլ-
խում, Մի ողջ աշխարհ ձեզ ցոյց կըտամ այդ աննման պատկե-
ռում.

Այժմ անհետ չըքանում են բոլոր իմ քաղցր երազներ. ես անդրագէտ, ես անուս եմ... Սովորցըթէք, պարոններ:

Ազնիւ գործ է՝ թէ մարդ գըրել իր խօսքերը կարենայ,
Բոլորն՝ ինչ որ մտածում է, բոլորն՝ ինչ որ գլուխը գայ.
Գըրչով պատմի այն ամենը, ինչ դիզուել է իր սըրտում,
Ճշմարտութիւն միշտ քարոզի, բարի գործի մեծութիւն։
Այդ դու, սակ իմ ճերմակթեիկ, քեզ տուել եմ կերակուր,

Քեզ սիրել եմ—վորխարէնը թէկիցդ ինձ մի գըրիչ տնւը.
Սիրուն գու սագ, տնւը, ինզրում եմ, ինձ թուշելու զոյգ
թէքը...
Ես անզրագէտ, ես անուս եմ... Սովորցըրէք, պարոննէր:

Յ. Յովհաննիսեան

մասն ու պար դժվար ու արդիակ զար պահե
ու շատի մասն Առն Հայութիաց պահապեսութիւնը յառաջը

6.

ԱՐԾԻՒՆ ՈՒ ՄԵՂՈՒՆ

— Նախանձելի չէ քո վիճակը, ասեց արծիւը մեղուին: —
Բոլոր կեանքդ աշխատում ես, բայց ոչ ոք քեզ չի ճա-
նաչում, որովհետեւ գուք մեղուներդ հազար հոգով էք աշ-
խատում մէկ խորիսի շինելու համար: Ո՞վ կարող է որո-
շել, թէ ո՞րտեղ է քո շինածը:

— Ի՞նչ կարիք կայ որոշելու, պատասխանեց մեղուն: —
Ի՞նչ մես, որ ինձ չեն ճանաչի: Բաւական է և այն, որ
կը ճանաչեն ու կը միրեն մեր շինած մեղրը: Եւ ես ինձ
բախտաւոր եմ զգում նրանով, որ խորիսխների մէջ կայ
իմ շինած մեղրի կաթիլը:

— Ուրեմն քեզ թուալի չէ իմ ու քո վիճակի տարբերութիւնը, ասեց արծիւր: — Հէնց որ վեր եմ բարձրանում և պտտւում կապոյտ երկնակամարի տակ, գետնի երեսից ինձ է նայում ու ճանաչում ամեն արարած: Թէ գաղաններ, թէ թոշուններ՝ իրանք թագնուած՝ աչքերը ինձանից չեն հեռացնում: Ահա թէ ինչպէս են ճանաչում ինձ՝ մեծերից սկսած մինչև փոքրերը:

— Ճանաչնում են, այն, ճանաչնում, որովհետեւ վախենում են քեզանից, ասեց մեղուն: — Ես երբէք չէի ուղենայ, որ ինձ ալդաէս ճանաչեն:

ՇՈՂԻԿՆ ՈՒ ՊԵԾԻԿԻ

Զմռան տաք իրիկուն էր: Զիւն էր գալի ու ձիւնի սպիտակ փաթիլներն ընկնում էին մութ գետնի վրայ ու քնում:

Բոլոր փաթիլներն ամպերից իջան ու անուշ քնեցին տաք գետնի վրայ, միայն երկու փաթիլ ուշացել էին. նըրանք էլ օդի մէջ խաղ անելով, գալիս էին ցած: Քոյր ու եղբայր էին. քրոջ անունը Շողիկ էր, և զորը՝ Պէծիկ:

Օդի մէջ պտառելիս՝ մի պատուհան տեսան, որից պայծառ լոյս էր երեսում:

—Վայ, ի՞նչ լաւ լոյս է, ասաւ Շողիկն ու թռաւ դէպի լոյսը. գնաց թառեց պատուհանի երկաթի վրայ:

—Վայ, ի՞նչ լաւ լոյս է, ասաւ Պէծիկն ու ինքն էլ մօտեցաւ, որ նստի երկաթի վրայ, բայց ոտքը սահեց, ընկաւ ցած մի թաց քարի վրայ:

—Շողիկ, ընկայ, ասաւ Պէծիկը:

—Դէ վեր բարձրացիր, ասաւ Շողիկը վերեից: Պէծիկն ուղեց թէ վեր թռչի՝ չկարողացաւ:

—Չեմ կարող, ասաւ: —Արի մօտս, Շողիկ:

—Հիմա կը գամ, իսկոյն, սպասիր տեսնեմ՝ ի՞նչ են անում, պատասխանեց Շողիկն ու նայեց պատուհանից ներս: Ներսը մի սիրուն տօնածառ կար՝ կանաչ ճիւղերը վառած մոմերով ու խաղալիքներով զարդարած: Մոմերը վառւում, պէծին էին տալիս ու փայլուն բոցերը ուրախուրախ շարժում դէս ու դէն: Սենեակը լիքը երեխայ էր: Ամենքն ուրախ պար բռնած ծառի չորս կողմը պատռում ու երգում էին. երգելիս էլ՝ երբ զուարթ աչքերը զցում էին ծառից կախած ճիւղին, արջերին ու ոսկեզօծ ընկուզներին՝ աւելի էին ուրախանում, ծափ տալի, թռչկոտում:

Շողիկն աչքերը շլացան, երբ նայեց տօնածառին: —Ի՞նչ լաւ տօնածառ է, մըմնջաց նա: —Ես էլ եմ ուղում տեսնեմ, ձայն տուաւ Պէծիկը և էլի փորձեց վեր կենայ՝ չկարողացաւ:

—Շողիկ, արի:

—Հիմա կը գամ, Պէծիկ ջան, հիմա:

—Դէ շնուր, արի:

—Այ հիմա, հիմա, ասում էր Շողիկն ու նայում ներս:

Պէծիկը թաց, մութ քարի վրայ գողում էր ու սպասում քրոջը:

Բայց Շողիկն այնքան տարուել էր տօնածառով, որ էլ մոռացել էր Պէծիկին: «Ի՞նչ լաւ բան է տօնածառը», մտածում էր նա:

Այդ միջոցին երեխաները երգեցին նոր տարուայ երգը:

Շողիկն էլ ուղեց նըրանց հետ երգի՝ չկարողացաւ. միայն պայծառ շողողաց ու ծիծաղեց:

—Շողիկ, դէ արի, ձայն տուաւ Պէծիկը լացակումած:

Բայց Շողիկն էլ չէր լսում: Շուտով երեխաներին միրգ բաժանեցին և վերջն էլ վիճակ զցեցին. տօնածառի ճիւղը, արջերը, նապաստակը ու ոսկեզօծ ընկուզները տուին երեխաներին:

—Օխայ, օխայ, գոչում էին երեխաներն ու ուրախուրախ ծափ տալի:

Շողիկն էլ ուղում էր ասի՝ «օխայ»՝ չկարողացաւ. միայն ուրախ ժպաաց:

Շուտով տօնածառը վերջացաւ և երեխաներն իրանց խաղալիքների հետ ցըռուցին տները: Յանկարծ Շողիկն յիշեց Պէծիկին...

—Պէծիկ, ձայն տուաւ անհանգիստ:

Բայց Պէծիկն էլ չկար...

Ցած նայեց Շողիկը, տեսաւ, որ Պէծիկը թաց քարի վրայ այնքան լացել էր, որ հալուել կորել էր:

«Վայ» արաւ Շողիկը, ծնկին տուաւ ու տիրեցմաց
պատուհանի երկաթին մենակ նստած: Տիրեց, տիրեց,
վերջն էլ աչքերից արցունք վազեց ու նա էլ հալուեց,
ընկաւ թաց քարի վրայ՝ կորաւ...

Դ. Դեմիքեան

8.

ԲԱՐՏԻՆ ՈՒ ՎԱԶԸ

Բարտին սկսեց վազին նախատել,
եւ ասաց նըրան. «Ի՞նչ եռ կուչ եկել,
ես որ չըլինեմ, շուտք չըտամ քեզ,
եթէ ինձանով չըգաս փաթաթուես,
Ասա ինձ, էլ ով քեզ կըպահպանի,
Բարակ քամին էլ հոգիդ կը հանի:
Ինձ մտիկ արա, տես՝ ուլ եմ հասել,
Ինձ պէս բարձրացիր, որ ամեն մարդ էլ
Քեզ մտիկ տալիս՝ ապշի, հիանայ.
Շըլինք ծըսողին ով պատիւ կը տայ:
Ի՞նչ եմ անում ես քո ցիցն ու ձողին,
Քեզ պէս չեմ դողում քամու առաջին.
Մէկ տուալս գեանում, միւսը՝ երկնքում,
Ոչ մի վտանգից ես չեմ վախենում:
Բայց ձեր խեղճ ցեղը հէնց դուրս է գալիս,
Գետնին է կըպչում մէկ հով դիպչելիս.
Ավոսս այն պտուղն, որ դուք էք տալիս,
Այդ ինձ էր վայել, այս բարձըր ծայրիս:
Խեղճ վազը բարտուն շատ ականջ դրաւ,
Եւ վերջը մի կարճ պատասխան տուաւ.
—Քո բարձըր ծայրին, ես էլ եմ կարծում,
Խաղող էր վայել, ով է բան ասում.
Բայց այն ժամանակ ցըցուած ձղները,

Կախ կը զցէիր մինչև ոտքերըդ.
Պըտղատու ծառը խոնարհ է լինում,
Նա երբէք քեզ պէս չի գոռողանում.
Դու մըխիթարուիր քո ձիգ հասակով,
Մենք էլ մեր պըտղի քաղցըը ճաշակով:

Հ. Աբովեան

9.

ԵՐԿՈՒ ՀԱՐՈՒՍ

(Տուրգենեվից)

Երբ իմ առաջ գովաբանում են հարուստ Ռոտշիլդին,
որ իր ահազին եկամուտներից ամբողջ հազարներ է բա-
ժին հանում մանուկների կըթութեան, հիւանդների բժշ-
կութեան և անկեալների ինսամակալութեան գործին, — ես
նըրան գովում եմ և զգացւում:

Սակայն և գովելով, և զգացուելով՝ ես չեմ կարող չըյե-
շել գիւղական մի աղքատ ընտանիք, որն իր խարխուլ բը-
նում ապաստան տուաւ իր մի մօտ ազգականի որբ մնա-
ցած աղջկան:

—Կատեային որ մեր տունն առնենք, — ասում էր գիւ-
ղացու կինը, — մեր վերջին կոպէկն էլ նրա վրայ կըծախսուի.
Խսկի աղի փող էլ չի մնայ, որ աղ առնենք, կերակրին
անենք...

—Է՞ս, ոչինչ... մենք էլ կերակուրն առանց աղի կու-
տենք, — պատասխանեց մարդը:

Ուր այս գիւղացին, ուր Ռոտշիլդը:

Ալ, Ծատուրեան

ԱՐԾԻՒՆ ՈՒ ԿԱՂՆԻՆ

Եղաւ՝ մի անգամ անտառի միջին
Արծիւն ու կաղնին այսպէս վիճեցին,
թէ որն իրանցից շատ տարի կ'ապրի,
Որն է դիմացկուն ու պինդ աւելի:
Արծիւն ասաւ՝ ես. կաղնին էլ թէ՝ ես:
Երկուսն էլ յամառ ու հըպարտ այսպէս՝
Մեծ-մեծ պարծեցան, սասափկ վիճեցին,
Վերջը այս տեսակ պայման կապեցին:
Ժամանակ զըրին հինգնարիւր տարի
Արքան հաւքերի, արքան անտառի,
Որ թէ որոշած այն օրին հասնեն,
Այն օրը մին էլ գան իրար տեսնեն:
Ու Արծիւն իսկոյն կաղնուց հեռացաւ,
Հըզօր թերը շարժեց, վերացաւ
Դէպի ամպերը, դէպի ժայռերը,
Ուր անց է կացնում իր լաւ օրերը:
Կաղնին էլ վըռեց ճիւղերն երկաթի,
Խոր ու խոր մըբսեց ճանկերն արմատի,
Եւ այնպէս հուժկու կանգնեց անտառում,
Որ վայր չընկնի էլ հինգնարիւր տարում:
Դարեր անց կացան: Եւ ահա մի օր
Արծիւր եկաւ ծերացած, անզօր,
Ծըւոցը կըտրած, տըկար, հետով,
Թոյլ-թոյլ թերը հազիւ քաշ տալով՝
Տեղ հասաւ մի կերպ, նայեց դէս ու դէն,
Տեսաւ, որ կաղնին ընկել էր արդէն.
Ճիւղերը թէև դեռ թարմ ու կանաչ,
Ընկել էր ահեղ փոթորկի առաջ:
— Հէյ, կանչեց. գոռող, պարծենկոտ կաղնի,
Դէ լաւ ճանաչիր ինձ ու քեզ հիմի.

մա ու Հինգնարիւր տարուց մի ժամ էլ գեռ կայ, ամ
պահ զըն Ընկել ես, արդէն, անկոտրում հըսկայ դպրաց
շառ ամ Հինգնարիւր տարի ապրել եմ կանգնած, ուր
Սիդքան էլ կ'ապրեմ դեռ այսպէս թիկնած, ունի
Ծինչել լըրանայ մի հազար տարին:
Պատասխան տուաւ ընկած վիթխարին Յանչուցը
զին կամ զին նախաւ յուղաց հայ ու նախաւ Յովի. Թումաննան
մաս մեռուսնի մանուր այս թէ յիշոյք ամ ամսար
մը մա միջիր պայտու ընդ ին ամք ամյամերձն ընծ
11. ուրբան. չկ տուժի միջեր

Չ նախար ամ նախաւ մայ տայ սուսու ու Ա
Տ Ա Տ Ս Ս
Ու զին նախ զինդի զինդի լոր ով սկսած չի տայ
Տատին անունը Շուշան էր. նա ժառանգել էր իր մօր
անունը: Զնայելով պատկառելի տարիքին, ամենելին չէր
կորցրել իր ժրութիւնը, առաւօտից մինչեւ երեկոյ անդա-
գար շարժման մէջ էր: Նրա ամենատեսաչքերից բան չէր
թագնուի, նրա անհանգիստ լեզուն ամեն բանի մասին հա-
շիւ կը պահանջէր: Մինչեւ մահը նա շթողեց ձեռքից իր
կառավարութեան գաւազանը՝ ահազին փայտէ շերեփը, ո-
րով նա ընթրիքի ու ճաշի ժամանակ կերակուր էր բա-
ժանում: Մինչեւ իր մահը մեր տան թէ մեծը, թէ փոքրը
ամենայն խոնարհութեամբ հապատակւում էինք նրան:

Տատր շատ աշխատանէր կին էր: Յիշում եմ, գիշերուայ
մեծ մասը, նստած այծի մորթու վրայ, դնում էր իր առ-
ջև մանելու մեքենան և ոսկրացած ձեռքով պտոյտ էր
տալիս ճախարակի թերը, բամբակից թել էր պատրաստում:
Եւ ճիմա էլ ինձ թւում է, թէ դեռ զարկում է ականջիս
պառաւի տխուր ու դողդոջուն երգը, ինձ թւում է թէ
դեռ լսում եմ նահապետական մեքենայի խուլ ճոճոցը:

Մեր գիւղում տատն համարւում էր խելացի պառանե-
րից մէկը, իսկ իր տան մէջ նրա իմաստութիւնը համում
էր անսխալականութեան: Ճշմարիտն ասած՝ ես էլ փոքր
ժամանակս հիացած էի նրա իմաստութիւնով: Նա ամեն
բան գիտէր:

Նա գիտէր՝ թէ ինչ նշանակութիւն ունեն այս ու այն
երազները։ Նա գիտէր՝ թէ ինչ խորհուրդ ունի, երբ մար-
դու մարմնի այս կամ այն մասը «խաղում է»։ Նա հաս-
կանում էր կաչաղակի լեզուն ու բացատրում էր, թէ ինչ
լաւ լուրեր է բերում նա, երբ մեր պատի վրայ նստած
կը չեցէ՛ է, նա լսել չէր կարող բուի չարագուշակ ձայնը
և պատուիրում էր ինձ քարով սպանեմ, երբ նստի մեր
պատին։ Նա գիտէր՝ թէ ինչու Սողոմոն իմաստունն անի-
ծեց ճնձուկներին, կամ ով դրեց յոպովի գլխին այն գե-
ղեցիկ փետուրէ սանդրը։

Այս, տատս շատ բան էր իմանում։ Նա պատմում էր
ինձ, թէ ինչպէս կը գայ աշխարհի վերջը կամ երբ կը
յայտնուի նեռը, նա ասում էր, թէ անիծուած նեռը կը
գայ մի ահազին էշի վրայ նստած, թէ նրա աւանակի ա-
կանջներն այնքան երկար կը լինեն, որ մի ականջի ծայրը
կը հասնի մինչև արևմուտք, իսկ միւսինը՝ մինչև արևելք։
Նա ասում էր, թէ այն ժամանակ կը յայտնուեն «աջուջ-
մաջուջները», թէ նրանք այնքան փոքրիկ թզուկներ են,
որ իմ կօշիկները կարող են նրանց համար բնակարան
դառնան։

Բայց ես աւելի սիրում էի տատիս հեքիաթները, որ
գիշերները պատմում էր, Երբեմն, մի անգամ սկսած հե-
քիաթն հազիւ վերջացնում էր մի ամբողջ շաբաթ։ Այս,
ինչ լաւ պատմում էր նա. ես միշտ ուրախութեամբ էի
լսում։ Բայց Երբ պատմում էր դեերի, սատանաների, գը-
րողների ու դժոխքի մասին՝ ես սարսափում էի, և աւելի
շատ էի վախենում, երբ խօսում էր մեռելների մասին։

Իսկ երբ տատս ինքը մեռաւ, նրանից չէի վախենում,
նա այնպէս հանգիստ պառկած էր դագաղի մէջ, կարծես
քնած լինէր, Նըա դէմքն էլի այնպէս բարի էր, ինչպէս
միշտ, Երբ նրան թաղեցին, ես շատ լաց եղայ։

Բաֆֆի

12.

Գ Ի Ի Ղ Ի Ժ Ա Մ Ղ

Տան-դօ... Նազլու, վեր կաց,
Արեն արդէն մայր է մըտնում։

Տես, Խաթունն էլ գործը պըրծած՝
Փողոցումն է, ժամ է շտապում։

Ժամը տուին՝ տան-դօ, տան-դօ։

Տէր, փառքը շատ, տան-դօ, տան-դօ...

Շուտով նախիրն հանդից կը գայ,
Գընանք, որ շուտ էլի յետ գանք,
Կովը կըթենք, թը ո-թը ու կաթ տայ,
Կովը կըթենք, մեր ցաւն հոգանք։

Այս, Նազլու ջան, չես իմանում՝
Էգուց էլի աղան կը գայ.
Նըրա սիրաը միշտ անկըշտում,
Էլ ամպի պէս պիտի գոռայ։

«Շուտով, Գրիգոր, փողերը բեր։
Էլի չը կայ. Կովը հանի...»

Այս, Նազլու ջան, այն ինչ բան էր,
Միտդ է հերու... Տէր, դու փըրկի։

Հայրիկդ արդէն գընացել է,
Որ փող ճարի. Երբ պիտի գայ,
Տեսնենք մէկը խըզճացել է...»

Այս, սկ օրը Տէրն էլ չը տայ։

Շուտով, Նազլու, գընանք ժամը,
Աղօթք անենք. Քո ճայնն Աստուած

Շուտ կը լըսի այս անգամը,
Մեզ չի թողնի անկով, անհաց...»

Բարի մարդիկ միշտ կը լինեն,
 Հայրիկդ հետը փող կը բերի,
 Փողը կը տանք չար աղային,
 Որ մեր հորթուկն էլ չը խըլի...
 Տան-դօ, տան-դօ... Նազիւ, գրնանք.
 Արևն արդէն մայր է մըտնում,
 Էդուց տեսնենք, որ վեր կենանք, ի
 ինչ նոր բարեւ է մեզ ծագում...
 Ժամը տուին՝ տան-դօ, տան-դօ...
 Տէր, փառքը շատ. տան-դօ, տան-դօ...

Յովհաննիսին

13.

ՀԱՅ Դ Ի Պ Ո Ւ Խ Մ

Շուտով մի տարի էր լինելու, որ Միկակը թողել էր
 գիւղը, եկել էր քաղաք ու ծառայ էր դարձել մի ընտա-
 նիքի մէջ: Նրա ամենամեծ ուրախութիւնն այն էր, որ եր-
 բեմն բազարում տեսնում էր իրանց գիւղացիներից մի քա-
 նիսին, երբ քան էին բերում քաղաք ծախելու:

Մի անգամ անցնում էր Տրապարակի միջով՝ յանկարծ
 տեսաւ իր ընկերներից մէկին:

—Ա՛ Թուն, ա Թուն, —կանչեց նա, —իր վաղեմի ընկե-
 րոջ մօտ վազելով:

Ընկերը չճանաչեց: Միկակը քաշ ընկաւ նրա վզից ու
 սկսեց համբուրել:

—Խաչը վկայ, չճանաչեցի, —խօսեց գիւղացի տղան:—
 Էտ ինչ շոր ես հագել...

—Ինչ անեմ, Թունի ջան, քաքաքումն էսպէս են հագ-
 ցընում: Դու էն ասա, Թունի ջան, մեր տունն խկի գնում
 էիր, մերոնք մնց են, ինչ են անում երեխերքը...

Եւ առանց պատասխանի սպասելու, շարունակեց.
 —Դու ինչ էիր շինում, Թունի ջան: Ամեն օր լողանում
 էիր գետումը. ախ, էստեղ իսկի ժամանակ չեն տալի,
 մարդ ջրի երես տեսնի: Հիմի խոտը հնձում կը լինեն,
 էսպէս չէ. ով էր հաւաքում մեր խուրձերը: Ես եկել եմ
 հիմի բազարից կանաչի առնելու, հացն էլ ինձ են առնել
 տալիս, ասում են՝ առուտուր սովորի: Իսկ մեր Առենիքը
 հասել են: Հիմի ով է արածացնում մեր գառները: էստեղ
 լաւ չի, Թունի ջան, սիրտս տրաքում է ուրիշի տանը,
 չեմ իմանում, թէ ինչ անեմ... Որ գնաս, մեր տանն ասա,
 Միկակին տեսայ: Դու ում հետ ես եկել. Երբ ես գնալու:
 Ծառայ լինելը շատ վատ է, Թունի ջան...

Նա իր բազմաթիւ ու անկապ հարցերով բոլորովին
 շուարեցը ընկերին, որ չգիտէր՝ որ մէկին պատասխանի:

—Հօրս հետ եմ եկել.—ասաւ նա.—պանիր էինք բերել.
 ծախեցինք, էսօր պիտի գնանք: Դու երբ պիտի գաս գիւղը.
 գիտես, Միկակը մեր բոստանն էլ հասել է. էնքան սեխ
 եմ ուտում: Ես քո բաժինը կը պահեմ. Երբ ես դալու:

—Զեն թողնում, Թունի ջան.—պատասխանեց Միկակը
 տիսուր ձայնով.—շատ եմ ուզում գամ, մերոնց տեսնեմ,
 մեր տանը միամ. չեն թողնում, ասում են՝ «արջի քոթոթ,
 ձեր ծմակները չեն մոռանում». դէ, ոնց մոռանամ, Թու-
 նի ջան, ախար էստեղ ինչ կայ. տներ, հա տներ. մար-
 դիկը, խօ, գիւղացուն էշի տեղ են դնում...

Թունին մի-քանի տարով մեծ էր Միկակից. լսելով ըն-
 կերով խօսքերը, խղճաց նրա գրութեան վրայ և մտա-
 ծեց օգնի:

—Եկ, ես քեզ կը տանեմ գիւղը. —ասաւ նա:

—Ինչպէս գամ, էստեղ էլ հօրախպէրս զլխիս կը տայ,
 կասի՝ ինչու եկար: Զէ, Թունի ջան, լաւն էն է, գնամ
 ջուրն ընկնեմ, մի անգամով պրծնեմ:

Թունին միկթարեց նրան, սիրտ տուաւ ու խոստացաւ,
 որ կերթայ, կը խօսի նրանց տանը: Միկակն ուրախացաւ,

մանկական բարեսրտութեամբ ուզեց ընկերոջը մի բանով
վարձատրի.

— Գիտես, Թունի ջան, — ասաւ նա, — լաւ. միտս եկաւ,
ես վէգերս թաղել եմ մեր մարագի դռան տակին, էնտեղ,
ուր մի կոճղ է դրած. կը գնաս, կը հանես, հարիւր հա-
տից աւել է. ինչքան կուզես՝ դու վեր առ, մնացածը բա-
ժանի մեր ընկերներին: Ես որ չեմ կարայ խաղամ, դուք
էլ է խաղացէք:

— Թոմասին բաժին չեմ տայ. — ասաւ ուրախացած Թու-
նին. — նա լաւ տղայ չի, անցած օր հետո կուռեց:

— Նրան էլ տուր, մեր ընկերն է, հաշտուեցէք. — խօսեց
խրատական կերպով Միխակը. — Ի՞նչ կայ, ընկերը ընկերի
հետ կը կոռւի էլ, կը հաշտուի էլ: Անցած գիշեր ես էլ
Պողոսի հետ կոռւեցի՝ մահակով խփեցի, գլխից արիւն
գնաց:

— Պողոսի հետ. Պողոսն էստեղ ի՞նչ էր շինում:

— Երազումս կուռեցի, Թունի ջան. հէնց որ զարթեցի,
էնքան լաց եղայ, էնքան լաց եղայ՝ որ ի՞նչու նրա գլուխը
պատռեցի: Դրուստն ասա, Թունի ջան, նրան իս մի բան
չի եղել:

— Ոչինչ չի եղել. երէկ չէ, մէկէլ օրը ինձ հետ խօսում
էր, յետոյ միասին գնացինք իրանց այգին, ծիրան կերանք:

Երկու փոքրիկ գիւղացիների խօսակցութիւնն ընդհատեց
Թունիի հայրը, որ հեռուից ձայն տուաւ.

— Այ տղայ, էն մւմ հետ ես խօսում. եկ, գնում ենք:

— Թունի ջան, հիմի որ գնում ես. — ասաւ Միխակը
նրա փեշից պինդ բռնելով. — մտի մեր տունը, ամենին
շատ բարե արա, ասա՝ որ տեսայ Միխակին:

— Կասեմ. — խոստացաւ Թունին ու հեռացաւ:

Միխակը երկար կանգնել էր ու նայում էր ընկերոջ
ետևից.

— Երնէկ նրան, գնում է գիւղը...

Բաֆֆի

14.

ՍՈՒՀՐԱՅԻԱՆ

(Տուրքենեվից)

Ես անցնում էի վողոցով... ինձ կանգնեցրեց մի ծեր,
ուժից ընկած մուրացկան: Աչքերն արտասուալից, ուռած
ու կարմրած, շրթունքները կապտած, հագին լաթեր, մար-
մի վրայ անմաքուր վէրքեր... Օ՛, ինչ այլանդակ կերպով
մաշել, կերել էր այդ անբախտ արարածին աղքատութիւնը:
Նա ինձ պարզել էր իր կարմրած, ուռած ու կեղտերով
ծածկուած ձեռքը... Նա հառաջում էր, նա խեղդուած
ձայնով ողորմութիւն էր աղերսում:

Գրպաններս սկսեցի տակն ու վրայ անել... Բան չը
գտայ — ոչ փող, ոչ ժամացոյց, ոչ էլ նոյն իսկ թաշկինակ...
հետս ոչինչ չէի առել... Իսկ մուրացկանը շարունակ սպա-
սում էր... և նրա կարկառած ձեռքը թոյլ կերպով երե-
րում ու ցնցւում էր:

Ինքս ինձ կորցրած, շփոթուած՝ ես ամուր սեղմեցի այդ
գողգոջուն, այդ կեղտերով ծածկուած ձեռքը... «Թողու-
թիւն արա, եղբայր, ես ոչինչ չունեմ»:

Մուրացկանն իր կարմրատակած աչքերն յառեց վրաս:
Նրա կապտած շրթունքները քմծիծաղ տուին, և նա էլ իր
կողմից պինդ սեղմեց իմ սառած մատները:

«Է՞ն, ինչ արած, եղբայր, — ծամծմեց նա. — շնորհակալ
եմ. այդ էլ մի ողորմութիւն է, եղբայր»:

Ես հասկացայ, որ ինքս էլ ողորմութիւն ստացայ իմ
եղբօրից:

Ալ. Մատուրեան

ՄՈՒՐԱՅԿԱՆԻ ՄԱՀԼ

Մեռաւ նա, որպէս արքայ մեծապանծ.

Մեռաւ... Բայց ով էր—ոչ ոք չիմացաւ.

Միայն տեսան թէ ինչպէս կուչ եկած՝ նախը զիւռ
նա հին լաթերով ծովի ափ եկաւ։ նախը զիւռ
եկաւ ու պառկեց քարերի միջում, առ լոյն վան
ջեռքերը խաչած ցաւագար կըրծքին։
Եւ հայեացքն աղօտ, ուր կեանքն էր հանգչում,
նա յառեց անհուն, կապոյտ երկնքին։

Իսկ նրբա վերև, որպէս լոյս ճրեշտակահարց
Ամպն էր սըլանում երկնի երեսով,
Եւ հեռուն, ազատ, պայծառ, կապուտակ ուռն
Ծովն էր փայլփլում անդորր մի լուսով։

Այժ նա Սլա՛Շատուրեան

բա դըմեր զունա ու ճաւոնից, ճաղպոյ նմի սցու
որո՞ւ ու զցոնձ ճաւոյին իոդարց բա, մայորոց
16.

այժ զմուա մշտկամուն ու Առիկիծը մամբաց ան
Մի օր առիւծը, պատահելով իր ցեղակեց կատուին
հարցըեց.

—Միրելի ազգակից, ինչ է պատճառը, որ դուք այդ
պէս պստիկ էք մնացել:

—Պատճառն այն է, որ մարդու ձեռի տակ ենք ապ-
րում, —պատասխանեց կատուն։

Առիւծը ինդրեց կատուին, որ մի ցոյց տայ իրան այդ
մարդ ասած արարածին։

Այդպէս խօսակցելով՝ երբ նրանք մտան անտառ, կա-
տուն տեսաւ անտառի խորքում մի փայտահատ, որ փայտ
էր կտրում։

—Տէր իմ, ասաց կատուն, ահա մարդ ասածը՝ այն
փայտ կտրողն է։ Մօտ գնա ու տես։

Առիւծը մօտեցաւ մարդուն, բարեւտուաւ ու ասաց.

—Լսել եմ, որ դուք մարդիկդ շատ ուժեղ էք։ Արի,
ոյժերս փորձենք, մենամարտենք։

—Շատ բարի, թագաւոր առիւծ, —պատասխանեց մար-
դը։ —Լաւ առաջարկութիւն էք անում։ Բայց բանն այն է,
որ մենամարտելու հագուստս վրաս չէ։ Եթէ բարեհա-
ճէք մի քիչ սպասել, որ գնամ, ճագուստս բերեմ, ինչի
չէ, ձեր առաջարկն ուրախութեամբ կը կատարեմ։ Միայն
թէ, —աւելացրեց մարդը, —հիմիկուանից պիտի երդում
տաք, որ մինչև իմ դալը, այստեղ կըսպասէք։

Այս ասելով մարդը մի ահապին գերանին ասաւ ծայրից
չի վի տուաւ, երկու կանգուն խորութեամբ ձեղքեց գե-
րանը և գաւնալով տոփիծին պսաց։

—Համեցէք, ձեր երկու թաթը, այս ձեղքուածի մէջ
դրէք ու երդում տուէք, որ կըսպասէք։

Առիւծն հաւատալով մարդու ասածին այնպէս էլ արաւ։

Մարդն իսկոյն չիվին դսւրս զարկեց, բացուածքը վրայ
եկաւ ու այնպէս սեղմեց առիւծի երկու թաթը, որ կեն-
դանիների թագաւորն էլ ազատուելու հնար չունէր։ Ապա
տոնելով մի հատ փայտ, մարդն ընկաւ առիւծի ջանին ու
տուր թէ կըտամ։

Առիւծը տեսնելով, որ կատուն հեռում կանգնած նա-
յում է, ասաց։

—Կատու եղանցը, թէ որ ձեծ ուտելով ես էլ քո չափ
պստիկանամ, մարդն ինձ բաց կը թողնի։

—Ոչ, պատասխանեց կատուն, քո մորթին իմ մորթուց
թանկագին է։ Մինչև չմաշկի, բաց չի թողնի։

Այս խօսքերը լսելով՝ առիւծն ասաց.

—Այն, մարդու ձեռի տակ ոչ թէ առիւծներն ու
րիշ կենդանիները, այլ սարերն էլ կը պստիկանան։

միս ՚ զնան բջան անձ 17. ուսաբ զնան և ոչ զթ—
 զնան առ ամք առ Ա, չէ մրցայի ուշափ
ԱՆԲԱԽՏ ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐ ուն զնայով
 միմ ոչ բժեշտ ունչ բժիրդան գալը զու և ան յան—
Մի օր ԶԵՂՋԻԿՆ ու Ճայն եկան
Թէ՝ եկ դառնանք վաճառական: յայս ունծ—
Ասին ու խելք խելքի տուին, յայս առ այս—
 Հաւան կացան, պայման դըրին, յայս անուննեն զու
Բայց՝ արի տես... որ փող չունեն: չի՞ մի գմէ
Շատ միտք արին, թէ ինչ անեն. յայս զնծ
Վեղջը եկան Փըշի մօտը. յայս բժիրդան—
Ընկան նըրա ձեռն ու ոտը, և այս զու զնան
Ու մուրհակով, յայս զու զնան ամ
Շահով, կարգով, յայս զու զնան ամ չի ոչ
Փող վեր առան բաւականին, յայս առ այս
 Ինչքան պէտք էր իրանց բանին: յայս ամ
Զեղջը մընաց, տընպահ դառաւ, յայս ամ զնչը
Ճայը բոլոր փողերն առաւ, յայս ամ մնայով
Առաւ նըստեց նաւի միջին, յայս մընաց Ա
 Հասաւ **Մըզըր,** Զինումաչին, յայս ամ այս
 Ֆարս, Հընդըստան, յայս ամ այս արական գլուխմար
Արաբըստան... յայս այս ամ մի խոյժուան
 էլ թանկագին քիրմանի շալ, յայս ամ չի յանու
 էլ մարգարիտ, զըմբուխտ ու լալ, յայս այս
 Հընդու խուրմա, փըստա, բաղամ, յայս է նոր
 եւ... որ մէկի անունը տամ.
 ինչ որ տեսաւ, աչքը սիրեց, յայս նուանիտար
 Բոլ-բոլ առաւ, նաւը լըցըրեց.
 Նաւը լըցըրեց հազար բարով
 Ու ետ՝ եկած ճանապարհով
 Ուրախ-ուրախ տուն էր դալի: յայս ամ
 Ճամբին ծովում սարսափելի
Ալեկոծում, մըրրիկ ելաւ,
 երկինք հանեց ալիք ու նաւ,

Ու էնտեղից թողեց ներքեւ.
Ներքեւ բացեց որկորը սկ, նուորութ
Ողջ կըլանեց անդունդքն անյագ:
Մեր սովորաքեար Ճայը մենակ—
Ո՞վ իմանայ՝ ում էր տուած
 իրան օրում մի կտոր հաց,
Ծովում առաջն եկաւ էն օր—
Աղատուեցաւ մերկ ու արկոր:
Աղատուեցաւ—փառք իր Աստծուն,
 Բայց ինչ սըրտով խեղճը գայ տուն.
 Գայ—ինչ ասի պարտքատէրին,
Ո՞նց երկայ իր ընկերին...

 Ընկերն էնտեղ՝ գուռը կըտրած,
Աչքը ճամբին, վիզը ծըռած,
Համբում է օրն օրի վըբայ
 թէ՝ մեր Ճայը երբ պիտի գայ...
Երկար նայեց, յայս ամ այս չէ՞ ոչ
 Ճամբէն պահեց,
Շատ լաւ ու վատ երազ տեսաւ,
Մինչև պարտքի օրը հասաւ ողբայի և
 Ու՝ մուրհակի թուղթը ձեռին,
Փուշը տընկուեց կըտեր ծէրին:
 —էյ, բարեկամ, ինչ բանի էք.
 էլ չէք ասում թէ պարտք ունէք...
 Գործ բըռնեցիք, հօրս ողորմի,
 Ետ տուէք դէ փողըս հիմի:
 Թուղթ էք տուել՝ վախտ իմացէք,
 Ամօթ, աբուո, ահ ունեցէք...
 Թալան հօ չի... մեղք եմ ես էլ...
 Ախպէր, էսպէս բան էք տեսել.
 Ոսկի տայ մարդ իրան ձեռով,
 Զըկարենայ առնել զօռնվ...
Սրանից ետոյ դէ արի դու

Ու ձեռ մեկնիր աղքատ մարդու... և ու
 Գոռզոռում էր ողջ թառակում, ացած
 Հայնոյում էր, խայտառակում. ոյզ իր
 Ամեն մարդ էլ, ով որ լըսում, ոս ու
 Հէնց մի բերան էն էր ասում. անչ ի՞ն
 —Այ ամօթձեղ, Զըդիկ ու ձայնաց
 Ինչ ենք լըսում. —վայ, վայ, վայ, վայ.
 Անոնները վաճառական արձուարձ
 Ու էս տեսակ խայտառակ բան. ասորձ
 Վայ, վայ, վայ, վայ,
 Զըդիկ ու ձայ, այսու վսա չմի— լոր
 .. միշտիւ ոյ լաւդ ըմն
 Զըդիկն էսպէս միշտ լըսելիս,
 Սիրտը բերնով գուրս էր գալիս: Դիմու
 Բարկանում էր իրան մըտքում, և զայն
 Անիծում էր, չըքում, թըքում: առջնան
 —Այ քուտունը քանդուի, ան ձայ, չմ
 Այ գու դառնաս գըրողի փայր: դաշին
 Էս ինչ բան էր, որ գու արիր, մշտակ
 Գըլուխս էս ինչ փորձանք բերիր... առն
 Ու խընդրում էր ամեն անգամ. մշտակ
 —Մի նեղանար, Փուշ բարեկամ, և ու
 Շատ ես կացել, մայր սանցիւ ու առ
 Կաց մի քիչ էլ մարդուայ և չ
 Թուղթ ստացայ երէկ ձայից, և ոչչ ի
 Թէ գուրս եկայ Արաբիայից: ոյզ նոր
 Որտեղ որ է շուտով կըզայ, գծուու ու
 Դեռ մի բան էր աւել կըտայք նըրու
 —Ես չեմ ուզում, ասելն, ախպէլքում
 Կանիմիկ համրած փմափողը բեր. մայս
 Շահ էր գըրել, ու մնաց ոյքով
 Վախտ էր գըրել, այդ բան բառ մին
 Ինչ գըրած էր էն եմ ասում: անցից
 Զեղնից աւել բան չեմ ուզում: զիմու

—Զէ, աղա Փուշ, ավայ ուրի յանց չի
 Թէ վաղ, թէ ուշ
 Փողն իր կարգին, շահն իր կարգին,
 իսկ պատիւրդ... ես իմ հոգին...
 Ես յոյս ունիմ... ասենք պարտ ենք...
 Բայց չէ ախար մենք էլ մարդ ենք...
 Զէ, քո արածն ով մոռանայ, ամայ զի
 Իր Աստուածն էլ նա կուրանայ...
 Խեղճը էսպէս լեղուածաւ,
 Շատ յոյս տուաւ, շատ խոստացաւ,
 Շատ սուտ ասաւ պարտքատէրին,
 Շատ ըսպասեց իր ընկերին.
 Բայց ընկերը չըկայ, չըկայ:
 —Ես ինչ ցաւ էր, Աստուած վըկայ:
 Ինչ իմ բանն էր՝ մըտայ մէջը, առողու
 Որ խայտառակ լինեմ վերջը... առփ իս
 Ինչպէս պըրծնեմ էս կըրակից, յանձ
 Էս ահազին պարտքի տակից, ո մոցրու
 Էլ ինչ ասեմ, զոյս ու մշտի չ նեցու
 Ունց ըսպասեմ: ու մըն յանձ չի
 Նա երբ կըգայ, ինչ սիմանսամ,
 Ո՞ր ջուրն ընկնեմ... ո՞ւմ մօտ գընամ...
 Շատ միտք արաւ,
 Դէս դէն թըրաւ,
 Ինչ որ ունէր տանը, հազին,
 Ողջ հաւաքեց, տուաւ պարտքին,
 Ցիփ մերկացաւ,
 Էլ չը պըրծաւ:
 Վերջը տեսաւ, որ ճար չեղաւ,
 Թևեր առաւ, ինքն էլ փախաւ,
 Չ միան Փախաւ, կորաւ, որ էլ էնպէս ուն արդան
 Պայտարկ աշնանկ, ու սկերես յառ չին նառայ
 ուայ ուն Աչ պատճի պարտքատէրին զայի պար միան

Ո՞չ երևայ լոյս աշխարհին:

Այսուհետեւ, իր նամուսից, զի մըրով
Զըղջիկը մերկ, փախած լուսից, որ ին
Յերեկները դէս դէն թագչում, որով ամ
Գիշերն է միշտ մըթնում թրոչում,
Որ չերևայ իր թայ-թուշին,
Ոչ պարտքատէր աղա-Փուշին:
Ճայն էլ ծովում,
Ճըչում, ճըւում, սիրու զարձ
Չուրն է մըտնում, որով ոչով ուան
Դուրս է պըրծնում, առ ուսու ուան
Թէին տալիս,
Ման է գալիս,
Թէ, մի գուցէ, բախար բանի,
Կորուստն էլ ետ ջըրից հանի:
Իսկ Փուշն, արդէն յոյսը հատած,
Ճանկ ու ատամ սուր պատրաստած,
Կողքովն ով որ անց է կենում՝
Քաշում է փէշն ու հարցընում,
Թէ չեն տեսել մէկն ու մէկին,
Էն լիրք ճային կամ Զըղջիկին:
Ու էն օրից մինչև օրս էլ
Մէկը մէկին դեռ չեն տեսել:

Ցովի. Թումանեան

18.

ԱՌԻՒԾՆ ՈՒ ՄԱՀԱՊԱՐՏԼ

Մարդու մէկը անտառում ման գալիս՝ հիւանդի ճայն է
լսում: Քիչ առաջ է գնում ու տեսնում է ճանապարհի
մօտին, կողքի վրայ ընկել է մի առիւծ ու թաթը բար-

ձրացրած, սոսկալի գոռում է: Նրա գոռոցից ամբողջ ան-
տառին սարսափի էր տիրել. բոլոր կենդանիք ահ ու դողից
որ ջերն էին քաշուել կամ թփերի տակ ծածկուել: Հպարտ
կենդանու այդ աղիողորմ ձայնից զգացուած՝ մարդը սիրտ
է անում, մօտենում է առիւծին ու տեսնում է, որ խեղ-
ճի թաթի մէջ փայտի մի սուր կտոր է խրուել, ուքն
ուռել է ու քիչ է մնում, թէ տրաքուի: Մարդը միտք է ա-
նում մի հնար գտնի, որ խեղճին ազատի այդ անասելի
տանջանքից: Նա ատամներով պինդ բռնում է փայտի ծայ-
րից ու դուրս է քաշում: Խսկոյն վէրքի միջից բոլոր ա-
րիւնն ու թարախը դուրս են թափում ու վէրքն հան-
գտանում է:

Անցնում է մի քանի ժամանակ: Մի անդամ, ինչպէս է
լինում, այդ մարդը վէճի բռնուելով մի ուրիշի հետ՝ բանն
այնտեղ է հասնում, որ իր հակառակորդին սպանում է:
Մարդուն բանտարկում են: Բայց երկրի սովորութիւնն
այնպէս է լինում, որ մահապարտներին ձգում են քաղ-
ցած առիւծների առաջ, որ սրանք պատառուեն: Մար-
դասպանն էլ, իբրև մահապարտ, ենթարկում է այդ օ-
րէնքին: Երբ նրան դուրս են բերում հրապարակ ու քաղ-
ցած առիւծին վրայ են թողնում, առիւծն ուզում է յարձա-
կուի, բայց մի լաւ նայելուց յետոյ, մօտենում է, գրկում
մարդուն, սկսում է լիգել ու, առանց մի վսաս հասցնելու,
ազատ է թողնում: Հանդիսականները մնում են զարմա-
ցած: Տեսնելով այդ բանը՝ երկրի դատաւորն հարցնում է
մահապարտին:

—Դու երբեկցէ տեսել կամ ճանաչում ես այս առիւծին:

—Ոչ, պատասխանում է մարդը՝ խորը նայելով կենդա-
նիների թագաւորին:

Բայց նա միասմի պատմում է մի ժամանակ առիւծի
հետ ունեցած իր դէպքի մասին: Այս պատմութիւնից յե-
տոյ, նայում են առիւծի թաթը, տնտղում են ու վէրքի
սպիտակ հետքերից իմանում են, որ սա հէնց այն առիւծն
է, որին օգնել է մարդը:

20.

Ա. Բ Տ Հ

Անիկից էի վերադառնում և անցնում էի մի հայ գիւղի
միջով։

Գիշերը սաստիկ անձրև էր եկալ, այնքան սաստիկ, որ
շատ պատեր ու խրճիթներ վլցրել էր։ Փողոցներից հե-
ղեղներ էին վազում կչկչալով։ Երկինքը ծածկուած էր
միաձոյլ կապարագոյն ամպերով։ Դեռ էլի մէկ-մէկ անձ-
րեռում էր։

Գիւղի վերջին խրճիթն էի հասել, երբ նրա դուռը ճռնչաց,
մի քանի մանուկների ճիշեր ականջիս հասան և առաջս
դուրս ելաւ մի ալեզարդ ծերունի՝ բահը ուսին։ Մի վայր-
կեան ինձ նայեց, յետոյ պատերի տակով անցք փնտոեց
քայլելու։ Նրա հնամաշ արեխներից ջուրը հոսում էր գուլ-
պաների մէջ։ Խոնաւութիւնը թափանցում էր բաց կուրծքը։
Գիւղից դուրս էինք եկել։

Անցնելով մի առ մի դիտում էի երկու կողքի արտերք։
Շատերի միայն մի քանի ակօններն էին աւերուել ու մէջ
տեղերում լճակներ գոյացել։ Մի քանիսը լիովին ողողուել
էին։ Զրի հոսանքներն արմատախիլ էին արել քշել տա-
րել ցորենի դալար ծիլերը և հաւաքել ակօնների մէջ։ Յեխ
էր գոյացել ամեն մի փոքր շաւղի վրայ։ ամեն մի փոսի
մէջ պղտոր կարմրագոյն ջուր էր կիտուել և շատ հասկեր
լողում էին նրանց երեսին, որպէս խեղդուածներ։

«Վախ, վախ», արաւ ծերունին։

Բայց վնասը շատ էլ մեծ չէր երեսում։ Հողը դիմացել
էր. երեսում էին բոլորովին չփչացած արտեր անգամ. ծի-
լերը դիմացել էին և այժմ գուարթ ցցել էին սկսում իրանց
գլուխները, թէև կային այնպիսիները, որոնց արմատները
մերկացել էին ու դառել էին ոտարբորիկ։

—Է, վառք Աստծու, —խօսեց ծերունին՝ տեսնելով դը-
րանց, —շատ էլ վնաս չի եղել։

—Քո արտն էլ էդպէս կը լինի, ծերուկ.—սըտապնդեցի նրան,

Գլուխն անխօս երեցքրեց: Կասկածում էր և հայեացքը միշտ հեռուներն էին:

Այդպէս քայլելով մենք հեռացանք գիւղից և յետոյ ծըռուեցինք դէպի լեռները: Ծոռւելիս ծերունին մի ըռպէ կանգ առաւ ու աշխատում էր հեռուից նշմարի իր արտի դրութիւնը:

—Ո՞րն է արտի:

—Ե՞ն, բարձրը:

Ջրի հեղեղներ էին հոսում այնտեղ, ջրակոյտեր էին փայլում:

Ծերունին գունատուեց:

—Տունս քանդուել է...

—Միթէ վնասուել է:

—Զգիտեմ դեռ... ասաւ նա խեղդուած ձայնով, —կարելի է, աչքերս չեն ջոկում... ծերացել եմ....

Առաջ գնացինք: Մօտենում էինք: Քայլուածքն աւելի դժուարանում էր. վերեկից զրեթէ ցեխի հեղեղ էր, որ իշնում էր ցած՝ խառն ծիլերի, ցողունների հետ...

Հեռում էր ծերունին, շունչը կտրուել էր: Քիչ էլ քայլեցինք: Էլ կանաչ չէր երևում. ցեխի հեղեղ ու ջուր էր, որ տեսնում էինք, աւերիչ, ապականիչ հեղեղ...

Մի քանի քայլ յետոյ կանգ առաւ ծերունին ու բահն ուսից ցած թողեց: Իր արտի կողքին էր: Թշուան արտ...

Վերեկից, փոսերի մէջ գոյացած ջրերը պատռել էին իրանց թումբերը, ուժգնութեամբ ցած հոսել՝ և զրեթէ սրբել էին արտը:

Եւ անձրես նորից տեղում էր, տեղում ու իր մեծ կաթիներով ճղփացնում լճացած ջրերը:

Ընկաւ բահը ծերունու ձեռքից, աչքերը մթնեցին, ծնկները կթոտուեցին և նա նստեց տեղն ու տեղը, իր ընտանիքը կերակրող ցորենի գիակների կողքին ու գլուխը թաղեց ձեռքերի մէջ...

Զին քշեցի: Միրտ չունեցայ մխիթարական ոչ մի խօսք ասելու: Աւելորդ էր:

Եւ երբ հեռուից ետ նայեցի, տեսայ՝ թշուառ ծերունին, միշտ նոյն դիրքի մէջ, նստած իր աւեր արտի կողքին, գլուխը ձեռքերի մէջ և ալեզարդ մազերը տեղացող անձրես տակ...

Վ. Փափազեան

21.

ՍԵՐՄՆԱՑԱՆ

«Ո՞ւր ես գընում, այ գիւղացի,
Բեռան տակին տընքալով.

Այդ լինչ բեռն է՝ որ շակած ես,
Ու տանում ես խընդալով»:

—Արի ինձ հետ, դու կը տեսնես՝
Ուր եմ գընում տընքալով.

Երկրի յոյսն է իմ շալակին՝
Ես տանում եմ տանջուելով...

Ասաց, գընաց, էլ չըխօսեց,
Ու ողջ ճամբէն լուռ մընաց...

Հասաւ ցելին ու ցած դըրեց
Ծանըլ բեռը նա յոգնած...

—Այժմ դու տես, թէ ես ինչպէս
Սերմ կը ցանեմ շաղ տալով.

Իմ այս գործից դու կիմանաս,
Թէ ուր եկայ տանջուելով:

Ասաց, կապեց իր գոգնոցը,
Ապա նայեց երկնքին.

Միրտ խօսեց, լեզուն շարժուեց...
Ես նայեցի արցունքին...

«Կապուտ երկինք, հալալ սրտով
Քեզ եմ կանչում՝ միայն քեզ,
Որ գու արևանձրե շատ տաս
Իմ այս սերմին՝ սըրբի պէս...
Դու լաւ դիտես թէ քանի մարդ
Աչք կը դնի ցանածիս,
Քանի պարտքեր ու պատուհաս
Միշտ կը սպասեն սերմածիս...»

Յանկարծ մի մուկ վաղեց, թռաւ,
Նըրա առջև ծըւծըւաց.

«Մեզ համար էլ սերմը ցանիր,
Որ չը կըրենք ողջ սերմած...
— Ահա... այս ձեր ցեղին լինի,
Պըտղաբերուի ձեզ համար.
Միայն ցանքիս ձեռը չը տաք,
Մուկիկ, մեղք եմ ու անճար...»

Երկրորդ բուռը գեռ չէր ցանել,
Մի մեծ մորեխ երկաց.

«Մեզ էլ մաս տնւր քո սերմածից,
Որ չը լափենք կանաչած...
— Այս էլ ահա... ձեզ եմ տալիս,
Թող շատանայ ձեզ համար.
Կանաչ արտիս վընաս չը տաք,
Խեղճ եմ, անտէր ու անճար...»

Երրորդ բուռը գեռ չէր ցանել,
Մէկ էլ տեսնես մի մըրջիւն.

«Մեզ էլ մաս տնւր, թէ չես ուզում
Սերմը կըրենք մի անկիւն...»
— Ձեզ շատ լաւ եմ ես ճանաչում,
Այ մըջիւններ, անկուշտ էք.

Ահա... այս էլ թող ձեզ լինի,
Ողջ սերմածըս չը կըրէք...

Մէկ էլ տեսար կաչաղակը
Թռաւ, կկաւ նըրա մօտ.

«Պարնի, մեզ էլ մարդատեղ դիր,
Մենք գողեր ենք... չենք երկչու»:
— Ահա... այս էլ թռչնոց դասին,
Միշտ կը չունենաք քէն ու ոխ.

Իմ ցանածը չը ժողովէք,
Մէղք եմ, խեղճ եմ, պարտքակնի...

Չաղացած պատահ առաջ առաջ գայլ գայլ
Պատահ ու պատահ առաջ առաջ գայլ գայլ

Պատահ ու պատահ առաջ առաջ գայլ գայլ
Պատահ ու պատահ առաջ առաջ գայլ գայլ

Պատահ ու պատահ առաջ առաջ գայլ գայլ
Պատահ ու պատահ առաջ առաջ գայլ գայլ

Պատահ ու պատահ առաջ առաջ գայլ գայլ
Պատահ ու պատահ առաջ առաջ գայլ գայլ

Պատահ ու պատահ առաջ առաջ գայլ գայլ
Պատահ ու պատահ առաջ առաջ գայլ գայլ

Պատահ ու պատահ առաջ առաջ գայլ գայլ
Պատահ ու պատահ առաջ առաջ գայլ գայլ

Պատահ ու պատահ առաջ առաջ գայլ գայլ
Պատահ ու պատահ առաջ առաջ գայլ գայլ

Պատահ ու պատահ առաջ առաջ գայլ գայլ
Պատահ ու պատահ առաջ առաջ գայլ գայլ

Պատահ ու պատահ առաջ առաջ գայլ գայլ
Պատահ ու պատահ առաջ առաջ գայլ գայլ

Պատահ ու պատահ առաջ առաջ գայլ գայլ
Պատահ ու պատահ առաջ առաջ գայլ գայլ

Պատահ ու պատահ առաջ առաջ գայլ գայլ
Պատահ ու պատահ առաջ առաջ գայլ գայլ

Աղ. Արարատեան

22.

Մէր գպրոցը վանքի ընդարձակ պարապի մէջն էք. այդ-

տեղ էք նաև ընթերցարանն ու թատրոնը:

Խաղում էինք աւազանի շուրջը, մեծ տաճարի լայն գա-

վիթներում, այլև ընդարձակ բագի խոշոր ծառերի տակ:

Վանքի պարիսպներին ետեի կողմից կպած էին ընդարձակ

ճոխ այգիներ. և մինչև հոկտեմբերի կէսերը ուղղակի ան-

հնար էր լինում վարժապետների դասերին ուշադիր հետեւը:

Ախր ի՞նչպէս ուշադիր հետևես, երբ հէնց դասարանիդ լուսամուտի տակը, երկու քայլ հեռու, թփերից շարանշարան կախուած փայլում են խաղողի հիւթալից ճութերը, կարմրաթուշ գեղձերը պսպղում են ամեն կողմից և տանձերը երերում են բարձրում:

Փոխանակ մեր թուաբանական խնդիրները լուծելու մտածում էինք դասի ժամանակ, թէ ի՞նչպէս հասնենք այդ գայթակղիչ պտուղներին:

Խորհում էինք, հնարներ որոնում, դասամիջոցներին փայտեր էինք երկարացնում, շատ անգամ նրանց ծայրերով ճութերը կտրտում, փայր թափում, բայց որ մեր ձեռքը ոչինչ չէր ընկնում:

Վերջապէս, մի օր մեր ընկերներից մէկը լուծեց խնդիրը:

Մեծ դասամիջոցին հաւաքեց մեզ մի ծառի տակ և այնտեղ պարզեց իր ծրագիրը:

Ճիշտ մեր դասարանների գլխին գտնւում էր մի փայտանոց, ուր կարելի էր գնալ մի նեղիկ ու վատ շինուած սանդուխքով: Փայտանոցն ունէր փոքրիկ լուսամուտ պարտէզի վրայ: Ահա այդտեղից էր, որ մտածել էր մեր հնարագէտը մագլցելով իշնի այգին ու սկսի արշաւանքը:

Ասաւ ու գնաց, որ փորձի: շուտով անհետացաւ սանդուխքի մութ անկիւնում և այնուհետեւ կէս ժամ չերեաց: Մենք սկսել էինք արդէն անհանգիստ լինել, երբ յանկարծ լսեցի, որ մէկը կանչում էր ինձ տաճարի գաւթի կողմից:

Աշակերտներն աղմկալից խաղում էին բագի մէջ, վազվզում, կանչուրուառում: Դրա համար էլ ոչ ոք ուշք չդարձրեց, շրջապատեցինք մեր վերագարձող ընկերին:

Նա էր. գրապաններն ուռած ու բերանն աղտոտ: Մի լաւ կերել էր նախ, յետոյ գեղձ հաւաքել ու վերագարձել:

—Եղաւ, —ասաւ նա խորհրդաւոր կերպով. —սրանից յետոյ ամեն օր ես կիշնեմ, տոպրակը կը լցնեմ, իսկ դուք պատուհանից վեր կը քաշէք. ելնելն ու իշնելը հեշտ է...

Միւս օրը մէկ-մէկ բոլորս փայտանոց ծլկուեցինք ու ամբողջ մեծ դասամիջոցին, որ ճիշտ երկու ժամ էր տեսում, ցած չեկանք: Ուտում էինք ու գրապաններս լցնում:

2.

Երկար չտեսեց սակայն մեր այդ քաջագործութիւնը: Նախ որ շատ ու շտապ ուտելուց համարեա թէ ամենքս հիւանդանալ սկսեցինք, յետոյ էլ մի օր յանկարծ բռնուեցինք ու...

Այ, թէ այդ ի՞նչպէս պատահեց:

Դպրոցում մի գիւղացի ծերունի ծառայ ունէինք, այտին մի մեծ ուռուցք, զլիսին՝ մի մեծ փափախ:

Անունն Յակոբ էր. մենք կանչում էինք «փոկակապ Ակոփ ապէր»: Շուտասելուկը հօ յիշում էք:

Միամիտ, բարեմիտ, դանդաղարժ ու չափազանց քընկոտ մի ծերուկ էր: Կատակներ, խաղեր ու ծաղր կարկուտի պէս տեղում էինք զլիսին, բայց դիմանում էր, լուռ ժպտում ու երբէք չէր բարկանում:

Ահա այդ «փոկակապն» էր, որ մի օր վրայ հասաւ մեզ այն րոպէին, երբ վեց հոգի շարուած փայտանոցի մութ անկիւնումը փայտերի վրայ՝ խաղող ու գեղձ էինք խժուում:

Փայտ տանելու էր եկել, թէ գուցէ մի ուրիշ բանի, ուրոնցով լիքն էր այդ տանիքի տակի ամբարը: Բայց հէնց որ դէմ եկաւ մեզ, սաստիկ վախեցաւ: Նախ կարկամեց, յետոյ վիզը առաջ պարզեց, լուռ զննեց ամենքիս ու գոչեց:

—Եա... էս ի՞նչ է...

Մենք էլ շատ վախեցել էինք: Վեր թոանք: Այդ միջոցին իսկ մեր ընկերը, որ այգումն էր, երեկի լաւ կշտացած, փէշի մէջն էլ գեղձ ու տանձ՝ երեաց լուսամուտից ու ներս ոստնեց:

Յակոբ ապէրը ցնցուեց ու փախաւ դէսի սանդուխքը: Կարծեցինք, որ գնում էր վերակացուին կանչի: Միմեանց զլիսի վրայից ցատկելով առաջ վազեցինք, ծերունուն հրե-

ցինք, հրմշտկեցինք, համարեա գլորեցինք ցած ու բագ նետուելով ցրուեցինք, անհետացանք:

Բայց Ակոփ-ապէրը կնացել պատմել էր ամեն ինչ և մի առ մի մեր անունները տուել:

Պատմուեցինք. փայտանոցը կողպուեց. էլ պառողի երես չտեսանք, բայց մտածեցինք ապէրից մեր վրէժը հանենք, եթէ ոչ այսօր, գոնէ վաղը:

3.

Հնարքը գտաւ նորից այգին իջնողը:

Ակոփ-ապէրը հեռաւոր գիւղերից եկած մենակ մի մարդ էր, ապրում էր դպրոցում։ Տուել էին նրան մի խուց, ուր նրա անկողինն էր, մի ճրագ, մի կուժ, մի քանի ամանեղէն։ Դուռը փակել չէր էլ մտածում, գողացուելուց վախ չունէր։

Ու մի օր, երբ ծերունուն դպրոցից դուրս դործի էին աւզարկել, մտանք նրա խուցը, մի առ մի դուրս բերինք ինչ որ կար այնտեղ, նոյն խոկ աթուն ու կուժը, ամեն ինչ, և տարանք թագցրինք զանազան աեղեր։ Վերմակը նետեցինք խոնաւում մութ մի մառանի խորքը, ներքնակը շպրտեցինք աւերակ խուցերից մէկի մէջ, ամտնները ջարդ ու փշուր եղան, երբ նետում էինք այս ու այն նկուղը, իսկ բարձր ու հոգուածը թագցրինք թատրոնական բեմի տակ։

Գնա ու գալիք այժմ այդ ընդարձակ շէնքի քարու քանդ խուլ անկիններում։

Խուցը լիովին դատարկուեց. մնաց մերի փայտէ մահակալն ու սեղանը միայն. ոչ իսկ աւելը թողինք։

Գոհ մեր արածովը, սակայն մի խուլ անհանգստութեամբ զնացինք տուն։ Ոչ մէկին չպատմեցի մեր արածը, բայց ամբողջ գիշեր մտածում էի, թէ Ակոփ-ապէրը ինչ պէս պիտի ապշէր, երբ ներս մտնէր խուցը, ինչպէս պիտի շուարած մնար...

Իսկ գիշերը. ուր, ինչի մէջ պիտի քնէր։ Զէ որ ես

ահա անկողնիս մէջ, վերմակումս փաթաթուած պառկել եմ, բարձ էլ ունիմ, ներքնակ էլ, իսկ նա ոչինչ չունի։ Դասարանները մաքրելուց յոգնած գնալու է, որ պառկի, գնալու է, որ ճրագը վառի, թէյ շինի... և ոչինչ չի գըտնելու...

Սկսեցի սաստիկ անհանգիստ լինել պառկած տեղումս Քիչ էր մնում լայի. ինչ անսլիսամութիւն էր մեր արածը. միթէ խեղճ չէր. կողոպատել էինք նրան այդ ցրտին՝ թողել էինք առանց անկողնի, առանց թէյի, առանց ճրագի... Եւ էլ քնել չէի կարողանում, խիղճ ինձ տանջում էր։

4.

Միւս առաւօտ դպրոց մտնելիս՝ առաջին լուրը, որ լսեցի՝ այն էր, թէ Ակոփ-ապէրի խուցը կողոպատել էին երէկ։ Կարծում էին, թէ գողեր են մտել։

Տեսայ իրան՝ ծերունուն, նատած խուցի առաջ՝ արտասուքն աչքերին, շուարած ու անշարժ։ Այնքան խղճալի էր տեսքը, այնքան յուղիչ։

Գիշերը քնել էր վանահօր ծառայի խուցում, ընթրել էր այնտեղ, բայց հօ այդպէս չէր կարելի։

Եւ գաւագիրներս տխուր իրար մօտ եկանք դասամիջոցին մի ծառի տակ։

— Ծղերք, ամաւ յանկարծ մէկը — մեր արածն անսլիտան բան էր։ Ակսած պտուղ գողանալուց մինչև այս վերջին մեր վաղմունքը՝ չարագործութիւն է... Աւղենք մեր սխալը։

— Ի՞նչպէս — ձայնեցինք ամենքս մի բերան։ Երևում էր, որ ինձ նման բոլորն էլ տանջուել էին գիշերը և այժմ խղճահարւում էին։

— Շատ պարզ է. նախ՝ բոլոր թագցրած բաները հանենք ու տեղը դնենք. ցած բան է մեր արածը։

— Իսկ յետո՞յ... ՅԵՏՈ՞Յ...

— Յետոյ պիտի կտրտած բաները մեր փողովս առնենք ու տանք Ակոփ-ապէրին։

—Փող ովկ կը տայ մեզ: —Բաժանենք մեզ վրայ, —ասացի ես կտրուկ. —Ես կերթամ, կը պատմեմ հօրս մեր արածը, կը պատմեմ ամեն բան. նա փողը կը տայ:

—Ես էլ կը պատմեմ:

—Ես էլ:

—Ես էլ...

Վճռուած էր: Պէտք էր տեսնել, թէ ինչպէս իսկոյն գուարթացանք մենք. ինչպիսի ոգեսրութեամբ որոնում էինք թագցրած իրերը, խուցը տանում ու լաւ սարքում, տեղաւորում:

Ակոփ-ապէրը մեր գործի կէսին վրայ հասաւ ու ապշած կանգ առաւ խուցի դռան առաջ:

—Եա...—արեց նա միայն ու մնաց անշարժ:

—Ոչինչ, ապէր, —կանչեց մեզնից մէկը—գու սկի դարդ մի անիլ. այ, բոլորը կը բերենք, կոտրածներն էլ՝ փող կըտանք, որ առնես...

—Մենք էինք արել. —աւելացրեց երկրորդը, —հանաք էինք արել, մի նեղանալ, ապէր. ես քեզ համար մի լաւ կուժ կը բերեմ:

—Ես էլ մի ջրածիկ:

—Ես էլ... ես էլ ափսէներ...

—Իսկ ես, ասում էր մէկը—ես ինչ բերեմ:

Ծերունին ժպտուն արտասում էր: Սաստիկ յուզուել էր:

Եւ երբ ամեն ինչ տեղաւորել էինք, յանկարծ բըռնեց մեզնից մէկին ու, մինչ նա ճշում էր վախից՝ ասաւ.

—Մի վախենալ, բալաս, սպասի մէկ համբուրեմ քեզ...

Ու արտասուախառն համբուրեց նրան, յետոյ բաց թողեց, դարձաւ ամենքիս ու ասաւ.

—Աստուած պահի ձեզ, տղերք...

5.

Միւս օրը, ամեն տեսակ իրերով լցրինք նրա խուցը:

Ոչ միայն կուժ, այլև թէյ, շաքար, մոմ և բաժակներ էլ բերել էինք:

Ծերունին գուարթ, ժպտուն տեսաւ այդ ամենը, յետոյ թողեց, որ տեղաւորենք, ու ինքն ուղղակի գնաց դպրոցի տեսչին:

Դասերից յետոյ, տեսուչը մեզ եօթիս էլ կանչեց իր սենեակը և, երբ հաւաքուել էինք, նայեց ամենքիս երկար ու լուռ, յետոյ մօտեցաւ, ձեռքը դրեց առաջինի ուսին և ասաւ.

—Ապրէք, տղերք... Այժմ տուն գնացէք. ուրիշ ասելիք չունիմ ձեզ...

Յետոյ ժպտաց ու գլխով արեց:

Գժերի պէս դուրս նետուեցինք:

Ոչ մի բան այդքան հաճոյք չէր պատճառել մեզ. իմ դպրոցական կեանքի հչ մի օրն այդքան լաւ չէ անցել և այդքան քաղցր տպաւորութիւն չէ արել իմ վրայ, ինչպէս այդ օրը...

Վ. Փափազեան

23.

ԹՐՉՆԻԿՆԵՐ

(Վ. Հիւզոյից)

Ես սիրում էի մանուկ հասակում

Թռչնի ձագերին՝ բըներից ընկած.

Որոնում էի նըրանց մեր այգում,

Առնում թըփերից զգոյշ ու կամաց,

Եւ տուն բերելով՝ հիւսում եռանդով

Վանդակների մէջ բընիկներ քնքուշ.

Հոգում, մեծացնում սիրով ու խանդով

Խեղճ որբուկներին անճար ու անուժ...

Ու երբ ձագուկներն ոյժ առած արդէն,

Կուզէին լողալ լոյսի շողերում,

Բաց էի թողնում նըրանց թեազէն, միմայդ
Որ թոշեն անվախ, վըստան թըփերում: բարով
Եւ թոշում էին, ճըլւըլում, ճըշում.
Անհուն ցնծութեամբ լցում էր հոգիս, համ
զարդ եռ նորից նըրանց յետ էի կանչում, և զիամ
և միաւ Ռւ գալիս էին — ունկնդիր իրաքիւս:

Ա. Ծառուրեան
Գիւնացնցու գերամբ մաս նելլ գոյացու գիւնաց

24.

ԱԳՐԱՀԱՆԵՐԻ ՅԱՐՉԱԿՈՒՄԸ մաս մի չի
մարդաւ և այս ապահով մոջ ու չու դիմամի մաժաբովար
սիրիկնադէմին էր: Ելայ ծառը սալոր ուստելու: Բարձրաւ
ցայ ամենաբարձր ճիւղերից մէկի վրայ ու սկսեցի քաղել
հասունացած, կարմրին տուող, ճեղքուած, քաղցրահամ
սալորները: Երբէք այդչափ վերև չէի բարձրացել: Կանգ-
նել էի մի այնպիսի բարակ ճիւղի վրայ, որ, եթէ մի զօ-
րեղ շարժում անէի, պիտի կոտրուէր անպատճառ:

Յանկարծ նկատում եմ, որ հարիւրաւոր ագուաներ զա-
նազան կողմերից կուտելով գալիս են դէպի սալորի ծառը:
Սալորենին, որ լուսաւորուած էր պայծառ արեկ ճառա-
գայթներով, մի ակնաթարթում մթնեց:

Սկսե ագուաներն հաւաքուեցին գլխիս, նստուեցին սա-
լորենու ճիւղերի վրայ ու սկսեցին կատաղի կերպով կու-
տել, լայն-լայն բաց ու խուփ անել իրանց զագրելի կը-
տուցները:

Նըրանք իրանց տեղերում չէին հանդստանում, թոշում
էին մի ճիւղից միւսը, պտոյտներ էին անում իմ զլիխին,
մօտենում էին ինձ այնչափ մօտ, որ զգում էի, ինչպէս
նըրանց թեերը դիպչում էին մազերիս: Մի քանիսը, աւելի
յանդուգները շեշտակի յարձակում էին վրաս ու քիչ էր
մուռմ աչքերս հանէին:

Ես իսկոյն հասկացայ պատճառը: Ծառի վրայ կար ագ-

ուաւի մի բոյն, որի մէջ գտնւում էին նրա տգեղ ձագուկ-
ները, ես կանգնած էի անմիջապէս ագուաւի բունի տակ:
Այդ ատելի, տգեղ, չարագուշակ թոշուներն եկել էին տ-
պատելու իմ ճեռքից իրանց ընկերոջ բունը, որին միաս
տալու մասին իսկի չէի մտածում:

Ես յուզուած էի, թոյլ, մենակի, իսկ թշնամիներս կա-
տաղի և բազմաթիւ:

Ճարժում եմ ճիւղերը: Ագուաներն աւելի զայրացած
մի փոքր հեռանում են, բայց մինչև ես մի քայլ կանեմ
դէպի ներքի, մինչև ես կը բռնեմ մի հաստատուն ճիւղ
իջնելու համար, նըրանք աւելի ևս կատաղած, աւելի ևս
բարձրածայն կուալով յարձակում են վրաս:

Օգնութեան չեմ կանչում. հեռու եմ; ձայնս չեն լիի:
Աշխատում եմ ինքս դիմադրեմ, շարժում եմ անդադար
ճիւղերը, միակ միջոցը, որով կարող եմ պաշտպանուել:

Բարակ, վատանգաւոր ճիւղերը բռնելով իջնում եմ, ա-
ռանց նայելու, թէ ոտս ուր եմ զնում: Իմ հայեացքը
դէպի վեր է ուղղուած:

Թոյլ, բարակ ճիւղերը կոտրում են անդադար ոտիս
տակ, քիչ է մնում վայր ընկնեմ, բայց էլի փոքր առ
փոքր իջնում եմ:

Աշխատում եմ ոչ մի շարժում չանեմ դէպի ագուաւի
բունը, իսկ յարմար ճիւղերն էլ հակառակի պէս այն կողմն
էին գտնւում: Ագուաների կտցահարած տերեները, նուրբ
ճիւղերն անձրկի նման զլիխս էին թափում: Թշնամինե-
րիս զայրոյթը գագաթնակէտին էր հասել:

Վերջապէս, այդպէս կոփւ մղելով կարողանում եմ իջնել
այնքան, որ հասնում եմ հաստ ու ամուր ճիւղերին:

Ագուաների զայրոյթն էլ քիչ-քիչ մեղմանում է: Իրանց
բունը՝ միջի թանկագին ձագերով արդէն ագաւուած հա-
մարելով իմ չար դիտաւորութիւնից, պաշտպանութեան
եկած հարիւրաւոր ագուաներն սկսեցին ցրուել իրանց հե-
ռաւուր բոյները. սկսեցին աւետել ագուաւային աշխարհին
իրանց կատարեալ յաղթանակը:

Ես ծառի կէսից թուայ ներքեւ, գունատ, յոգնած. դողում
էի ամբողջ մարմնով և ագռաւների դռոցը դեռ հնչում
էր ականջումս:

Դողոջուն ոտներով վազեցի դէպի մայրս. ընկայ գիրկն
ու սկսեցի սաստիկ լալ.

—Մայրիկ, ագռաւներն աշքերս հանում էին...

Շ. Տէր-Նիկողոսեան

25.

Հ Ա Մ Ե Ր Գ

Վըտակը ժայռից ներքեւ է թըռչում,

Թափ առօթ ընկնում քարերի գըլմին,

Զարկում աւազին, շաշում է, ճըչում,

Ճըչում անհանդիստ, փըրփուրը բերնին:

Ինչպէս ծերունին, ձայնով պառաւած,

Զայնակցում է ժիր թոռնիկի երգին,

Այնպէս է ծերուկ անտառը կամաց

Արձագանք տալիս ջըրի աղմուկին:

Սակայն բընութեան գուարթ համերգի

Ունկնդիրն անխօս, յաւիտենական,

Ժայռը մըտախոհ, իր մըռայլ մըտքի

Ետկց ընկած, լըսում է նըրան:

Ցովի. Թումանեան

26.
Խոզ ոգ միա քառամ շամայ չմի զանց
Քի մանեանց թիմուն ոգ ձո ուզուն ոգ մանեանց
Խոզն Ոի Արծիկի

Տղմի մէջ թաւալող խոզը կանչում է արծուին իր մօտ:

—Կը կեղտոտուիմ, —պատասխանեց արծիւր:

—Ինչպէս... կեղտոտուել... Եւ միթէ կեղտոտուիլ
վատ է: Իմ հաճոյքն է այդպէս թաւալուել, վերարկուս
տիղմով զարդարել, մոռութս նրանով օծել... Գիտես, դա
մինչև անգամ օգտակար էլ է. զովանում ես, մի տեսակ
երանութեան մէջ ես ընկնում... խոստովանուում եմ, ես
առանց դրան ապրել չեմ կարող:

—Հասկանում եմ, այդպէս էլ ծնուել ես...

Խոզը մեծաձայն յօրանջեց, շուռ-մուռ եկաւ, նոր տղդ-
մով թաթախուեց, մոռութը կոխեց ճահճի մէջ, տրորեց
մեծ բաւականութեամբ...

—Խը՛մ, խը՛մ, խը՛մ... արեց խոզը նորից պառկելով:—
Այ թէ ինչ կ'ասեմ քեզ, արծիւ: Հաւատա ինձ, տղմի
մէջ ապրելուց լաւ կեանք չկայ. նախ՝ որ կուշտ կըլինես
և ոչ քեզ պէս անօթի. յետոյ՝ կըչաղանաս, երբէք շոզը
քեզ չի նեղացնի... խը՛մ, խը՛մ... ինձ չես հաւատում...
հարցրու գորտերին, որդերին... Այ, տեսնում ես, բոլորն
էլ չաղլիկ, առողջ են ու կուշտ:

—Տեսնում եմ, ասաց արծիւր. երևում է, որ ճահճի
մէջ ապրելը թէ կշացնում է և թէ չաղացնում:

—Անպատճառ, հաստատեց խոզը:—Դրան ապացոյց, որ
ոչ մի լղար խոզ չես գտնի. մինչև անգամ մեր ճագերն
էլ չաղլիկ են...

—Հասկանում եմ, ինարկէ. որուեղից խոզն իմանայ
բարձր թոշելու, մաքուր օդ ծծելու քաղցրութիւնը, բնու-
թեան գեղեցկութիւնը:

—Ի՞նչ, ի՞նչ... խոկացրեց խոզը, նորից կըկնիր... հա,
հա, հա... այ լաւ ասացիր... բանաստեղծ ես եղել, բարե-
կամ փետրաւոր... Իսկ անօթի լինելու, լղարութիւնդ...

գրանց ի՞նչ կ'ասես, դրանց... Այնտեղ, այն քո բարձրութեան, քո մաքուր օդի, քո գեղեցիկ բնութեան մէջ սեխի մնացորդներ կմն, աղբի չաղ պատառներ լինսեմ են, տղմային զով ու փափուկ սնկողին գտնւնեմ է...

— Քեզ հետ խօսելն աւելորդ է, — գոչեց արծիւլ. — դու ոչ մի հասկացողութիւն չունես մաքրութեան, գեղեցկութեան մասին... .

—Այ կ'ասես հա, —կանչեց խողը. ճիշդ է, չունեմ, բայց
մաքրութիւնս ո՞րն է, գեղեցկութիւնս ո՞րն է... փորդ կո՞ւշտ
է, մարմինդ պարանոտ է, անկողինդ փափկուկ—ահա քեզ
մաքրութիւն էլ, գեղեցկութիւն էլ. մնացած ամեն ինչ յի-
մարութիւն է... ասաց խողը. Ու նորից մի լաւ յօրանջեց,
շուռ-մուռ եկաւ տղմի մէջ, մոռութը նորից կոխեց-թացա-
ցրեց և աչքերը փակեց։

Ψ. Φωφιαδηώ

27

Ն Ճ Ղ Ո Ւ Կ ...մասնաւոր տուբեռ?

Որսից տուն գալիս՝ ես անցնում էի այգու ծառուղիով։
Իմ առաջիտ մազում էր շունս։

Յանկարծ նա ոտքը կախ զցեց և սկսեց գաղտագողի առաջ գնալ, ասես, ոռսի հոտ էու առեւ:

Ես նայեցի հեռուն, ծառուղու երկարութեամբ—և ճանապարհի վրայ տեսայ մի ճնճղուկի ձագ, որի կացի շուրջը դեղնաւուն էր, իսկ զլուխն աղուամաղով ծածկուած։ Նացած էր ընկել բնից (քամին սաստիկ օրօրում էր ծառուղու երկու կողմի թխտենիները) և իր նորաբոյս թկիկներն

Շունչ սկսել էր կամաց-կամագ մօտենալ նրան, երբ

յանկարծ մօտակայ ծառից վայր նետուելով մի պառաւ,
ու կը քով ճնճղուկ, քարի պէս, ընկաւ շան հէնց դնչի
առաջ։ Փետուրները քրքրած ու կրակ կարած՝ յուսահա-
տական սուր ճաճւցով նա մի քանի թռիչք գործեց դէպի
շան բաց ու ժանեղ բերանը։

Նա վրայ հասաւ, որ փրկի իր ձագուկին. Նա թերող պատսպարում էր նրան... Իսկ նրա ամբողջ փոքրիկ մարմինը գողում էր ան ու սարսափից. Նրա բարակ ձայնը բըրտացել, խրծուել էր. Նա ուժասպառ էր լինում, նա զոհուում էր...

Ի՞նչ ահագին հրէշ պիտի երևար նրա աչքին իմ շուշու:

Բայց նա չգիմացաւ, նա չկարողացաւ հանգիստ նըստած մնալ բարձր, անվտանգ ճղան վրայ... Ոյժը, նրա կամքից աւելի զօրեղ ուժը, վայր նետեց նորան անտեսեց:

Տրես կ ըստ ու յ շ է յ լ ա ն ա յ ա ս ո վ ք ք ։
Տրես կ ա ն գ ա ռ ա ւ , ե տ ե տ ք ա շ ո ւ ե ց ... Ե ր կ ի , ն ա է լ
զ գ ա ց ա յ դ ո վ բ ։

Ես շտապեցի Ետ կանչել շփոթուած շանս—և հեռացայ պատկառանքով:

Այս, մի ծիծաղէք: Ես պատկառանք զգացի դէպի այդ փոքրիկ հերոս թռչունը, դէպի նրա սիրառատ ոյժն ու թափր:

Սէրը, մտածում էի ես, աւելի զօրեղ է, քան մահն ու
մահուան երկիւղը։ Միայն նա, միայն սէրն է, որ պահում
ու առաջ է տանում կեանքը։

Այ. Ծառուրեան

28.

400 k u y

Կոռնկնկ, ուստի կուգաս, ծառայ եմ ձայնիդ
Կոռնկնկ, մեր աշխարհէն խարրիկ մի չունիս.
Մի վագեր, երամիդ զուտով կը համիս,
Կոռնկնկ, մեր աշխարհէն խարրիկ մի չունիս.

Թողեր եմ ու եկեր մըլքերս ու այդիս, նպախմալ
Քանի որ ախ կանեմ, կը քաղուի հոգիս, իսցնո՞ւ մն
Կոռնկ, պահ մի կեցիր, ձայնիկդ'ի հոգիս,

Կոռնկ, մեր աշխարհէն խաբրիկ մի չունիս: մայաւ
Խոդմել ամ ձեմուն զի վեցի որ ասած ժողովրդական
Հանք թիզոցի լրոյն աշ իտ մաց զի և ուղարսաւր
Հոյց զայտ լայաց աց աժխացաւ ու ամ զի և ուրոք զայն
Տոր ամ մասնի զի ապրուն ամ . զի յանձնու ըմբաւ
Եր ամ մասնի զի ապրուն ամ . զի յանձնու ըմբաւ

29.

ԵՅ, ԶԱՆ ՀԱՅՐԵՆԻՔ...

ԵՅ, ԶԱՆ ՀԱՅՐԵՆԻՔ, ԻՆ ՀՔԱՆ ՍԻՐՈՒՆ ԵՆ, ՅԱՅ
Այց ու Սարերդդ կորած երկնի մովի մէջ, ոյ խան նառ
Զրերդդ անհւշ, հովերդդ անհւշ,
Մենակ բալէքըդ արուն-ծովի մէջ... սպօրման

Թո հողին մեռնեմ, անգին հայրենիք,
Ա՛խ, քիչ է, թէ որ մի կեանքով մեռնեմ.
Երնէկ ունենամ հազար ու մի կեանք,
Հազարն էլ սրտանց քեզ մատաղ անեմ...

Աւ. հսահակսան
Խունք ու արդոր միւսու ու մի նուռակ առ
Խունք ու արդոր միւսու ու մի նուռակ առ
30.

Ծ Ի Ծ Ե Ռ Ն Ա Կ

Ծիծեռնակ, ծիծեռնակ, Անդ շինիր քո բունը—
Դու գարնան սիրուն թոշնակ, Հայրենի կըտուրի տակ,
Դէպի հւըր, ինձ ասա,
Թըռչում ես այդպէս արագ:

Ա՛խ, թըռիր, ծիծեռնակ, Անդ հեռու ալոր
Ծընած տեղը Աշտարակ,

116

Երբ տեսնես դու նըրան՝ Ես ծաղիկ գեղեցիկ,
Խնձից շատ բարե արա, Հայրենի հողից զըրկուած:
Ասա, թող նըստի լայ Արածանիսայն սըրածայ սդիր
Իր անբախտ որդու վըրայ: Դէհ, սիրուն ծիծեռնակ,
Հեռացիր, թըռիր արագ,
Ասա, որ չըբացուած Դի հայոց երկիրը, Ծընած տեղս Աշտարակ:
Խճման թէց ին յանձնու ու էջ դանա ունեամ
Ասուն թէց ամ է քան ուսի բանկան մի նուռակ առ
ամ թէց նուռամ ընթաց զիբաց ուրը ընթաց

մամբառ լ. Ա

31.

ՎԵԶԻՐ ԱԲԴՈՒԼՀ

(Լ. Տօլստոյից)

Պարսից թագաւորը մի արդարասէր վէզիր ունէր՝ ա-
նունն Աբդուլ:

Մի անգամ նա թագաւորի մօտ գնալիս՝ անցնում էր փո-
ղոցի միջով: Իսկ այդ միջոցին քաղաքում մեծ ժողովուրդ
էր հաւաքուել ու ապատամբուել էր ուզում: Հէնց որ ժո-
ղովուրդը վէզիրին տեսաւ, չորս կողմը պատեց, ձին կանգ-
նեցրեց և սկսեց սպառնալ, որ կըսպանի նրան, եթէ ժո-
ղովուրդի ուզածը չկատարի: Մէկի համարձակութիւնն
այն տեղ հասաւ, որ նա մինչև անգամ բռնեց վէզիրի մի-
րուքից ու մի քանի անգամ քաշքշեց:

Երբ ազատ թողին վէզիրին, սա եկաւ թագաւորի մօտ
ու շատ խնդրեց, որ օգնի ժողովրդին և իրան հասցրած
անպատութեան համար ոչոքին չպատժի:

Միւս օրն, առաւօտեան վէզիրի մօտ եկաւ մի մանրա-
վաճառ: Վէզիրն հարցրեց, թէ ինչի է եկել:

Մանրավաճառն ասաց.
—Եկել եմ, որ քո ձեռքը տամ այն մարդուն, որ ե-
րէկ անպատուեց քեզ: Ես նրան ճանաչում եմ. նա իմ

117

հարեանն է՝ անունը նահիմ։ Մարդ ուղարկիր, բերել առւր
ու պատժիր նրան։

Վէզիրն արձակեց մանրավաճառին ու մարդ ուղարկեց
նահիմի ետևից։

Նահիմն իսկոյն գլխի ընկաւ, որ իրան մատնել են։ Կէս-
կենդան, կէս-մեռած նա եկաւ վէզիրի մօտ ու ոտներն
ընկաւ։ Վէզիրը թեփ բռնեց, ոտքի կանգնեցրեց ու ասաց։

—Պատժելու համար չէ, որ կանչել եմ քեզ։ Կանչել
եմ, որ ասեմ, թէ հարեանդ վատ մարդ է։ Նա քեզ մատ-
նեց. զգուշացիր նրանից։ Գնա, Աստուած քեզ հետ։

ԱԼ. Ծատուրեան

32.

ԱՔՍՈՐԱԿԱՆ

(Վ. Հիւզոլից)

«Վառ ծաղիկներ, անուշ բուրմունք դաշտերում։
Հիւր է եկել մայիսն ուրախ, գեղեցիկ։
Միթէ ոչ մի ուրախութիւն չեն բերում,
Աքսորական, քեզ ոչ արև, ոչ ծաղիկ։»
—Այն ծաղիկներն, որ հայրենի աշխարհում բարձրացրել եմ ու փայտայել սիրավառ,
Միայն, միայն եմ նըրանց եմ միաւ բերում...
Առանց նըրանց՝ մայիս չըկայ ինձ համար։
«Աքսորական, նայիր, անշարժ շիրիմներ
եւ նըրանք են, ասես, զարթել, կեանք առել։
Այդ արեն է՝ շաղած ոսկի ջերմ շողեր,
Տըխուր, նիրհած շիրմավայրում կեանք վառել։»
—Ես յիշում եմ այլ շիրիմներ անբարբառ,
եւ իմ ձեռքով յաւէտ փակած այլ աչեր...
Միրելի չեն տան ջոււած սըրտիս այս օտար
Ոչ երկինքը, ոչ արել կենսաբեր։
«Աքսորական, տես, ինչպէս են թըռչնիկներ

Բըներ հիւսում թաւ անտառի խորքերում.
Հնչում է կեանք, երջանկութիւն, լոյս ու սէր
Նըրանց գողտրիկ, անուշախօս երգերում։»
—Ես յիշում եմ հայրենական իմ բընիկ,
իմ պաշտելի, նուիրական այն աշխարհ,
Ուր թողել եմ հարազատներ, սիրելիք...
Օտար երկրում մայիս չըկայ ինձ համար։

ԱԼ. Ծատուրեան

33.

Ա Ր Տ Ո Ւ Ի Տ

Արտուտիկ ինչու թըռչում ես վեր-վեր,
Երկընքէն ասում դու տըխուր տաղեր.
Պարտէզ ու այգի ինչու չես գընում,
Թընքոյշ ձագերըդ որտեղ ես հանում։
—Աի, շատ են, շատ են իմ կըսկիծն ու ցաւ.
Իմ մըտերիմը գընաց, հեռացաւ.
Հայ հողագործը՝ իմ սերտ բարեկամ,
Թըշնամու անէն գընաց գաղթական։
Այն օրից հայոց դաշտք ամայացան,
Բերրի արտերը վըշով լըցուեցան...
Զոր գետնին չունիմ էլ հանգստութիւն.
Ահա ինչում եմ ես երկինք թըռչում։
Երկինք եմ թըռչում ցերեկ, իրիկուն,
Երգով աղերսում միշտ Տէր-Աստըծուն,
Որ մեզ ողորմի իր աջով գըթած,
Հայ հողագործին անէ գերադարձ.
Հայ աշխարհ բերէ խեղճ հայ գեղջուկին—
Այս է խորհուրդը իմ տըխուր երգին։

119

Առաջնայի վահանակ պատճեն
ՊԱՆԴՈՒԽԻՏԻ ԵՐԳԸ

«Թըռչնիկ, թըռչնիկ, որ չուել ես հեռաւոր
Մեր աշխարհից, — ախ, ի՞նչ ունես պատմելու»:
— Այնտեղ քո մայրն արտաւում է ամեն օր,
Ճակատագրին միշտ հըլու...

«Թըռչնիկ, թըռչնիկ, որ ապրել ես՝ բուն դըրած
Մեր կըտրան տակ, ի՞նչ բարև ես ինձ բերել»:
— Այնտեղ քո տունն անտէր, անլոյս, աւերած,
Այնտեղ ամենքն են մեռել...

«Հողմիկ, հողմիկ, իմ հայրենի աշխարհի
ի՞նչ լուր ունես..., քեզ եմ մընում անհամբեր»:
— Այնտեղ կըուում լընդիմ թոյնի ու չարի
Զոհւթւմ են քո եղբայրներ...

«Հողմիկ, հողմիկ, միթէ այնտեղ ոսկեվառ
Արշալոյար դեռ չի յաղթել մութ խաւար...»
— Օ՛, ոչ... այնտեղ, առաջուայ պէս, տեսայ ժանտ
Միայն դահիճ ու մութ բանտ...

Ա. Շատուրեան

35.

Ա Շ Ո Ւ Ք

Կանաչ այգիները, որ մարդու սիրտ էին ուրախա-
ցնում իրանց գեղեցիկ տեսքովն ու անուշ հոտովը, Աս-
տուծոյ փռած կանաչ գորգերովը, հազար տեսակ ծաղիկ-
ներովը, — հիմայ այնպէս են դարձել, որ մարդ չի ուզում
երկրորդ անգամ վրաները նայի: Խաղողի որթերը, որ

գլուխ գլխի կպցրած՝ իրանց սաթի նման ողկոյզներովը
մարդու բերանի ջուրն էին բերում ու երեսին ծիծա-
գում, — հիմայ բոլորովին մեռած են երկում, հողը գլխնե-
րին տուած: Ծառերը, որ մի փոքր հով ընկած ժամա-
նակը իրանց տերեների սօսափիւնով ամեն տիրած սիրտ
բաց էին անում, — հիմայ մերկացած՝ մի տերև էլ չես գտ-
նում վրաները. միայն չոր չոփերն են երևում բիզ-բիզ:
Զրերի ափերը, որ իրանց գոյնզգոյն խոտերով ու ծաղիկ-
ներով անուշ բուրմունք էին տարածում չորս կողմը, —
հիմայ, կարծես մեռած մարդու երես են դարձել՝ ծառե-
րից թափուած, դեղնած տերեներովը: Ամեն բան էլ փո-
խուած՝ մի տիրուր տեսարան է ներկայացնում:

Ուղրոս ցախաճը զժ սժամին մղմաժը լավբառ ով լման
Նուցացացայտ ըլքան զարած՝ սիյմախը զար Պ. Պոչեան որ
պասոյ» ցմինզան տրզան ու զժ նուցան Նուհան
/ըմբայ մաս թիւ միան ըլքան զարած թիւ միան մաս
/լալոց մաս բանս զարած 36. այսու դրան յաստ զարած
/մի սամ լուսա լայի զարած ըլք-ըլք ու յմբ զժ մար
լամբայճ զամ նայ նայ նայ զար ու զար ու զար

ՄՆԱՌ ԲԱՐԵՒ...

Մընաս բարե, իմ հայրենիք,
իմ լոյսօրնցք մանկութեան.
Քեզ պաշտել եմ ես ջերմ սիրով,
եւ կը պաշտեմ յափտեան:

Թող հալածէ ինձ բախտը չար,
թող ինձ քըշէ մութ հեռուն.
Դու իմ երգում, դու իմ հոգում ու ու
կապրես, որպէս լոյս-գարուն:

Օրս ու միջրմասն զալոյր ու առաւան սրա միարծիւ
Ուր էլ լինեմ, ուր էլ տանջուեմաց ցըմաշան
թէկուզ անել բանտի մէջ...
Մինչ գերեզման կը փայփայեմ այս այլան
Քո սէրն անմեռ ու անշէջ...»

Մընաս բարե, իմ հայրենիք, ճայրավ դոյլը սիրով
ինձ կեանք, արև պարգևող, ով ժմանց արշան
մանիք Մընաս բարե... Վերջին անգամ
ահա Համբուրում եմ քո սուրբ հոդ... Ենատո միջ
ովին նադիմ մեմ խուժիանու վիճակը ըմանը զման
որ սէ յէ միւս մի հարցման լաւիշ... Ենատո միջ բայ
քիշ-քիշ նրանց մա մշտու զու մասին ովանց ինու
քիրած ու խոյման մոր Յուրաքանչու չուն խոցան
մասի բանցար մա սէջ Զ Մը ե Ա Ենատո սանցաք լաւիշ
որ յ մայ սմամ յշուղման նամքար նաւինի ըջ

Բարիկենդան էր: Զիւնն եկել, պիզուել, սար ու ձոր
բռնել էր: Պարզկայ գիշերն այնպէս էր գետինը սառցը ել,
որ ամէն մէկ ոտը կոխելիս՝ հազար տեղից տրաքտրաքում,
ձոռնում, ճաքճռում էր ու մարդու մարմինը սրսուաց-
նում: Ամէն մէկ ծառի ճղներից, ամէն մէկ տան բաշից՝
հազար տեսակ սառցի լուլայ, հազար տեսակ ճնի քուլայ՝
կախ էր եղել ու բիզ-բիզ իրար վրայ սառել: Ասես թէ,
սար ու ձոր կամ նոր էր ծաղկել, կամ նոր ծերացել,
մահուան դուռն ընկել: Թոչուն, գազան, անասուն, սո-
ղուն՝ որը փէտացել, այստեղ-այնտեղ վայր ընկել. որն էլ
վաղուց, ամսով առաջ բուն մտել՝ ձայնը կտրել, պաշարը
վայելում, գարնան գալուն էր սպասում: Գետերի, առու-
ների երեսը սառոյցը մէկ գագ եկել, հաստացել, իրար
վրայ դիզուել՝ այնպէս էր ջրի, աղբը բերնին հուպ տուել,
որ մօտներին կանգնողը միմիայն նրանց խուլ ձայնն էր
լսում, որ սառուցի տակին տիսուր-տրտում քլքում էր ու
էլ ետ այստեղ-այնտեղ կամաց-կամաց ձայնը կտրում,
պապանձում, սառչում:

Արեգակն այս առաւօտ, որ գլուխը քնատեղիցն ու աղօ-
թարանիցը չբարձրացրեց ու աչքերն աշխարհի վրայ գցեց,
շողքը սարերի գագաթին, — գաշտերի գլխին այնպէս էր պէ-
ծին տալիս, պապում ու սառցի, ճնի հետ խաղում, ծի-
ծաղում, կանանչ ու կարմրին տալիս՝ որ հէնց իմանաս

աղամանդ, զմբուխտ, եաղութ ու հազար տեսակ անգին
քարեր լինէին՝ դաշտերի, սարերի գլխին, երեսին, կրծքին
փուած: Սարերի սառը բուքը, ձորերի սառնաշունչ քամին
այնպէս էր հրապարակ բաց արել, գոռում, փչում, ճնի
թեփը իրար գլխով տալիս, որ ճանապարհորդի քիթ ու
պառնողը կպցնում, ճաքանում, երեսը պատուում, գլխին
հազար անգամ խփում, աչք ու բերանը լցնում էր. շա-
տերին էլ կամ ձորերն էր գցում, կամ ճնումը թաղում,
շունչը կտրում կամ ոտ ու գլուխը փէտացած՝ ճանապար-
հից հանում, սար ու ձոր գցում, քարեքար տալիս:

Խ. Արովեան
Դիմացայդ աղմարապատում վանա լայ
Շունչ գլուխայդ դիմարապատում վանա լայ
38. Օ զմ այն յամբար նոր
ամպրը մարմարաց են զմ յալուց զնույն ամպր
ամպարար խրանցմանը * * ուն և խրանցմար զույն
անշատ դամմաւու Պարզկայ գիշեր...

Աստղերն երկնքում լուռ պսպղում են.
Լուսնի շողերը դիպել են սարի
առաջ պի Զիւնոտ կողերին,— կողերը ցոլում
Պէծին են տալիս:
Ցրտաշունչ քամին ուստան զրա ըու
թէերը փուած փնչում է, թոչում, ով մզլաման
Սառած երկիրը ճաքում-ճաքճռաքում
Զեան հատիկներով քարափի կուրծըը
Ծեծնում ու ծեծնում...

Անծայր ճանապար...
Առաջ եմ գնում—ուր, — ես չըդիտեմ.
Սառհյո ու ձմբո.

Առաջ եմ գնում անյոյս, անընկեր.
Քամի ու գիշեր.
Ժաման առ Ակին, եթէ յանկարծ յոյս շողողար, —
Նա ինձ ողջունէր...

միքամ յասնա զարաւ 39. որում տախողներ՝ քմանարա
միջնորդ և մասնակի մասնակի մասնակի մասնակի

ԶՐՈՌՀՆԵԼՔԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՉԱԼՈՅՄԻՋ ԱՌԱՋԸ ԱՆԴՐԻ
տարակ գիշեղի եկեղեցու զանգերը խփեցին. ամեն մարդ
իր ընտանիքով զնաց եկեղեցին. Հէնց որ պատարագը վեր-
ջացաւ, տէրտէրներն ու տիրացուներն առօք փառօք զար-
գարուած, խաչ ու խաչվառով, քշոցներով ու բուրվառնե-
րով, կնողուկի հոտն աշխարհը լցնելով, ժողովուրդն առաջ-
ներն գլխաբաց զնալով, խաչը տարան «Մելքիթ բազէն»,
այնտեղ առւումը ջուրը զցելու համար. Առուի եղերքի
ուոխների վրայ ամուրի երիտասարադներն հրացանները
լցրած, կանգնել էին. մեր Սօսն էր դրանց գլխաւորը. Առուի
երկու կողմը շարուել էր մեծ բազմութիւն. «Ազրկենց
կալը» կանանցով և հարս ու աղջկերանցով զարդարուել
էր. մարդ չկար, որ մի փոքրիկ շիշ չունենար խաչա-
լուայ վերցնելու համար:

Հէնց որ մեռոնը ջրի մէջն ընկաւ, ուոխների միջից հը-
րացաններն սկսեցին որոտալ. ամեն բերանից այս խօս-
քերն էին դուրս գալիս. «Ո՞վ Սուրբ Մեռոն, դռւ մեր հա-
յոց ազգը հաստատ պահես, ամէն ցաւի փարատում լինիս»:
Կանայքն էլ, արտասուր թափելով, ջերմեռանդութեամբ
աղօթում ու իրանց ցաւերին դարման էին խնդրում. Ա-
ռուի վրայ կանգնածներն էլ մի-մի շիշ խաչալուայ էին
վեր առնում, աչքներին քսում, մի քիչ խմում ու պահում
տուն տանելու համար:

Խաչը ջրից դուրս հանելու ժամանակ, տէր հայրը մի
այնպիսի ազդու քարոզ տուեց, որ թէ ինքը լաց եղաւ և
թէ ժողովրդին լացացրեց:

Տէրտէրի քարոզն ամէն մարդու սիրտն էլ գութ զցեց,
բայց մեր ջերմեռանդ Սօսը ամենքից առաջ ընկաւ, ծառի
վրայից ձայն տուեց. «Ես երեք ոռութիւնի կը տամ, կը հա-
նեմ. իմ կարողութիւնս այսքան է ներում. ո՞վ աւելի կը
տայ՝ հրամայեցէք»:

— Դէն, ցած արի, օրհնեալ լինի քո ծնունդը, — ձայն
տուեց մեծ տէրտէրը. — անցեալ տարի դոնաբացէքը դու
արիր, հիմայ էլ խաչին ևս կնքահայր դառնում:

Սօսը ցած իջաւ, հրացանն ու զէնքերը եղբօրը տուեց,
գնաց տէրտէրի կողքին կանգնեց:

— Օրհնեալ լինի Սօսը, — բարձր ձայնով ասաց տէր հայ-
րը, — Աստուած սրա հաւատն օրհնի, շատ ապրի, Քրիս-
տոս սրա սրտի խորհուրդը կատարի. անցեալ տարի ժամի
դուռը բաց արեց, հիմայ խաչն է ջրից հանում, Յովհան-
նէս Մկրտչին փոխանորդ դառնում, երեք ոռութիւն էլ փող
է տալիս սուրբ եկեղեցու օգտին:

Ամեն տեղից կանչեցին. «Զօրանայ ինքը, խաչն իրան
պահի, շատ լաւ է անում»:

Տէրտէրը խաչը ջրիցը հանեց, թաշկինակը ձգեց Սօսի
կրծքին, խաչը տուեց գիրկն ու շարական ասելով յետ
դարձան դէպի եկեղեցին. Մինչև եկեղեցի մտնելը երի-
տասարդներն իրանց հրացանները ճանապարհին տրաք-
տրաքացնում էին:

Խաչը տարան եկեղեցի. Սօսին կանգնեցրին սեղանի
տուածը՝ խաչը գրկին. ջերմեռանդ ժողովուրդն եկաւ՝ համ-
բուրեցին ու գնացին իրանց տները:

Պ. Պոշտան

ՂԱՐԻՊ ՄՇԵՑԻՆ

Ղարիպ ախալէր, արի մեր տուն, ||
Բուք-բորանին ուր կ'երթաս, զա լլաւ ||
Հերիք այդքան թափառելով, ու Ս
Սև դարդերդ քամուն տաս: ||
Անտուն ախալէր, արի մեր տուն,
Էս էլ հայի օջախ է.

Իմ պաղ ջուրըս, ունչոր հացըս, նացը—
Քեզ պէս ախազօր հալալ է, իշխան ճնշու
Մշակ ախազէր, արի մեր տուն,
Դարդ ու ցաւդ ինձ պատմէ.

Լաց լացի տանք էս մեծ տօնին,
Սիրտըս լացի կարօտ է...

Աւ. Խսահակեան

41.

ԵՐԱԶ

Ես լըսեցի մի անոյշ ձայն—
Իմ ծերացած մօր մօտ էր.

Փայլեց նըշոյլ ուրախութեան—
Բայց, ափսոն, որ երազ էր:

Կարկաչանոս աղբիւր այնտեղ
Թաւալում էր մարգարիտ.

Նա յըստակ էր, որպէս բիւրեղ:—
Այն երազ էր ցնորամիտ:

Եւ մեղեդին տխուր մայրենի
Յիշեց մանկութեան օրեր.

Մօրըս համբոյըն ես ըզգացի:—
Ախ, ափսոն, որ երազ էր:

Կուրծքին սեղմեց կարօտագին,
Աչքերս սրբեց—շատ թաց էր—

Բայց արտասուքս զընում էին...
Ախ, այդ ինչու երազ էր:

Ա. Շահագիզեան

42.

ԳԱՐՈՒՆ

Ապրիլ ամիսն էր, արկի քաղցր ժամանակը:
Կանաչել էր դուռ ու տանիք, իսկ բաղ ու բաղչէքը,
Դաշտ ու ձորերը, էլ ինչ ասել կուզի, զարդարուել էին
հազար ու մի տեսակ կանաչով ու ծաղկով: Թէպէտ դաշ-
տային ծաղիկներից գեռ շատերը չէին բաց արել իրանց
սիրունիկ աչիկները, բայց ծառ չկար, որ ծաղկած չինի,
որը գեղին, որը սպիտակ, որը գեղնասպիտակ, որը կար-
մրակապոյտ—և իրանց անուշ հոտովն ու քաղցր բուրմուն-
քովը սար ու ձոր լցրել, իրանց գեղածիծաղ տեսքովը
մարդկանց սիրտը փառաւորել:

Գարնան ամեն մի բոյսը, ամեն մի ծաղիկը մարդի ե-
րեսին ժպտում ծիծաղում է, կարծես նրանցից ամեն մէկը.
Ինքն ամենքին ու ամենքն իրան՝ ուրախացնում լինին:

Մէկ էլ տեսնում ես՝ ահա թոչկոտալով, ոստոստալով գա-
լիս են տեսակ-տեսակ մանր ու խոշոր, աննախշ ու նախ-
շուն, զօլ-զօլ ու պուտապուտուրիկ թոչնիկներ: Եւ ինչքան
ուրախ, ինչքան զուարթ, մի բոպէ չեն դադարում, մի
զլուխ երգում են:

Մէկ ասող լինի, գուք ինչ էք իմացել, ինչի վրայ էք
ուրախանում այդքան:

Ոչինչ, ինքը բնութիւնն ուրախ է, ուրախ են և բոլոր
արարածները:

Դ. Աղայեան

Մ Ա Յ Ի Ս

Ահա հասաւ մայիսը, մեղրակաթ մայիսը, տամներկու եղբայրների մէջ ամենագեղեցիկը: Մեր հայրենիքում այս ամիսը հեղիկ-նազիկ պարում է բլուրներում ու հովիտներում: Նրա ձեռքն ու ծոցը, գլուխն ու գօտին լցուած են փունջ-փունջ, գոյն-գոյն ծաղիկներով: Նրա գալովը փըրփըրուած աղբեւըները կանչում քըրքըչում են, քնքափետուր թոշնիկները երգում պարում են, թեթևաթիկ ու լերըն ու գառնուկները ցատկում վագվզում են: Անուշանոտ հովերն ու զով գեփիւռները տարածում են ամեն կողմեր գարնան քաղցր բուրմունքը, երբ բլրից-բլուր ոստոստելով անցնում վազում է գեղեցիկ մայիսը: Նրա շաղակաթ շընչից ծաղիկները վառ վառ շողշողում են, պառզները խայծ-խայծ կարմրում:

Ամպ ու թուխալ է եկել, պատել
Խեղճ եղբօրը սև կեանքին.
Երկար լալուց արցունքն հատել,
Ել վերջ չըկայ տանջանքին...

44.

Սիրուն գարուն, կանաչ գարուն,
Քեզ ինչ սըրտով ողջունեմ.
Դու մեզ բերիր լաց ու արիւն...
Ել ես ուրախ երգ չունեմ:

Երգում էի ջերմ կարօտով,
Գովքըդ անում ամեն օր,
Երբ մեր երկում քո քաղցր հոտով
Միշտ լրցուած էր սար ու ձոր:

Երգում էի քնարը լարած՝
Մեր կեանքի լոյս օրերում.
Երգում էի բըլբուլ դառած,
Քանի վարդ կար հայ երկում:

Ախ, ինչ սըրտով երգեմ հիմիկ,
Քեզ ինչ սըրտով ողջունեմ.
Փուշ են դառել վարդ ու ծաղիկ...
Ել ես ուրախ երգ չունեմ:

Մեր տուն ու տեղն՝ հող, աւերակ,
Մեր լոյս օրերն իսպարել,
Մեր յոյսերը սև մոխրի տակ,
Մեր դարդերը ծնվ դառել...

Ամպ ու թուխալ է եկել, պատել
Խեղճ եղբօրը սև կեանքին.
Երկար լալուց արցունքն հատել,
Ել վերջ չըկայ տանջանքին...

Սիրուն գարուն, կանաչ գարուն,
Քեզ ինչ սըրտով ողջունեմ.
Դու մեզ բերիր լաց ու արիւն...
Ել ես ուրախ երգ չունեմ:

Ա. Ծատուրեան

45.

Ա Ռ Ա Խ Օ Տ

Առաւոտ է: Ինչպէս ամեն տեղ, այնպէս էլ հայաստանի գիւղերում ամենքը շարժողութեան մէջ են: Գիւղացիներն արդին զարթնել են այն փոքրիկ թոշնիկի ձայնից, որ գալիս նստում է երդիկներին ու կանչում. «Լծէ, լծէ»:

Նրանք արդէն չծել են իրենց եզներն ու գոմէշները և բաւական վարել են գետինը։ Տների մէջ մատակներն ու կովերը կթել են։ Ոչխարների հօտն էլ դաշտումը մատղաշ արօտներից արդէն մի քաղցր նախաճաշէ արել։ Տանտիկինն էլ կովերն ու հորթուկներն է գուրս հանում։

Գիւղի աղջկերքն էլ խումբ-խումբ գնում են դէպի կանաչ մարդագետինը՝ ծաղիկները ոտքի տակ տալով, ծաղիկներ քաղելով ու իրար վրայ ածելով, ծիծաղելով, խայտալով։ Նրանք հանդիպում են կաքաւների երամին, լորին, արտուտիկին, որոնք խոտերի տակից թռչկոտում են թփից թուփի, ուղենալով իրար նմանել. դու ասա—աղջկերք՝ թեաւոր թռչուններին, թէ թռչունները՝ ոտնաթոփիկ աղջկերանց։ Նրանք անցնում գնում են առաջ՝ բանջարներ ժողովելու ու կանչելու—աղջկերք՝ «քա, քա», կաքաւները՝ «գաւ, գաւ»։

Կուտնկը երամով կարաւանն է կազմել սլաքաձև. օղի բարձր տեղերով անցնելով՝ «կո՛ր, կո՛ր» է կանչում։ Ծառայ եմ ձայնին։

Երկարաւունք արագիլը կտուցը սրած՝ բոյնից դուրս է եկել. «հօդ, հօդ» ձայնելով դէպի դաշտն է վազում՝ ջրի ու ցամաքի օձերը բռնելու ու սպանելու։

Չորթան-տարուկը գիւղի տանիքների վրայ ու բակերի մէջ է թագնուել, որ չորթան յափշտակէ։

Կոյր բուն՝ վերջացրած իր «վայ վայ»-ն, որով սգում էր գիշերը մի չորացած ծառի կամ գերեզմանաքարի վրայ նստած, այս ժամին իր համար մի բոյն է որոնում, որ պահուի այնտեղ։

Չկնկուլը գետերի ափերն է վազում ու «ձը՛կ, ձը՛կ» կանչելով՝ ձուկ-մուկ է որոնում կուլ տալու։

Բագն ու սագը ջըերի երեսին նստած՝ կայտառ նաւավարների պէս թռվում են ու երգում։

Ասնրակատար յոպոպն անհանգիստ ոստոստում է և անդադար աղաղակում, «յոպ, յոպ»։

Դեղնապորտիկը փափուկ ու մաքուր, ճերմակ ու դեղին շորեր հագած՝ փոքրիկ մացառների ու թանձր խոտերի միջից գլխիկը ցոյց տալով ու թագցնելով՝ իր ձայնն է լսեցնել տալի։

Սոխակի գայլայլիկն էլ լսւում է բոլոր երգողների ձայների հետ և ամեն լսողի ուշքը ու միտքը վերացնում։

Բարբարոս բազէն որոտացող ձայնով վեր ու վար է սլանում՝ անմեղ ու անզգոյշ աղաւնի կամ տատրակ պատառուելու։

Անգղները, ձրի ապրող քրգերի պէս, մի սպանուածի հոտ առել՝ գոռում են նրա գիտկի մսերը կողոպտելու։

Ահա երկում է և արծիւը։ Նրա հզօր թեկերի բաղխումից օդը շառաչելով պատուում է. բոլոր թռչունները մի անգամից լուսում են, մինչև անցնի, հեռանայ այդ ահեղ ու փառահեղ թագաւորը։

Գ. Մըռանձտեան

46.

ՀԱՅՐԵՆԻ ՏՆԱԿ

Յիշում եմ անշուք, աղքատ մի տընակ
Յետ ընկած թաղի մի խուլ փողոցում,
Ուր աղբում էի մօրը թեկի տակ—
Սիրոյ, գըգուանքի լոյս-օրօրոցում...

Այնտեղ իմ սիրած թըթենին հըսկայ՝
իմ ծաղիկ կեանքի ստուերաշունչ վըկայ,

Ոստերը փրոած խարիսուլ կըտուրին՝
կըտուրն էր ծեծում հողմոտ գիշերին...

Այնտեղ պըլպըլան բուխարու կողքին,
Ցոլուն շողերում, որպէս լոյս-ողին,

Մայրը ինձ շոյնում, զըրկում, գուրզուրում,
Շըրթունքիս սիրոյ վարդեր էր վլուռմ... .

Անհուն կարօտով յիշում եմ քեզ միշտ, յառ յժմ
Անշուք, աղքատիկ հայրենի արմակ, յիսպէս
Ուր կեանքըս խաղուն քըրբըլաց անվիշտ,
Որպէս լեռնային արծաթի վըրակ... .
Ալ. Ծատորեան

Յնաւայս մի ամր դիմուդ բարս դիմ պահարքած
Հարմարով դիման պահան 47.

Երանուայ դիման զօր այս ոչ ոչ ենակ ամբ
ԱՄՄՈՒԾ ԵՐԵՒԱՆՈՒՄ նոյնառաջ զրո
ու բան բան բան բան բան բան բան բան բան բան

Ճաշուայ շոգն անց էր կացել: Սարու ձոր վլուխները
նորից բարձրացնում էին, որ փոքր շունչ առնեն: Արե-
գակը Մասիսի քամակից աչքը հանդարտ բաց էր արել,
մունջ-մունջ Երևանի բերդին էր մտիկ տալիս և ուզում
էր, որ կամաց-կամաց ներս մտնի:

Թանձր խաւարը, սև մառախուղը եկել, բոլոր դաշտե-
րի, ձորերի երեսը բանել, օգը ծանրացրել էր:

Թոշունը տեղիցը չէր ուզում շարժուի, հաւը բնիցը զը-
լուխը հանի: Ամեն տեղից տաքը խաղաղուել, ամեն տե-
ղից ձայն ու ձոր լսել, պապանձուել էր:

Զուր ջրողը առուի վրայ էր թեք ընկել, քնած մնացել.
Վար ու ցանք անողը՝ հանդումը, այգեպանը՝ իր ծառի
տակին, շուաքումը քուն մտել, հանգստացել: Մարդ, կին,
մանուկ գիւղերումն էլ չէին երևում... Հօտաղներն էլ ի-
րանց գութանի լծկանը բաց էին թողել, լուծը յետ արել
ու մէկ ստուերի տակ գութանը մէկ կողմը, եզները միւս
կողմը՝ ջրերի ափին վեր էին թափուել, քաղցր քուն մը-
տել: Նախիրը մէկ դաշտում, ոչսարի հօտը՝ միւս—շուաք
տեղը նստել, ծնօտ ծնօտի էին քսում, վնչացնում, որոճ
անում: Հովիւն էլ, զլուխը մէկ քարի վրայ զրած, նղղել,

աչքը կպցըել էր, որ շոգը քաշուի թէ չէ՝ վեր կենայ,
հօտը իրիկնահովին մէկ լաւ խստաւէտ տեղ տանի, արա-
ծացնի:

Արթուն շներից մէկը այս ցցի վրայ, մէկը միւս բլրի
ծայրին կամ հովուի ոտի տակին՝ զլուխները դրել, նօ-
թերը կիտել, մարաղ էին մտել, որ թէ գող, վայլ, գազան
սիրա անի, մօտենայ, մէկէնիմէկ վրայ թաշեն, պատառ-
պատառ անեն, իրանց ափրոջ ոչխարները պահեն: Մէկ կա-
նաչ խոտ, մէկ գալար թուփ կամ մէկ ծաղիկ ոչ մէկ տեղ
չէր երևում, որ մարդ հոտն առնի, կամ երեսին մտիկ
տայ, սիրտը բացուի ու իր ճանապարհի երկարութիւնը
մոռանայ, կամ շոգի ձեռիցն այրուած, խորովուած մար-
մին հովութիւն տայ: Այսպէս էր սար ու ձոր, դաշտ ու
հանդ չորացել, խանձուել, պապանձուել: Միմիայն խոտե-
րի ցողուններն ու թփերի սուր-սուր ծայրերն էին այս-
եղ այնտեղ ցից-ցից զլուխ բարձրացրել, տխուր, տրտում,
մոլորուած, պաշարուած կանգնել մնացել:

Սկսակ գիշակեր ագուաւնները կամ վախլուկ տուլաշներն
էին հենց մենակ մնացել, որ այստեղ, մէկ քարափի ծայ-
րի, մէկ բուրջի զլիսի կամ թէ չէ ճանապարհի միջում
իրար զլիսի հաւաքուել էին, նստել, կամ պտոյտ էին գա-
լիս, իրար կացահարում, իրար թներից քաշում, որ մէկի
գոտած որսը ձեռիցը լսեն, բաժին անեն, իրանց ձագերին
էլ տան, հետներն էլ տանեն: Օձ, կարիճ, մողէս, բզէզ ու
ինչ տեսակ գազան ու գեռուն ասես, մորեխ, մժեղ, հան-
դէս էին բաց արել: Մըրը մէկ թփի տակից, նըրը մէկ քա-
րափի զլիսից, նըրը խոտերի միջին կամաց-կամաց ժաժ գա-
լով, պոչ ու զլուխը իրանց քաշելով կամ ծլունգ լինելով,
շուացնելով, ֆշացնելով, ծւալով, ծղրտալով՝ ոտքի էին
ելել: Մի որկ է պատաժակի արանքից կամ քարի ծայրից
էլ մէկ անձար բու, զլուխը վեր թողած, քիթ ու պոռւնկը
կիտած, ծանրացած, գետնին էր նայում, իր սև օրը ող-
բում: Հաւի թշնամի ուրուրն էլ, թները փուած, ճանկերը
սրելով, բաց ու խուփ անելով, կտուցը սրելով կամ կուրծքը

քջքջելով, երկնքի երեսին, գլուխը կուրծքի տակին քաշ գցած՝ սուր աչքերն այս կողմն էր գցում, պտտում, պատրաստում, որ մի լսազր ճռատիկ ճանկի կամ մի անճար լոր վեր քաշի, քրքրի, փեարի ու իր ազահ փորին մատադ անի...»

Այսպէս մեռել, լսել էր բնութիւնը ու ոչ մի ձէն-ձը-պուտ մէկ տեղից չէր լսում: Միմիայն հեռու տեղից մէկ բարակ քամի երեմն փշում, ծառի տերևները սլաց-նում, ժաժ էր գցում ու գոլ-գոլ մարդի երեսին, բերնին քնքուշ ձեռը քսում, շուտով անց կենում, փշերի, խոտերի, քարափների, ձորերի մէջը մանում:

Խ. Արովեան

48.

ԱԶՆԻԻ ՀԱԿԵՐ..

Ազնիւ ընկեր, մեռանում եմ,
Բայց հանգիստ եմ ես հոգով
Իմ թշնամիքս ես օրհնում եմ
Օրհնում եմ քեզ Աստուծով..

Ազնիւ ընկեր, չը մոռանաս
Անդաւաճան, ջերմ սիրով
Ես սիրել եմ իմ հայրենիք,
Գրնա և գու նոյն շաւզով..

U. Ծահագիրեան

բայս պլանական լուծեց մի պատճեա ու պար զավակաց
և պահանջան մասը հղախաչ զդանան լոց ով ով եւոց
ու մարտը մի պահանջան ով շնչով մասնա ուն
ուն է և առաջ պատճեա մասը պատճ շնչու եւուու
ուր սիմվոլաց և առաջ նաև պատճ զավակաց եւուու
ու բայս պատճեա գլուխ ու ուն ուն ուն ուն ուն
ուն ուն ուն ուն ուն ուն ուն ուն ուն ուն ուն ուն ուն

49.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԻՒԼԲԻՒԼՆ ԵՒ ՍՀՀԱԿ ԹՐՉՈՒՆԸ

Բաղէշի ձորը մի սքանչելի պատկեր է ներկայացնում գարնանը։ Այնտեղ ես տեսայ հազարան բիւլբիւլին, որ յիշատակում է հէքեաթների մէջ։ Ես լսեցի նրա զմայլեցնող երգերը, որ նա երգում էր մաքուր և քաղցր դայլայլիկներով։ Նա զիտէ հազար տեսակ եղանակ գեղգեղել։ Նա լցնում էր ձոր ու անտառ իր հրաշալի տաղերով։ Նա սարեկի չափ է, աչեղ, լանջագեղ, թիկունքն ու գլուխը փայլուն ոսկու պէս գեղին, թևերը սկաթուխ, ծանր նայուածքով, վսեմ շարժմունքով։ Նա արագ է թռչում, բայց ոչ մացառի փոքրիկ բիւլբիւլի նման վժիկ-վժիկ ու ճըռճըռ, և ոչ նրա պէս ոստոստուն ու մարդկանցից խրանող։ Սա, ընդհակառակը, հաճոյք է զգում ցոյց տալ իր գեղեցկութիւնը և ախորժում է երգել, երբ իրան լսում են։

Բաղեշի ձորի ծառերի վրայ ամեն երեկոյ, երբ արևը
մայր է մտնում, թփերի միջից, մի ամաչկոտ աղջկայ
ձայնի նման, լուսում է սրախն դիպչող մի շուղ. «Սըհակ,
սըհակ, սըհակ...», երեք անգամ կրկնում է, մի պահ լուսում,
կարծես, արձագանքի կամ պատասխանի է սպասում, ա-
պա յուսակուր կրկնում է ու կրկնում. «Սըհակ, սըհակ,
սըհակ»: Եւ այսպէս մինչև առաւօտ:—Պըտըտիկ, կատա-
րագլուխ, վախկոտ ու ամաչկոտ այս թռչնիկն ով է,—
հարցրի ես բարեկամից:—Միթէ չգիտես: Եղել են

որբուկներ՝ քոյր ու եղբայր. մի երեկոյ Սահակը սանդրում էր իր քրոջ ծամերը. յանկարծ նրան յափշտակում են, տանում: Արծիւ էր յափշտակողը թէ գաղան՝ Աստուած գիտէ. միայն քոյրն աղեկառը ճշում է. «Աստուած, թոչնի թեր տներ ինձ՝ թոչեմ, եղբայրիկիս գըտնեմ»: Աստուած թեր է տալիս աղջկան: Այս օրից նա ծառեր ու դռներ է թափառում, լեռներ ու անտառներ է թոչում ու կանչում. «Սըհակ, Սըհակ, Սըհակ»:

9. Սրուանձտեան

50.

ՄՈՒՐԱՏ ՆԱՀԱՊԵՏԸ

1.

Պէյթամը մեծ գիւղ չէր, բայց բարելից էր և ողջ Խիզանի մէջ անուանի: Այնտեղ էր բնակւում առատածեռն ու մարդասէր Մուրատ նահապետը: Եօթանասուն ամառ ու ձմեռ անցել գնացել էին Մուրատի գլխովը, բայց նա իր զուարթ տեսքով ու հայեացքով նմանում էր կայտառ երիտասարդի, տղամարդի:

Ո՞չ ոյժն էր պակասել, ոչ երեսն էր կնճուռել, ոչ թիկունքն էր կորացել, քայլում էր, ինչպէս պատերազմի դաշտից վերադարձած հերոս:

Մուրատին ամենքը սիրում էին, սիրում էին, որովհետեւ շատ հարուստների նման չէր գոռողանում, հարստին չէր նախանձում, աղքատից երես չէր թեքում:

Պէյթամ գիւղն ամբողջութեամբ Մուրատի սեպհականութիւնն էր, այնտեղ ուրիշ ժողովուրդ չկար, միջի բնակիչները Մուրատի ազգ ու ընտանիքն էին և իր դռանը ծառայողները: Մուրատն էր իր ձեռքով գիւղի հիմքը դըմեւ ինքն էր անուն տուել: Պէյթամ ասել է հասարակութեան տուն, մի տուն, որի դռները բաց են ամեն ճանաւրական պարագաներու համար:

պարհորդի, ամեն կարօտեալի, ամեն քաղցած ու ծարաւ աղքատի համար:

Մեծ ճանապարհի վրայ էր շինուած Պէյթամը, մի այնպիսի տեղ, ուր յարմար է ճանապարհորդին հանգստանալ, կշտանալ, գրաստը դարմանել, վեր կենալ ու ճանապարհ ընկնել: Կատարեալ քարվանսարայ էր Պէյթամը: Զանազանութիւնը այս էր, որ քարվանսարայում եկաւորները կերակրում են իրանց քսակի ներածի չափով, իսկ այստեղ՝ քսակ հանելու պէտք չկար. վայելիր, որքան կարող ես, մնա, հանգստացիր, որքան սիրտ է ուզում. Աստուծոյ հիւրն ես, տանտիրոջ զոյգ աչքի լոյսն ես, Մուրատի գլխի, աչքի վրայ տեղ ու պատիւ ունես:

Մուրատը միայն սիրտ շահելու համար չէր բան ու գործից ընկել. նա անքուն պահապանի գեր էր կատարում: չլինի՞ թէ պատահեն այնպիսի ճանապարհորդներ, որոնք փախս տան ու իջևանել չուզենան. զուր կըլինի այդպիսիների ջանքը. թէ ձիաւոր են, Մուրատն ինքն է անձամբ դիմաւորում, ձիու ասնձը իր կողմն է քաշում. թէ հետեւակ են, Մուրատն ինքն է առաջ գնում, ճանապարհ փակում ու կուռը բռնած՝ ծառի հովը հրաւիրում:

Ով ուզում էր գանի պատրաստ հաց, պատրաստ հացուստ, պատրաստ տուն ու տեղ, պատրաստ դրամ իր ընտանիքի սկառերը հոգալու, արքունի հարկերը վճարելու՝ Պէյթամ էր գալիս Մուրատ նահապետի մօտ: Ի՞նչ է հարկաւոր երկրագործ գիւղացուն՝ հող, արօր, ոչխար, տաւար. այս բոլորը կայ՝ գնա, գործիր, բեր, գու էլ կեր, ինձ էլ ուտացըն:

2.

Մուրատի գերդաստունը եօթանասուն հինգ հոգուց էր բաղկացած. սրանցից էին նշանակուած հիւրերին սպասաւորողները: Իրանով ութն եղբայր էին Մուրատեանք, ուրոնցից ամեն մէկը բազմաթիւ որդոց ու թոռների տէր էր: Ամենից աւագ եղբայրը Մուրատն էր: Գերդաստանի

ամեն անդամ իր պաշտօնն ունէր։ Մէկը նախրի վերահսկողն էր, միւսը՝ ոչխարի հօտերի, որը երկրագործներին էր զլուխ քաշում, որը այզիների իրաւունքն էր վայելում։ Կանանցից մէկը սարն էր գնում՝ իւղ ու պանիր շինելուն նայում, երկրորդը՝ տների մաքրութեան, տնտեսութեան, կերակուր պատրաստելու, մշակներին հաց տանելու, հիւրերին կերակրելու, գորդ ու կապերաներ գործելու ու շատ ու շատ տնային գործերին էր զլուխ քաշում։ Ով ինչ գործի յարմար էր, իր սիրած պաշտօնն էր ընդունում։ Գերդաստանի արական սեռին պաշտօն տուողը Մուրատն էր, իսկ իգական սեռին՝ նրա ամուսին Զանան-Մարիկը։ Ահագին կաթսաներ էին ամեն օր քլթքլթում մի թոնրի վրայ. տաշտերով հացը շարունակ թխում էր միւս թոնրումը. իւղը մեծ-մեծ պղնձներով հալւում էր—ու այդ բուրրի վրայ հսկողը Զանան-Մարիկն էր։ Տուն չէր Մուրատի տունը, ծռվ էր, մի իշխանական պալատ։ Ո՞չ միայն Խիզանի գաւառի մէջ, այլ և Հայաստանի գիւղ ու աւանների գետնափորների հետ համեմատած՝ Մուրատի տունն այնպէս էր, ինչպէս մի հաստաբուն կաղնի ծառ։ Թփերի ու մացառների մէջ կանգնած։

Ի՞նչ մեծ սենեակներ, հիւրատուն, հացատուն, մառան, նկուղ, գոմեր, մարագներ տեղին ու կարգին— այդ ամենը մարդու հոգին փառաւորում էին։ Տան առաջի մեծ պարտէզի ծաղիկներիցը դրախտի հոտ էր բուրում։ Բակի մեծ դուռը, կարծես, մի նորահարս լինէր, քարերի վրայ փուրուածքներն, ասես թէ ակն ու մարդարիտ լինէին՝ հարսի ճակատն ու երեսը զարդարող։

Այս ամեն հարստութիւնը Մուրատն ինքն էր աշխատել, այս շեղ տներն իր աչքի առաջին. իր հրամանով էին շինուել։

51.

Ա Ն Ի

Մէկ տափարակ հարթ տեղ բաց է լինում յանկարծ տեսնողի առաջին, մէկ մեծ դաշտ, չորս կողմը սարերով պատած՝ աջ ու ձախ սկին տալիս։

Քանի գնում է մարդ, ամպ ու մառախուղը քաշւում, պարզում են. հէնց իմանում ես՝ թէ առաջիդ մէկ էնպէս քաղաք է բաց լինում, որ հազար հազար կենող միջումն ունի, ու ցըտի կամ շոքի ձեռից յոզնած՝ ուզում ես, որ շտապես, գնաս մի Աստուածաւերի դրան վեր գաս, հանգըստանաս, էլ ետ ճամբէդ բռնես, գնաս։

Մէկ տեղից ահագին բերդի պարիսպն է քեղ խաբում, մէկ տեղից զարմանալի եկեղեցիների գմբէթն ու մեծութիւնը. միւս տեղից բարձր մինարէները, պալատ ու ապարանքի զլուխները։ Մտքումդ ասում ես՝ թէ էս տեսածդ մէկ մեծ, զօրեղ թագաւորի գահ պէտք է լինի. Էստեղ ոսկի ու արծաթն աղբի հետ պէտք է խառն ընկած լինի, էստեղ օրը հարիւր քարւան ներս մտնի, հարիւր դուրս գայ։ Հէնց իմանում ես, թէ ցերեկը փոշին ու մէզն է աչքդ բռնում, գիշերը՝ մութն ու խաւարն է քեղ խաբում, որ մարդ, շունչ, անասուն չես տեսնում, հէնց դիակեր ագռաւներն են աչքերիդ սկին տալիս։

Մարդ չկայ մօտդ՝ որ հարցնես, զիր չես կարդացել՝ որ իմանաս։ Մտքիդ հետ ընկած, տեսածդ հրաշք կարծելով կամ աչքակապութիւն, որ յանկարծ գլուխդ չես բարձրացնում, մարմինդ դող է ընկնում, կոներդ թուլանում։ Հէնց իմանում ես՝ թէ մէկ վիշապ կամ մէկ թշնամի հէնց նոր է մտել ու բոլոր կենողներին կամ կուլ տուել, կամ սուրը քաշել, կամ գերի արել, ինքն էլ փախել. ուզում ես, որ աչքդ խփես, ետ դառնաս։

Ա՛խ, չէ, չէ, ետ մի դառնալ. էստեղից ծուխը քանի հարիւր տարի է, որ կտրուել է՝ կաց, մի վախենալ. ան-

շունչ քարերն ու եկեղեցիները մարդակեր չեն: Աչքդ բաց
արա, սիրտդ քեզ հաւաքի: Էս սրբատաշ տաճարները, էս
ահագին բերդը, էս քարերը քեզ կասեն՝ թէ սա է գոռող
Անին, քո թագաւորների հզօր մայրաքաղաքը, որ մի ժա-
մանակ էնքան էր իր հարստութիւնովը, իր փառքովը
փարթամացել, ճոխացել...

52.

Աղասու անուշ բնաւորութիւնը, բարի սիրտն ու հոգին
քիչ մարդ կունենայ: Այդ հասակն էր հասել, քսան տա-
րին անց կացել՝ նա գեռ հօրն ու մօր առաջին այնպէս
էր, ինչպէս մէկ անմեղ գառը: Մէկ օր նրանց խօսքիցը
չէր դուբս եկել, մէկ օր նրա բերնիցը մէկ թթու խօսք
չէր լսուած, աշքը նրանց աշքին ասնելիս, նա նրանց
միտքն իսկոյն իմանում ու գլուխը մահու էր տալիս, որ
նրանց կամքը կատարի: Գիւղացիք բոլորը նրա արեովն
էին խնդում, նրա գլխովն երդում ուտում: Ամենքի աշքը
նրա վրայ էր, նրան էր գովում, նրան էր օրհնում: Մէկին
մէկ փորձանք պատահելիս կամ մէկ դարդ ունենալիս, նա
իր գլուխը ետ էր գնում, նրան օգնութեան հանում,
փափագին հասցնում: Բերանի պատառը հանում էր, ուրիշին
ուտացնում: Այնքան իր ապրանքին, իր հանգին ու տա-
ւարին չէր խնամում, աէրութիւն անում, որքան իր հա-
րևանների: Տանուտէրին՝ որդի էր, աղքատ ու անճա-
րին՝ ընկեր: Դուռը որբ էր գալիս—սուփէն էր բաց ա-
նում կամ քսակը: Ով դութան չունէր, իրանց էր բան
տալիս. ով եղն ու հօտաղ չունէր՝ իրանցն ուղարկում: ով
փող չունէր, որ մշակ բոնի, այզում բանեցնի, ինքն էր
առաջ ընկնում, գիւղի տղայքը հաւաքում ու գնում, ու

ունց կանչելու, առանց խնդրելու, նրա գործը կտտարում:
Եւ երբ այգետէրը մտնում էր այգին, աչքը սառած էր
մնում, նրան կեանք ու արե մաղթում: Շատ հէրն ու մէր
երանի էին տալիս սրա հօրն ու մօրը, որ այդպիսի բարի
զաւակ ունէին: Ինչտեղ մի հրաւէրք կամ կերուխում էր
լինում, նա էր հիւրերի գլուխը, նրանց կառավարողը, նը-
րանց ուրախացնողը:

Նրա երկար հասակը, նրա թուխ-թուխ աշքերը, նրա
դալամով քաշած յօնքերը, նրա աննման, գեղեցիկ պատ-
կերը, նրա անուշ լեզուն, քաղցը ձայնը, նրա լայն թի-
կունքն ու բարձր ճակատը մարդու խելք էին տանում.
տեմողը չէր կշտանում: Սազը ձեռքն առածին պէս՝ քա-
րին, փայտին շունչ, հոգի, լեզու էր տալիս: Ճշմարիտ է,
արեը երեսն այրել, գոյնը փախցրել էր, բայց ծիծաղելիս,
որ աշք ու ունքը չէր բացանում, հէնց իմանառ՝ վարդ էր
բացւում, երեսիցը լոյս թափում: Նրա հրացանի գնդակը
զնուր չէր անցկենում: Սիրտն այնքան բարի էր, որ զուր
տեղը թռչուն էլ չէր սպանի, մըջիւն էլ չէր կոխ տայ:
Բայց երբ թուրքերը գնում այզին լցւում էին, կամ իրան
էին ուզում սպանիլ կամ հարևանին՝ այն ժամանակ եր-
կնքում էլ լինէր՝ ցած էր իջնում: զիւղի ծայրիցը ձայն
տային՝ իսկոյն մի ակնթարթում պատրաստ էր. և եթէ
բանը խօսքով չէր վերջանում՝ նա իր սրի, հրացանի ու բազ-
կի շնորհքն այնպէս էր ցոյցատալիս, որ թշնամին մնում
էր կատու դարձած, կամ նրա ձեռքին զոհ գնում:

Այնքան ուժեղ էր, որ ձեռքը տղամարդու գօտիկը ձգե-
լիս՝ հաւի ճուտի պէս բարձրացնում, զլիսի ծայրն էր հա-
նում, պատյա տալիս ու էլի ցած բերում: Զի հեծնելիս՝
որ ձեռքը բարձրացնում էր՝ առիւծ ձին խոնարհում էր
ու մէջքը դէմ անում: Գոմշի կամ եղան վզին մէկ
սուր խփելով, այնպէս էր դուբս կտրում, որ սրի ծայրը
զետինն էր խրւում: Շատ անգամ, կոռոի ժամանակ, հէնց
որ նրա ձայնը լսում էին՝ ճանճի պէս ցիր ու ցան էին

լինում, դէս ու դէն կորչում։ Մականունն «Ասլան Բալասի» (առիւծի զաւակ) էին գըել։

Բայց այսքան զարմանալի յատկութիւններ ունենալով՝ նա էլի երեխայի հետ երեխայ էր, մեծի հետ՝ մեծ։ Խանի, Շահի առաջն այնպէս էր կանգնում, պատասխան տալիս, որ հէնց իմանաս, թագաւորի որդի լինէր։ Ծիծաղն ու խնդութիւնը նրա երեսից պակաս չէր երբէք—այնքան պարզ էր նրա սիրտը, այնքան հանգիստ նրա խըդամտանքը, այնքան արդար նրա հոգին։ Նրա ամեն մի խօսքը անդին գոհար էր։

53.

ԱՂԱՍՈՒ ԵՐԳԸ

Սար ու ձոր ընկած՝ չոր թըփի տակի
Գետին նայելով՝ մնացել եմ նստած.
Չեռս ծոցումը՝ գլուխը լեռ քարի
Տուած՝ լալիս եմ, օրըս խաւարած։

Ամպերն առաջիս, սարերն ետևիս,
Քեզ մտիկ տալով՝ այ իմ քաղցը Մասիս՝
Աղի արցունքով էրուած, խորոված,
Երեսիդ նայիմ, մընամ քարացած։

Ծընող, ազգականք, հեռու ինձանից.
Լուսնին նայելով, ձեր սէրն յիշելով՝
Եարաք երբ կըլի, որ ես ձեզանից
Իմ կարօտ առնիմ, ձեզ ջան ասելով։

Եարաք ձեր ճըտովս մէկ օր էլ կընկնիմ,
Եարաք՝ ձեր երեսն մէկ էլ կը տեսնեմ,

Եարաք ծունկ-ծընկի տուած՝ ձեզ կասեմ։
Ե՛յ իմ խեղճ ծընողք՝ ձեր ջանին մնոնեմ։
Էն սուրբ, անարատ կաթնին ես զուրբան
Զեր լիս ձեռներին, ձեր անուշ լեզուին.
Մէկ բուռն հողի էլ երբ կըլիմ արժան,
Որ գամ ձեր հողում, քընեմ ձեր միջին։

54.

ԼԵՌՆԵՐՈՒԻ Մ

Երկու ընկեր էինք և գնում էինք սարերով, ձորերով։
Մի և նոյն հոգն էր մեզ երկուսիս էլ միաժամանակ մեր
յարկերի տակից զուրս շպըտել։ Այդ վաս չունէր, գոնէ
ձանապարհն ապահով լինէր։

—Ե՛մ, մեր լեռները... Հեռուից նայում ես՝ կապոյտ,
ալիքաւոր բարձրութիւններ, խորհրդաւոր ու սիրուն, որ
կարծես թարթում են ու գրաւում քեզ իրանց ծոցը. մօ-
տենում ես, թաղւում ես ձորերում, կիրճերում։ Լուռ
սարսափը պատում է կուրծքդ ու խեղզում։ Ասում են,
լեռներում մարդ հեշտ ու ազատ է շնչում։ Այստեղ կար-
ծես օդ չկայ։

—Օդ կայ թէ չկայ, այդ մի և նոյն է, պէտք է անց-
նենք, լաւ է լուռ կաց և ձիուն զօր տուր, որ շուտ անց-
նենք. գատողութեան ժամանակ չէ։

Ես լուռ կացայ. ընկերս իրաւունք ունէր, բայց ձիս
այն օրին չէր, որ զօր տալով բան դուրս գար։ Դիու նրա
բանը լաւ էր, հոնի մի կարճ փայտ ունէր ձեռքին, ան-
դադար զարկում էր իր ձիու կողերին և առաջ ընկնում։
Իմը՝ մի ողորմելի, լղար կենդանի, ասպանդակների պատ-
ճառած ցաւը տանում էր, բայց ընթացքը չէր փոխում։

Ես չարչարում էի նրան, նա չարչարում էր ինձ, Եւ գնում էինք, ճար չկար: Մեր մի կողմում բարձրանում էր Զարսալայ սարը, միւս կողմում՝ Թաքեալթուն. երկսի ոտների տակ բուրներ ու ձորեր, մութ կիրճեր ու ժայռեր, մացառներ ու աղբիւրներ, և մեր ճանապարհը օձապտոյտ:

Կէս օր էր և դեռ մենք որքան պիտի գնայինք՝ վտանգաւոր տեղերից ազատուելու համար:

— Անիծուած Բարդողեան շղթայ. տեսնես ուրիշ աշխարհում էլ այսպիսի սարեր կան:

— Սիրուն սարեր են:

— Սիրուն են... Թողի հիմայ մի խումբ գլուխ կտրողներ առաջներս գուրս գան, նոր կ'իմանաս՝ սիրուն են թէ չէ: Էլի նրանք սիրուն կը մնան, սարն ի՞նչ անի, որ ես ու դու հիմայ այստեղ իրար մորթենք:

Ես լոեցի. Նա դարձեալ իրաւունք ունէր: Անտառն ի՞նչ անի, որ այնտեղ զազաններ են բոյն դնում:

— Տեսնում ես այն ու մեծ ժայռը՝ մեզանից դէպի ճախ, ասաց ընկերս:

— Տեսնում եմ:

— Անունը գիտե՞ս: — Ո՛չ: — Նա կոչւում է կոկորդ-կըտրող: — Ի՞նչո՞ւ:

— Որովհեակ ինձ ու քեզ նման շատ ողորմելիներ գլուխները թաղել են այնտեղ:

— Անիծուած ժայռ:

— Ժայռը մեղաւոր չէ. մեզ էլ կարող են սպանել, բայց այդ ժայռը կը մնայ օրհնուած:

Ընկերս դարձեալ իրաւունք ունէր: Ես գլուխս քաշ ձգեցի, մի պահ լուռ կացայ, մտածմունքի մէջ ընկղմած:

— Որ այդպէս է, ինչու այստեղից եկանք. չէ՞ որ դու ճանաչում ես այս լեռների բոլոր անկիւնները:

— Ուրիշ ճանապարհ չկայ. բայց ապահով եղիր, ցերեկով այս տեղերում վտանգը միշտ մեծ չէ. դէ, ցաւի տէր ենք, պիտի անցնենք. մարդ էլ պատահի՞մեր ի՞նչը տանի:

— Զէնք էլ չունենք:

Նա յետ նայեց մեզմ ժպտալով. «Զէնքով ի՞նչ կ'անէիր»: — Ի՞նչ կ'անէի, ես ի՞նչ զիտեմ, դէ վտանգաւոր սարերում անզէն լաւ չէ, գոնէ մի խէնջար:

— Տանը խէնջար ունէի՞ր: — Զէ: — Երբեցէ ունեցէ լ ես:

— Զէ, բայց կարելի էր ճարել:

— Ճարած խէնջարով բան չի դուրս գայ: Զիուղ զօր տուր, դու էլի յետ մնացիր:

Ես սկսում էլ բարկանալ. ձիս չէր գնում: Զորս կողմը սարսափելի էր, իսկ նա քշում էր առաջ այնպէս հանգիստ, կարծես կոկորդ-կարող ժայռը առաջներս չինէր: Միթէ նա էլ չի վախենում ինձ պէս, էլ ի՞նչ կարիք կայ ինձ մօտ քաշ ձևանալ, մտածում էլ ես՝ նայելով նրա օրօրուող թիկունքին, նրա կարճ մահակին, որով անդադար իմթում էր ձիու կողերը: Նրա ձին էլ մի բան չէր, բայց էլի իմից լաւ էր: Մտքովս մի բան անցաւ, գնամ ասեմ թէ որ դու այդպէս քաշ ես, արի ձիերս փոխենք, դու յետելից գնա, ես առաջից գնալ ես վախենում եմ:

— Լսի՞ր:

— Էլի ի՞նչ կայ: Նա յետ նայեց... տեսայ այդ պարզ, խաղաղ գէմքը և ամաչեցի մտածածս յայտնել:

— Կեցիր, ես հասնեմ քեզ, գուցէ, ձիս այդպէս լաւ գնայ: Քոնի հետ կողք-կողքի:

Նա կանգ առաւ, ես հասայ: Վրաս նայեց փորձող հայեցքով:

— Դու շատ ես վախենում:

— Ի՞նչպէս չվախենամ. այս ժայռը, այս սարելը...

— Դու հաւատում ես բաղդիդ: — Ի հարկէ:

— Եթէ հաւատում ես, էլ ինչու ես վախենում. ի՞նչ գըրուած է, այն էլ կը կատարուի:

— Իրաւունք ունես, բայց վախենում եմ:

Ես լոեցի և սկսեցի մտածել նրա առածի մասին. ճիշդ

որ, թէ մարդ իր ճակատագրից ազատուել չի կարող, ինչու եմ վախենում:

— Դէ դու ասա, ինչու եմ վախենում:

— Ինչու ես վախենում, ասաց նա դանդաղութեամբ. — Երևի, նրա համար, որ չես իմանում, արդեօք ճակատագրիդ գրուածն է կատարւում, թէ չգրուածը:

— Ես չեմ հասկանում, դու միշտ...

Վը զզ... Մի գնդակ էր, որ կոկորդ-կտրող ժայռի կողմից եկաւ ու անցաւ մեր գլխի վրայով: Վը զզ... անցաւ երկրորդը:

— Հիմայ հասկացա՞ր:

Ես էլ սիրու չունէի նրան հասկանալու: Սարսափած նայեցի դէպի ժայռի կողմը և տեսայ, թէ ինչպէս վեր ցըցուեցի նախ մի մարդու պատկեր, ապա երկրորդը:

Քիւրդ աւազակներ էին:

— Կանգ առէք, հրամայեցին նրանք, մի զոյտ հրացանի փողեր մեղ ուղղած:

Մենք կանգ առանք. ճար չկար:

— Յած իջէք ձիերից, լսուեց երկրորդ հրամանը:

Ընկերս մի ըոպէ մնաց մտազբաղ: — Տեսնես քանի հոգի են, ասաց նա կամացուկ:

— Երկու են. ես լաւ տեսնում եմ. դրանից մեղ ինչ օգուտ. մի հոգի էլ լինէր, այդ հրացանով մեղ...: — Դու էլի սկսեցի՞ր:

— Յած իջէք, թէ չէ... լսուեց նոյն հրամանն աւելի խիստ կերպով: Մենք ցած իջանք:

— Այժմ թողէք ձիերը և հեռացէք դէպի մի կողմ:

— Զիդ թող և հեռացիր, ասաց ինձ ընկերս կամացուկ:

— Իսկ դժւ...

— Թնդ, ասում եմ:

Նա ինձ երբէք այդպէս խիստ չէր հրամայել. թւում էր ևթէ էլի մի բառ ասեմ, ինձ կը խեղդի տեղն ու տեղը ես հսազանդեցի:

Ընկերս իր ձիու սանձից բռնած՝ մի քանի քայլ առաջացաւ դէպի աւազակները.

— Նայեցէք, ասաց, ես բոլորովին անզէն եմ: Այս ձին կատաղի է, եթէ թողնեմ, կը փախչի, ինչպէս մըրիկ, և ոչ ձեզ բաժին կը լինի, ոչ էլ մեղ՝ ափսնու է. ցած եկէք ու տարէք. մեղ էլ թողէք մեր ճանապարհը ոտքով շարունակենք: Խեղճ մարդիկ ենք, ինչպէս տեսնում էք, մեր ցաւի համար չօկերն ենք ընկել:

Ես նայում էի և չէի հասկանում, թէ ինչ է միտքը, քանի որ լաւ գիտէի, որ այդ ձիու կողերը մահակով էլ ջարդես, գարձեալ փախչողը չէ, էլ ինչու չի ձգում, որ մենք թողնենք ու գլուխ առնենք, կորչենք շուտով:

Աւազակները մի երկու ըոպէ իրար հետ խորհրդակցեցին և ապա, հրացանները մեղ վրայ բռնած՝ ցած իջան ժայռից և առաջացան դէպի ընկերս, որ հանգիստ կանգնած սպասում էր նրանց: Ահա նրանք բոլորովին մօտեցան, աներկիւդ և վստահօրէն: Ընկերս շարունակում էր կանգնել անշարժ և հանգիստ: Ահա նրանցից առաջինը ձեռքը մեկնեց՝ ընկերոջս ձեռքից ձիու սանձը առնելու: Ես նայում էի սրտատրոփի: Մէկ էլ յանկարծ ընկերս ազատ ձեռքը բարձրացրեց և հոնի փայտով արագութեամբ մի ծանը հարուած իջեցրեց քիւրդի մեկնած ձեռքի գաստակին ու փշուր-փշուր արեց: Սա ցաւից մոնչաց, կծկուեց ու թեր բռնած՝ գետին ընկաւ: Համարեա մի և նոյն վայրկեանին փայտի երկրորդ հարուածն իջաւ միւս քիւրդի գագաթին, որ նոյնպէս գլորուեց գետին, հրացանը ձեռքից թողնելով:

— Վաղիր, ճըշած ընկերս: Ես մօտեցայ: Մի վայրկեան յետոյ Երկու աւազակները զինաթափ և կապուած՝ մեր ոտների առաջն էին: Ես աչքերիս չէի հաւատում:

— Մի քիչ ջուր թափիր այս ուշաթափուած քիւրդի երեսին, թող ուշքի դայ:

Հրամանը կատարեցի, ինչպէս ստրուկ: Թակարդում բռնուած գաղանների պէս, այս երկու քիւրդերն ընկած

Էին կանաչի վրայ և ապուշ-ապուշ նայում էին մեզ: Նը-
րանք շմել էին անսպասելի դէպքից: Ես նրանցից պակաս շփոթուած չէի. նայում էի և չէի
հասկանում, թէ ինչ գործ ունեն այդ երկու գաղանները
մեր ճանապարհի վրայ, այն աստիճան արագ կատարուեց
այդ բոլորը:

— Զուր, մրմնջաց բազուկը ջարդուած քիւրդը՝ առանց
մեզ նայելու, կարծես ուրիշից էր սպասում մի քանի կա-
թիլ ջուր:

— Զուր տուր սրան, ասաց ընկերս: Ես վազեցի մօտա-
կայ աղբեւրը, գլխարկիս մէջ մի փոքր ջուր ածեցի ու բե-
րի: Պապակած քիւրդը խմեց, բայց շարունակում էր արն-
քալ ցաւից:

— Թեզ շատ է ցաւում, հարցըց ընկերս:

Վիրաւոր քիւրդը նայեց նրա աչքերի մէջ, մի բան մըու-
մուց և գլուխը քաշ գցեց, հարցը թողնելով անպատաս-
խան:

— Ինչու չես պատասխանում:

— Քեզ ի՞նչ թէ ցաւում է:

— Ինձ ի՞նչ թէ ցաւում է. ուզում էի կապել:

Քիւրդը հեգնաբար նայեց նրան, չէր հաւատում թշնա-
մու խօսքերի անկեղծութեանը:

— Կապիր սրա թեր, դարձաւ ինձ ընկերս: Ես մօտեցայ,
պատուցի քիւրդի շորերի մի մասը, վիրակապ շինեցի և
պատեցի փշրուած բազուկը: Միւս ընկերը շարունակում
էր նայել գաղանի աչքերով և կարծես ոչինչ չէր հասկա-
նում:

— Ինչու չէք սպանում մեզ, ասաց նա յանկարծ:

Ծնկերս ժպտաց.

— Դուք մեր տեղը լինէիք, կը սպանէիք:

— Անպատճառ:

— Ինչու էք սպանում անմեղներին:

— Ես ի՞նչ գիտեմ:

— Մենք ձեզ չենք սպանի:

— Հապա ի՞նչ կ'անէք:

— Մի բան կ'անենք: Վեր կաց, սիրելիս, հեծնենք ձիերը,
արեն արդէն թեքուեց, իսկ մենք շատ ճանապարհ ունենք:

— Իսկ սրանք:

Պատասխանի փոխարէն՝ ընկերս արձակեց անզէն գերի-
ներին:

— Գնացէք, ասաց նա:

Քիւրդերը վերկացան իրար բոնած, օրօրուելով գնացին
նորէն գէպի կոկորդ-կտրող սարը, իսկ մենք վերցրինք
նրանց զէնքերը, թռանք ձիերի մէջքին և քշեցինք, անցանք
վտանգաւոր վայրերից:

— Ասա այժմ, սիրելիս, գրտածը կատարուեց, թէ չը-
պուածը:

— Զգիտեմ, պատասխանեցի ես: Բայց ընկերս դարձաւ
իմ աչքում մի հակայ, որ, կարծես, իր ձեռքում տանում էր
իմ բաղդը, և այդ բաղդին էլ ոչ մի վտանգ չէր սպա-
նում...

Աւ. Ահարոնսան

55.

ՏՈՐՔ ԱՆԳԵՂ

Հին Հայտանում շատ դարեր առաջ

Անգեղեան տոհմից ապրում էր մի քաջ.

Անունը Տորք էր, ինքը ահարկու,

Նա չէր նմանում հասարակ մարդու:

Աչքերը կասես մի-մի կապոյտ ծով,

Ճաճանշաւրուած արեի լուսով.

Սե-սե ունքերը, մութ ամպի նման,

Բարդ-բարդ կուտակուած աչքերի վըրան.

Քիթը կորնթարդ, ինչպէս մի բըլուր,

Ատամներն ուրագ, եղունգները թուր.

Էին կանաչի վրայ և ապուշ-ապուշ նայում էին մեզ: Նը-
րանք շշմել էին անսպասելի դէպքից:

Ես նրանցից պակաս շփոթուած չէի. նայում էի և չէի
հասկանում, թէ ի՞նչ գործ ունեն այդ երկու դաղաները
մեր ճանապարհի վրայ, այն աստիճան արագ կատարուեց
այդ բոլորը:

— Զուր, մըմնջաց բազուկը ջարդուած քիւրդը՝ առանց
մեզ նայելու, կարծես ուրիշից էր սպասում մի քանի կա-
թիլ ջուր:

— Զուր տնւր սրան, ասաց ընկերս: Ես վազեցի մօտա-
կայ աղբիւրը, գլխարկիս մէջ մի փոքր ջուր ածեցի ու բե-
րի: Պապակած քիւրդը խմեց, բայց շարունակում էր տըն-
քալ ցաւից:

— Թեդ շատ է ցաւում, հարցը ընկերս:

Վիրաւոր քիւրդը նայեց նրա աչքերի մէջ, մի բան մըու-
մուաց և գլուխը քաշ դցեց, հարցը թողնելով անպատաւ-
խան:

— Ինչու չես պատասխանում:

— Քեզ ի՞նչ թէ ցաւում է:

— Ինձ ի՞նչ թէ ցաւում է. ուզում էի կապել:

Քիւրդը հեգնաբար նայեց նրան, չէր հաւատում թշնա-
մու խօսքերի անկեղծութեանը:

— Կապիր սրա թեր, գարձաւ ինձ ընկերս: Ես մօտեցայ,
պատուցի քիւրդի շորերի մի մասը, վիրակապ շինեցի և
պատեցի փշուած բազուկը: Միւս ընկերը շարունակում
էր նայել գաղանի աչքերով և կարծես ոչինչ չէր հասկա-
նում:

— Ինչու չէք սպանում մեզ, ասաց նա յանկարծ:

Ընկերս ժպտաց.

— Դուք մեր տեղը լինէիք, կը սպանէիք:

— Անպատճառ:

— Ինչու էք սպանում անմեղներին:

— Ես ի՞նչ գիտեմ:

— Մենք ձեզ չենք սպանիք:

— Հապա ի՞նչ կ'անէք:

— Մի բան կ'անենք: Վեր կաց, սիրելիս, հեծնենք ձիերը,
արեն արդէն թեքուեց, իսկ մենք շատ ճանապարհ ունենք:

— Իսկ սրանք:

Պատասխանի փոխարէն՝ ընկերս արձակեց անդէն գերի-
ներին:

— Գնացէք, ապաց նա:

Քիւրդերը վերկացան իրար բռնած, օրօրուելով գնացին
նորէն դէպի եռկորդ-կտրող սարը, իսկ մենք վերցրինք
նրանց դէնքերը, թռանք ձիերի մէջքին և քշեցինք, անցանք
վտանգաւոր վայրերից:

— Ասա այժմ, սիրելիս, գրուածը կատարուեց, թէ չը-
գրուածը:

— Զգիւեմ, պատասխանեցի ես: Բայց ընկերս դարձաւ
իմ աչքում մի հսկայ, որ, կարծես, իր ձեռքում տանում էր
իմ բաղդը, և այդ բաղդին էլ ոչ մի վտանգ չէր սպա-
նում...

Աւ. Ահարոնեան

55.

ՏՈՐՔԱՆԳԵՂ

Էին հայաստանում շատ դարեր առաջ

Անգեղեան տոհմից ապրում էր մի քաջ.

Անունը Տորք էր, ինքը ահարկու,

Նա չէր նմանում հասարակ մարդու:

Աչքերը կասես մի-մի կապոյտ ծով,

Ճաճանշաւորուած արեի լուսով.

Սե-սե ունքերը, մութ ամպի նման,

Բարդ-բարդ կուտակուած աչքերի վըրան.

Քիթը կորնթարդ, ինչպէս մի բըլուր,

Ատամներն ուրագ, եղունգները թուր.

Կուրծքը կասենաս մի լանջ էր լեռան,
 Մէջքը սարաժայու, կըոները գերան,
 Մի խօսքով՝ մի դե և ոչ թէ հսկայ.
 Ոչ ոք տեսած չէր այդպէս աժդահայ:
 Կոպիտ էր դէմքը և այնքան դաժան,
 Որ կը զարհուրէր, ով նայէր վըրան.
 Ահոելի էր նա և այնքան ուժեղ,
 Որ յիսուն գոմէշ չունէին մէկտեղ:
 Նա դեռ պատանի՝ ժայռեր էր ճեղքում,
 Ճեղքում էր ճեռքով, ճեռքով էլ կոկում,
 Ճեղքում, յղկում էր քարէ տախտակներ,
 Եղունգով փորում պէս-պէս նկարներ.
 Նա մի հովիւ էր, հովիւ լեռնական,
 Բայց ոչ հասարակ, այլ դիւցազնական:
 Առիւծ ու վագըր նրան տեսնելիս՝
 Սովոր շան նման մօտն էին դալիս.
 Կարծում էին թէ՛ նա էլ է գաղան,
 Եւ նա է իրանց զօրաւոր արքան:
 Փաթաթւում էին քաջի ոտներին
 Եւ կաղկանձելով աղերսում բաժին:
 Նա էլ տալիս էր սընունդ բաւական,
 Եւ հօտի վըրայ կարգում պահապան:
 Ինքն այնուհետև գընում էր անտառ,
 Որ սընունդ գտնի իր ուժի համար:
 Նա պոկտում էր մեծ ծառեր հատ-հատ
 Ու շինում նրանցից մի մեծ ցանկապատ,
 Անտառի շուրջը պարիսպ էր դառնում,
 Մէջը վայրենիք կաշկանդուած մընում:
 Եւ նա բռնում էր, բռնուում այսպէս,
 Եղնիկ, եղջերու և այլ ինչ ասես:
 Քըսան, երեսուն էրէ շալակած.
 Գընում էր հօտը յոդնած ու քըրտնած:
 Առիւծն ու վագըր գէմն էին դալիս,
 Քաջի ոտքն ընկնում ու բարե տալիս

Եւ խընդրում էին դիւցազն Տորքին,
 Մասնակից անի համեղ ընթրիքին:
 Նա չէր շատակեր Շարայի նըման.
 Միրում էր կաթը և մածուն ու թան.
 Եւ չէր բարկացկոտ, այլ հեզ ու խոնարհ,
 Բայց Տէրն ազատէր, թէ որ բարկանար...

Դ. Աղայեան

56.

Ո Շ Ո Ւ Ց Ի

Զի կարելի տեսնել ու չհիանալ այդ առողջ, կենդանի
 Ժողովրդով: Նա երբէք չի թառամում, որպէս իր ծմակ-
 ների մշտականաչ նոճին: Նա երբէք չի ծերանում, որպէս
 թաւուտների դարեսը եղնին: Հզօր կուրծքը մերկ, զօրա-
 ւոր բազուկներն հոլանի, գլխին դրած թաղիքեայ կոնաձև
 քոլոզ՝ վրան փաթաթած գոյնզգոյն թաշկինակներ, որոնց
 ծայրերն ոսկեգոյն մազերի երկայն գիսակների հետ՝ թափ-
 ւում են լայն թիկունքների վրայ. հազին մի կարճ քա-
 զախայ (բաճկոնակ), որի ամրութիւնը, երկաթեայ զրահի
 նման, կարող է գիմանալ ամենասուր դաշոյնի հարուածին.
 Ներքին հագուստը մազեղին զոլ-զոլ անզրվարափի մէջ
 հաւաքած,— դուք կը տեսնէք Ռշտունեաց լեռների այդ
 զաւակին, ինչպէս նա՝ երկայն նիզակը ձեռքին, թեթև
 վագրի նման, անցնում է մի ապառաժից դէպի միւսը:
 Նրա նիզակը, որ երկու ծայրերում ու սուր երկաթներ
 ունի, ծառայում է և իբրև զէնք, և իբրև նեցուկ, որը
 գետնի մէջ ցցելով՝ յենուում է վրան և ոստիւններ է զոր-
 ծում սարսափելի վէերի վրայից: Այդ բոլորն այնպէս ա-
 րագ է կատարւում, որ կարծում ես, թէ նա թռչունի
 նման թեր ունի և օդի մէջ պանում է:
 Նրա թաղիքեայ փափուկ տրեխների տակերն ամբողջա-

պէս գամած են սրածայր բևեռներով, որ չսահեն, չսայթաքեն ժայռերի վրայ ման դալիս: Գօտու մէջ խրած ունի մի կեռ խէնջար, որի կոթը դերձանով կապած է պատեանին: Այդ կապանքը նրա համար է, որ մինչև արձակելը նրա բարկութիւնն անցնի. իսկ երբ սուրը մերկացրեց, մինչև արեան մէջ չզովացնի՝ էլ իր տեղը չի դնի:

Թշնամու հետ անգութ է՝ իբրև գազան, բարեկամի հետ բարի է՝ իբրև հրեշտակ: Գեղեցիկ է նա, իր հովիտների բարձրահասակ սօսիների նման: Երբ նայում է երեսիդ՝ դու զմայլում ես: Նրա այրական դէմքն այնպէս բացարձակ ու պայծառ է, որպէս Ռշտունեաց պարզ երկինքը:

Սակայն Ռշտունեաց պարզ երկնքի նման՝ այդ այդ խաղաղ դէմքն էլ յանկարծ մուայլում է, մթնում է, շանթեր է արձակում, երբ խաղաղ երկինքը փոխում է և տեղի է ունենում վերահաս փոթորիկը... Այդ միջոցին նա չի խօսում, այլ որոտում է: Եւ այդ որոտման ձայնի մէջ դու լսում ես նախկին հայի ուժեղ բարբառը, որի բոլոր կոշտ հնչիւնները քո հոգուն այնքան հարազատ են, քո սրտի համար այնքան կախարդիչ, որ յանկարծ ներշնչում ես մի անբացատրելի ոգեսրութեամբ:

Բաֆֆի

57.

ԲԱՆԱՍՏԵՂԾԸ ԵՒ ԵՐԵԽԱՆ

1.

Մի աշնան իրիկուն բանաստեղծ Բերանժէն*), որ հէնց նոր էր պատուել մութ-մոայլ բանտից, անց էր կենում մի յետ ընկած փողոցով:

Օրը սաստիկ ցուրտ էր: Նա հագած ունէր մի տաք,

*) Բերանժէն՝ ֆրանսիայի հռչակաւոր ժողովրդական երգիչը ծնուեց Պարիզում 1780 թ., մեռաւ 1857 թ.

բամբակած բաճկոնակ: Գլխարկն աչքերին քաշած, ձեռքին խաղողի որթից մի բարակ ճիտոտ՝ երգիչը խուլ ու սակաւամարդ փողոցով շտապում էր իր սիրած սրճարանը:

Արդէն մութն էր:

Բանաստեղծն հէնց նոր էր ծռուել դէպի մի նեղ նըքափողց, երբ յանկարծ նրա ականջին դիպաւ մանկական մի խուլ հառաչանք: Նա կանգ առաւ ու սկսեց ականջ գմել, բայց հառաչանքն էլ չկրկնուեց:

— Միթէ ականջն ինձ խաբեց, — հարցրեց նա ինքն իրան: — Ոչ, ես պարզ լսեցի:

— Ո՞վ է այստեղ լալիս, — կանչեց նա իր փափուկ ու սրտալից ձայնով:

Պատասխան չկար:

— Ո՞վ է այստեղ լալիս, — կրկնեց նա աւելի բարձրացայն:

Պատի ետեից իսկոյն երեաց մի փոքրիկ տղայ, որ հազիւ էր կարողանում կանգնել իր փէտացած ոտնեղի վրայ: Բանաստեղծը մօտեցաւ երեխային և սիրտ տալով հարցրեց:

— Դու էիր այստեղ լալիս, փոքրիկս:

— Այն, ես էի... պատասխանեց երեխան դողդողալով, աչքերն արտասունքով լցուած:

Խօսքից ու կերպարանքից պարզ երկում էր, որ այդ փոքրիկը այն խեղճ ու անբախտ երեխաներիցն է, որոնք ամեն տարի Սաւոյից գալիս են Պարիզ մի կերպ իրանց օրական ապրուստը ճարելու:

Բանաստեղծն ընդհատելով երեխայի խօսքը՝ հարցրեց:

— Ի՞նչ է պատահել քեզ, սիրելիս:

— Ես քաղցած եմ և մրսում եմ, — լացով պատասխանեց երեխան:

Բանաստեղծն աչքը զցելով երեխայի ուսից կախ արած արկղիկին, որի մէջ գարսած էին խոզանակներ ու կօշկաներկ, մեղմ ձայնով ասաց:

— Տեսնում եմ, արհեստդ կօշիկներ սրբելն է: Բայց շատ վատ տեղ ես ընտրել, բարեկամ: Այստեղ անց ու

դարձ չկայ: Եւ դու շատ քիչ բան կարող ես վաստակել:
—Ա՛խ... այն, շմտ քիչ...

—Երեխ, շատ ժամանակ չէ, որ Պարիզումն ես:

—Միայն երեք շաբաթ է, —ցըտից շունչը կտրած, հաղիւ
մըմնջաց երեխան ու լաց եղաւ:

Բանաստեղծի սիրաը յուզուեց: Նրա աչքելն էլ ար-
տասուակալեցին:

Նա պինդ սեղմեց երեխայի ձեռքը և ասաց.

—Գնանք միասին: Դու, երեխ, աւելի լաւ գիտես այս-
տեղի փողոցները: Տար ինձ մի այնպիսի պանդոկ, որտեղ
կարողանամ քեզ կուշտ կերակրել:

—Ահա այստեղ, մօտերքում մի պանդոկ կայ, որտեղ
միշտ բանուորներն են ճաշում.

—Շատ լաւ, տար ինձ այնտեղ:

Բանաստեղծն ուզում էր, որքան կարելի է, շուտով տա-
քացնի ու կերակրի թշուառ տղային և այնպէս շտապ-
շտապ էր գնում, որ երեխան հազիւ էր ետկից հասնում:
Փէտացած ուները չէին հնազանդում խղճուկին:

Վերջապէս, նրանք հասան պանդոկը: Ներս մտնելիս,
երգիչը մի քաղցը հայեացք զցեց իր կոքըիկ բարեկամի
վրայ: Երեխան մօտ 12 տարեկան էր: Նա այնքան լղար
էր ու մաշուած, որ իր տարիքից աւելի փոքր էր երկում:
Ցըտաշունչ հողմից խղճուկի շրթունքները բոլորովին կապ-
տել էին, իսկ ձեռքերը՝ կարմրել ու ուռել:

Նրանք մտան բազմաթիւ սեղաններով լի մի ընդարձակ
սենեակ: Սեղանների շուրջը շարուած՝ ճաշում էին բա-
նուորները: Նրանցից մի քանիսը ճաշն արդէն վերջացրած՝
ծխում էին ու զրոյց անում: Իսկ մի քանիսն էլ թուղթ
էին խաղում և Բերանժէի երգերը երգում: Բայց մի կար-
ծէք, թէ նրանց թղթախաղը փողով էր: Ո՞չ, նրանց խաղն
աւելի քաղցը ու զուարճալի էր: Սեղանի վրայ թափթը-
փուած էին մեծ քանակութեամբ լուցկիի կտորներ: Խա-
ղացողներից ավ տանուլ էր տալիս, ընկերներն այդ կտոր-
ներով խտղում էին նրա քթածակերը ու այգախով համ

իրանք ծիծաղում, համ էլ ներկայ եղողներին ծիծաղեց-
նում:

Բանաստեղծն աչքի տակով նայեց պանդոկի հիւրերին և
ժպտալով նրանց այնքան պարզ ու անսահման զուարճու-
թեան վրայ, քայլերն ուղղեց դէպի պանդոկատիրոջ երի-
տասարդ, գեղեցկադէմ աղջիկը, որ աչք չէր պոկում բա-
նաստեղծից: Երեխ զարմանում էր, որ իր պանդոկն էր
մտել բաւականին կոկ հազնուած մի մարդ, որին աւելի
վայել էր շքեղ հիւրանոցը, քան թէ հասարակ պանդոկը:

—Խնդրեմ, այս երեխային կուշտ կերակրեցէք, միայն
թէ կերակուրը թարմ ու սննդարար լինի, —մեղմ ձայնով
ասաց բանաստեղծը՝ դիմելով պանդոկատիրոջ աղջկանը:

—Շատ բարի: Իսկոյն նրա համար ընթրիք կըքերեմ, —
ասաց երիտասարդ, կայտուն աղջիկը և վազեց խոհանոց:

Բանաստեղծը քաշուեց մի խուլ ու աննկատելի անկիւն-
և այնտեղից սկսեց ամեն բան գիտել ու լսել: Նրա կող-
քին տեղ բռնեց նաև երեխան: Զերմութիւնից զուարթա-
ցած նա ուրախ ժպտում էր ու մտածում, որ շուտով իր
համար տաք-տաք ու համեղ կերակուր կը բերեն:

Մի քանի ըստէից կերակուրն արդէն սեղանի վրայ էր:
Երեխան խաչակիքեց երեսն ու սկսեց ուտել:

Բանաստեղծը մի առանձին բաւականութեամբ նայում
էր թշուառ տղային, որ այդ ըստէին, արագաշարժ մե-
քենայի պէս բանում էր, առանց դէս ու դէն նայելու:
Շուտով բանաստեղծի ուշքը գրաւեց սենեակի միւս ծայ-
րում բարձրացած աղաղակը:

—Այն, այն, —բղաւում էր բանուորներից մինը, —ես իմ
ականջով լսեցի դռնապանից, որ Բերանժէին ազատել են
բանտից *): Եկէք, եղբայրներ, ի պատիւ մեր սիրելի եր-
դիմի, երգենք հէնց այն երգը, որի համար նա այնքան
տանջանք քաշեց: Ամօթ ու նախատինք մեզ, որ նրան չը-

*) 1821 թ. կառավարութիւնը Բերանժէին մի քանի կծու երգերի-
չամար երեք ամսով բանտ նստեցրեց և մի զգալի գումար էլ տուգանք
դրաւ վրան:

պաշտպանեցինք։ Դէմ, սկսէք, շնւառ-շնւառ երգենք այդ
երգը, որ չմոռանանք։

Եւ բոլոր ներկայ եղողները միատեղ երգեցին իրանց
ծանօթ ու սիրելի երգը։

Բանաստեղծի սիրտն ակամայից զգածուեց բանուորնե-
րի այդ ոգևառ երգեցողութիւնից։

—Կեցցէ Բերանժէն, —բացականչեցին բանուորները՝
բաժակները վեր բարձրացնելով։

Պանդոկը թնդաց ցնծալից աղաղակներով։

Բանաստեղծը կարմրեց։ Նրա աչքերը փայլեցին։ Նրա
սիրտն այնպէս էր տրոփում, կարծես, ուզում էր կրծքից
դուրս պլրծնել։ Բայց շուտով երգիչն ուշքի եկաւ. սրտի
յուզմունքը զսպեց և փաղաքշանքով նայեց երեխային։
Երեխան ամաններն արդէն խստակել էր։ Պանդոկատիրոջ
աղջիկը սեղանի մօտ կանգնած՝ աչք չէր պոկում բանա-
ստեղծից։ Բանաստեղծը թեքուելով դէպի երեխան՝ կամա-
ցուկ հարցրեց։

—Կշտացմա՞ր։

—Օ՛, շնորհակալ եմ, բոլորովին կշտացայ։ Ինչ որ անից
դուրս եմ եկել, դեռ այսպէս կուշտ փորով հաց չէի կերած։
—Քեզ անո՞ւշ։ Դէ, այժմ գնանք։

Վճարելով ընթրիքի փողը՝ բանաստեղծը շտապեց դէպի
դուռը։ Աղջկայ դէմքից նա նշմարեց, որ աղջիկն իրան ճա-
նաչել էր։ Եւ այն րոպէին, երբ բանաստեղծն ուզում էր
ոտքը դռան շեմքից դուրս դնել, երիտասարդ աղջիկը, որ
պատուով ու սիրով ուղեցեց էր նրան մինչև դուռը, բըռ-
նեց նրա թեւից, կանգնեցրեց և ցածր ձայնով շշնջաց։

—Ես ձեզ ճանաչեցի, մեր սիրելի երգիչ թո՞յլ տուէք,
սեղմեմ ձեր ձեռքը։

Բանաստեղծը ժպտաց և ձեռքը պարզեց աղջկան։ Աղ-
ջիկն ուրախ-ուրախ բռնեց բանաստեղծի ձեռքը, մի քանի
անգամ պինդ սեղմեց, ջերմաջերմ համբուրեց ու քաղցր
ժպիտն երեսին՝ «Բարի զիշեր, պարոն Բերանժէ» բացա-
կանչելով՝ ներս վազեց սենեակը։

2.

Հազիւ մի քանի քայլ էր արել բանաստեղծը, երբ յան-
կարծ նրա ետևից հնչեցին բարձրածայն և զմայլելի աղա-
ղակներ, որոնք թնդացնում էին օդը։ Այդ աղաղակներում
շարունակ լսում էր բանաստեղծի անունը։ Անշուշտ աղ-
ջիկն էր պատմել բանուորներին, որ քիչ առաջ պանդո-
կում առանձնացած նստողը Բերանժէն էր, որ նա բարու-
թիւն էր արել, կերակրել էր աղքատ ու անօդնական երե-
խային։

Բանաստեղծը ծոռւեց հետևեալ փողոցը, բայց ուրախ-
ձայները դեռ հնչում էին։

Այս փողոցում դեռ ոչոք չէր քնած։ Պատուհաններում
լոյս էր երեսում։ Բոլոր խանութներն ու կրպակները բաց
էին։ Յանկարծ բանաստեղծի աչքովն ընկաւ մի հագուստա-
վաճառի խանութ։ Նա կանգ առաւ խանութի դռան առաջ
և դառնալով երեխային՝ ասաց։

—Ներս մտնենք։

Նրանք ներս մտան։

—Ի՞նչ կը հրամայէք, —քաղաքավարի գլուխ տալով՝
հարցրեց հագուստավաճառը։

—Ձեր խանութում կը ճարռէի մի ձեռք բանեցրած, բայց
շնորհքին հագուստ այս երեխայի համար։

—Ի՞նչի չէ. իսկոյն։

—Միայն, ինդրեմ, տաք ու գիմացկուն լինի։
Այդ բոպէին լապտերի լոյսն ընկաւ բանաստեղծի երե-
սին։ Հագուստավաճառը ուշիուշով մտիկ արաւ և մտքից
մի բան անցաւ։ Նրա դէմքին յանկարծ փայլեց աներկբա-
յութեան նշան։ Նա միամտուեց, Նրա աչքերն ուրախու-
թիւնից վառուեցին։ Նա ձեռքերն իրար շփելով՝ խոնար-
հաբար խնդրեց բանաստեղծին, որ սա պատիւ անի իրան-
և բարեհաճի իր աղքատիկ սենեակում, բուխարու առաջ
նստել, մինչև որ ինքը երեխայի համար հագուստ ու ոտ-
նաման կը ջոկի։

—Հագուստ ընտրելը բաւականին ժամանակ կը քաշի և դուք կը յոդնէք շարունակ ոտքի վրայ կանգնած սպանելով։ Խնդրում եմ, մտէք միւս սենեակը, տաքացէք բուխարու առաջ,—ժպտալից դէմքով առաջարկեց հագուստավաճառը։

Տաք պանդոկից ցուրտ փողոց դուրս գալով ու քամու բերանն ընկնելով, բանաստեղծն իրան բաւականին մրսած էր զգում։ Նա մեծ սիրով ընդունեց տաք սենեակն անցնելու առաջարկութիւնը։ Այստեղ նրան դիմաւորեց հագուստավաճառի երիտասարդ կինը, որ իսկոյն աթոռ առաջարկելով հիւրին՝ խնդրեց նստել։ Հագուստավաճառը շտապեց խանութ՝ երեխայի համար հագուստ ջոկելու։ Իսկ կինը կարն առնելով՝ նոյնպէս տեղ բռնեց բուխարու մօտ։

Շուտով նրա և հիւրի մէջ սկսուեց ջերմ խօսակցութիւն։

Հագուստավաճառը խանութ դուրս գնալուն պէս, դարձաւ երեխային։

—Դու ճանաչում ես այդ պարոնին, որի հետ եկար այստեղ։

—Ոչ, չեմ ճանաչում։ Բայց նա շատ բարի մարդ է։ Նա այնպէս կուշտ կերակրեց ինձ, որ իսկի կեանքումս այդպէս կուշտ հաց չէի կերած։

—Հաւատանում եմ, հաւատանում եմ։ Նա միշտ այդպէս բարի է։ Բայց գիտե՞ս նրա անունը։

—Ո՞չ. միայն, կարծեմ, Բե...բեր...

—Բերանժէ հօ չէ, —վրայ բերեց հագուստավաճառը։

—Այն, այն, հէնց այդպէս է։ Հէնց այդպէս անուանեց նրան պանդոկատիրոջ աղջիկը, երբ համբուրեց նրա ձեռքը։

Հագուստավաճառն ուրախութիւնից իրան բոլորովին կորցրել էր։ Նա չէր իմանում, թէ ինչ էր անում։ Կամ այս հագուստն էր վերցնում, ելի ետ տեղը գնում։ Կամ այն հագուստն էր առնում, դէն շպրտում։ Կամ խանութի այս ու այն անկիւնն էր ընկնում ու ոչինչ չէր գտնում։ Բաւական ժամանակ անցաւ, մինչև որ նա խելքը գլուխն հաւաքեց ու մի յարմար հագուստ դտաւ երեխայի համար։

Վերջապէս, երեխան հագաւ նոր շորը։ Նրա երեսն ուրախութիւնից վառվում էր։ Շորը վրան շատ լաւ էր նըստած և տաքացնում էր նրա սառած, նիհար մարմինը։ Բրդէ գուլպաներն ու ամուր կօշիկները նրա մերկ ուսները պաշտպանում էին ցրտից։ Նա խնամքով ծալեց իր հին, բանեցրած շորերն ու փոկով ամբացրեց արկդիկին։

Հագուստավաճառն ուրախ և գոհունակ նայում էր երեխային։ Երբ ամեն բան պատրաստ էր, նա ասաց.

—Դէ, փոքրիկս, այժմ գնանք միւս սենեակը։ Նոր հագուստդ ցոյց տուր բարի մարդուն և շնորհակալութիւն արա:

Երեխան հագուստավաճառի հետ մտաւ կից սենեակը, մօտեցաւ իր բարերարին, բայց սրտի յուզմունքից բան չկարողացաւ ասել։ Միայն աչքերից սկսեցին արտասուքներ կաթկթել, ուրախութեան արտասուքներ։

Բանաստեղծը ժպտաց և սկսեց երեխային դէս ու դէն դարձնել։ Նա մի առանձին բաւականութեամբ ջօշափում էր տաք ու հաստ մահուղը, գննում էր գուլպաներն ու կօշիկները։ Վերջապէս, շատ գոհ մնաց և դառնալով հագուստավաճառին՝ հարցրեց գինը։

Հագուստավաճառը հակառակ իր ուղածին՝ բոլորովին աժան գին նշանակեց։

Բանաստեղծն հանեց գրպանից քսակը, միջի փողերը թափեց սեղանի վրայ ու սկսեց համրել։ Բայց որքան մեծ եղաւ նրա շփոթմունքը, երբ տեսաւ, որ փողը չի հասնում... Սկսեց գրպանները տակն ու վրայ անել, բայց իդուր...բան չդտաւ։

—Աստուած իմ, —ասաց նա յուզուած ձայնով, —չգիտեմ, ճշմարիտ, ինչ անեմ... փողս չի բաւականանում...

Հագուստավաճառը ժպտաց, մօտեցաւ սեղանին, փողերն հաւաքեց, ածեց սեղանի արկդը և սիրալի ձայնով ասաց։

—Դուք առանց այն էլ, բարի մարդ, շատ խնամք էք ցոյց տուել այս անբախտ երեխային։ Թոյլ տուէք, ես էլ իմ կողմից մի փոքրիկ օգնութիւն անեմ։ Էլ ոչինչ պէտք

չէ—դուք բոլորը վճարեցիք: Ես անշափ շնորհակալ եմ այս փոքրիկից: Սա որ չլինէր, ով ինձ կարժանացնէր մեր սիրելի Բերանժէին տեսնելու իմ տանը, իմ աղքատիկ յարկի տակ:

— Ի՞նչ եմ լսում,—յանկարծ բացականչեց կինը զարմացած:—Միթէ այս պարոնը մեր Բերանժէն է:

Բանաստեղծի շփոթութիւնն հետզհետէ սաստկանում էր: Հագուստավաճառի կինը ջերմ սեղմում ու համբոյրներով ծածկում էր բանաստեղծի ձեռքը: Իսկ երեխան, ուրախութեան արտասուքն աչքերում՝ պինդ կուել էր հագուստավաճառին:

— Թողէք, Աստուած սիրէք, թողէք գնամ, — ասում էր բանաստեղծ՝ աշխատելով իր ձեռքը մի կերպ աղատել կնոջ ձեռքից:

Եւ յուզուած բանաստեղծի աչքերում այդ ըսպէին պարզ նշմարում էին աղաչանք ու պաղատանք:

Վերջապէս, նա մի կերպ աղատեց իրան այդ շփոթ դրութիւնից և քայլերը շտապ ուղղեց դէպի խանութի դուռը՝ աշխատելով ծածկել սրտի յուզմունքը:

Նրա ետեից լսում էր. «Թող Աստուած օրհնի ձեզ»:

Երկար ժամանակ բանաստեղծը գլուխը կախ՝ շրջում էր փողոցներում:

Վերջապէս, նա մտաւ իր սիրած սրճարանը և նստեց պատուհանի մօտ—իր սովորական տեղը:

Նա լուս էր:

Նրա երեսին փայլում էր ուրախութիւն: Նա մոռացել էր նոյն իսկ իր առջև դրած սուրճով լի բաժակը, որ բերել էր սրճարանատէր տիկինը: Երբ վերջինս յիշեցրեց նըրան, որ սուրճը պաղում է, բանաստեղծը ժամաց, նայեց տիկնոջը և մի ձեռքը լրագիր առնելով, միւս ձեռքով սկըսեց սուրճը խմել:

Երբ բանաստեղծը պատրաստում էր տուն գնալ, դարձաւ տիկնոջն ու քաղցր ժպիտով ասաց,

— Ներեցէք, որ այսօր անկարող եմ սուրճիս փողը

վճարել: Խնդրում եմ, իմ հաշուին դրեցէք: Այս ըսպէիս գրպաններս դատարկ են...

Եւ անմահ բանաստեղծի դրպանները մինչեւ նրա կեանքի վերջը դատարկ մնացին...

Ա. Ծատուրեան

58.

ԱՂՔԱՏ ԿԻՆ

(Բերանժէից)

Յուրաքանչեց... ձըմեռ սաստիկ...

Զիւնն է ծածկել տուն-տընակ.

Ամենայն մարդ՝ մտած իր տուն,

Պահուել է տաք յարկի տակ...

Ժամի դրութիւն դողդողալով

Կանգնած է մի աղքատ կին.

Հագուստն անշնչք, պատառ-պատառ,

Չունի շաղիկ իր հաղին...

Անհամարձակ նա իր ձեռքն է

Պարզում ամեն անցորդին—

«Ողորմութիւն արէք, պարոն,

Անտւն, անտէր աղքատին...»:

Ձեզ, սիրելիք, ասեմ՝ ով էր

Այդ խըղճալին, որ բոկոտ,

Ցըրտից դողում ու մուրում է,

Կանգնած ժամի դըռան մօտ...

Շատ ժամանակ դեռ չէ անցել,

Երբ նա պատուվ ու փառքով

Ման էր գալիս փողոցներում

Իր սեփական ճոխ կառքով...

Այժըմ ահով նա իր ձեռքն է

Պարզում ամեն անցորդին—
«Ողորմութիւն արէք, պարսն,
Անտոն, անտէր աղքատին...»:

Ամենայն օր նըրա դըռնում
Շարուած կառքեր բազմաթիւ,
Մարդիկ գալիս, գընում էին,
Բերում յարգանք ու պատիւ...
Միշտ կերուխում, երգ ու նուագ,
Բարիքներով տունը լին.
Ո՞վ չէր ուզում տանտիրուհուն
Լինել քաղցր ու հաճելի...
Այժմ նա զուրկ ամեն բանից,
Չունի անգամ հացի գին.
«Ողորմութիւն արէք, պարսն,
Անտոն, անտէր աղքատին...»:

Ժամի դըռնում նա կանգնած է,
Աչքերը կը, վիզը ճուկ.
Նըրա նախկին բարեկամներն
Չեն էլ ասում. «Այ խըդառկ,
Եկ դու մեզ մօտ, մենք կ'ամոքենք
Կեանքիդ ցաւերն ու մորմոք.
Մենք կը մեղմենք ճակատագրիդ
Հարուածն անգնաթ, անողնք»:
Նա տառապում, համբերում է
Ամեն ցաւին ու վըշտին...
«Ողորմութիւն արէք, պարսն,
Անտոն, անտէր աղքատին...»:

Ս. Նալբանդեան

և ուշագր պիտիքան քառակ տարրունց ամենա
ուրաց զույնով ով նուագան ու ու պատիւ
անդեմ առ լուս գեղագութիւն աջանակի մի վայրից
ով վայրից ու առ ու ու անդեմ անելու

Մի օր, մայիս ամսին, մի անսպասելի տեսարան բա-
ցուեց աչքիս առաջ.

Կէսօրուան մօտ էր: Արեւ գունատ-կապուտակ բարձուն-
քից մի ախորժ ջերմութիւն էր ծաւալում: Ծառեր ու
թփեր, դաշտեր ու բլուրներ ներկուել էին քնքոյշ-կանաչ
գոյներով: Զիւնն արդէն չքացել էր սրածայր լեռնագա-
գաթներից:

Սարադաշտերից մէկի վրայ, ուր բազմաթիւ ու բազմե-
րանգ ծաղիկներ իրար խառնուած՝ գրաւիչ խմբակներ էին
կազմել, նստել էին երեք երեխայ: Ամենափոքը կըլինէր
երկու տարեկան, իսկ ամենամեծը — չորս:

Մանուկները ծաղիկների աշխարհն ընկած՝ ամեն մէկը
մի բան էր անում: Միջնակը հացի կտոր էր կոծում ու,
երբ բգեցներ էր տեսնում, իսկոյն հացի կտորը փէշի տակ
էր թագցնում: Մեծը մի խոշոր ծաղկի կատարը թեքել,
մօտեցրել էր մի մանիշակագոյն ծաղկի և յորդորում էր,
որ համբուրի: Երեկի, նրանց մայր ու որդի էր համարում:
Նախշուն թիթեռնիկը թրթուալով նստում էր այս ու այն
ծաղկի վրայ, թիկիները բարձրացնում, իրար մօտեցնում
և մի քանի վայրկեանից յետոյ նորից ծաղկից-ծաղկի էր
թռչում:

Փոքրիկը նկատելով այդ, իր թաթիկները տարածում էր
օդի մէջ, որ թիթեռնիկին բռնի, և մի քանի անգամ իզուր
շարժելուց յետոյ, թաթիկները կոխում էր բերանը:

Ահա մեծը վեր կացաւ տեղից: Միւսներն էլ ուզեցին
հետեւ նրան, բայց ոա լուրջ երես շինելով՝ պատուիրեց,
որ մնան: Մտաւ իրանից երկար ծաղիկների մէջ, աջ ու ձախ
հրեց նրանց, ճանապարհ բացեց ու անհետացաւ: Նա ու-
ղեց փունջ կապի, բայց չգիտէր՝ ինչպէս անի: Իր փոք-
րիկ մատները մօտեցնում էր առաջ մէկին, յետոյ միւսին,

Երրորդին, չորրորդին։ Բազմերանդ ծաղիկները գրաւում էին նրա ուշ ու միտքը և նա աշխատում էր բոլորը քաղի։

Վերջապէս, փափագն յագեցնելով յետոյ, նա վերադառնած ձեռքին բռնած երկու հատ կարմիր կակաչ։ Մէկը տուաւ միջնակին, միւսը՝ փոքրիկին։ Փոքրիկն իսկոյն պոկեց թերթիկները, դատարկ ցօղունը մօտեցրեց բերանին, յետոյ առաջարկեց կողքին նստողին։

Մեծը նստեց իր առաջուայ տեղը և յայտնեց, որ հէքիաթ է պատմելու։ Բայց իսկոյն միտքը փոխեց և առաջարկեց միասին երգել։

Հնչեցին մանկական ձայները՝ աշխատելով իրարից բարձրը գոռալ։

Այդ աններգաշնակ աղմուկը ոչ միայն անախորժ չէր, այլև հաճելի։ Եւ ես սիրով ականջ էի զնում։

Շուտով նրանք ձանձրացան երգելուց և ժափիտն երեսներին՝ միաժամանակ լուեցին։ Այդ բոսկէին ես յիշեցի այն հին ճշմարտութիւնը, որ մանկական ժպիտի նման դուրեկան բան չկայ աշխարհիս երեսին։

Մանուկները նստած էին ծաղիկների վրայ, ծաղիկներով շրջապատած։

Ծաղիկ և երեխայ—դրանք հարազատներ են, մտածեցի ես։

Օդում ճախրում էին ծիծեռնակները։ Նրանք երբեմն արագ սլանալով երեխաների գլխավերե ու յանկարծակի շփոթելով նրանց, այս ու այնտեղ պտոյտներ էին անում ու անհետանում բլուրների ետեր։ Սկսուեց թե՛թե զեփիւսի խաղը ծաղիկների հետ։ Ծփծփաց ծաղիկների աշխարհը։ Նրանք թեքեցին իրանց գունագեղ գլխակները մանուկների երեսներին ու, երեխ, շնչացին, որ համբոյրի ժամն է, որովհետեւ այդ միջոցին նրանք համբուրուցին։ Միջակի կրծքի վրայ այդ բոպէին մի կարմրագոյն միջատ էր բարձրանում։ Երեխաները նկատելով այդ՝ ուզեցին բռնել, բայց երբ յանկարծ նա իր թեփիկները բաց արաւ ու թուաւ, նրանք կուշտ-կուշտ ծիծաղեցին։

Այդ անմեղ ծիծաղը խառնուեց, ձայնակցեց ծաղիկների սրւառոցին և բնութեան ծոցում բոպէապէս կազմուեց մի անսովոր, մի նազելի համերդ։

Վերջապէս, երեխաները վերկացան տեղներից և ձեռքձեռքի տուած՝ սկսեցին քայլել։

Ընթանում էին նրանք ծաղիկների շարքերի միջով, ուրոնք խոնարհ ու անտրտունջ պառկում էին մանուկների ոտիկների տակ, մանապարհ բացում նրանց համար և նուրից զգուշութեամբ շտկում, գլխակները բարձրացնում։

Տեսարանը կախարդել էր ինձ։

Ահա իսկական զեղեցկութիւնը,—մտածում էի ես։

Գէորգ Բաշինջաղեան

60.

ԻՄ ՊԱՆՍՐԱՄԾ

1.

Ես մի ծեր մարդ եմ, սիրելի մանուկներ, իմ փոքրիկ ընթերցողներ։ Պտտել եմ շատ զիւղեր ու քաղաքներ, անցկացել զետեր ու ծովեր, շատ բան եմ տեսել, շատ բան եմ լսել. երբեմն տրտմել եմ, երբեմն՝ ուրախացել։ Այժմ ուղում եմ պանարամիս մէջ փոքրիկ պատկերներով տեսածս ցոյց տամ ձեզ...

Դէհ, շուտով այստեղ, դուք, ժիր մանուկներ,

Մէծ ու պլստիկներ, խելօք ու չարեր.

Կարգ-կարգ շարուեցէք, ինչ որ կըլուէք,

Ինչ որ կըտեսնէք, ձեր մըտքում ամուր,

Ամհւը պահեցէք...

Սկսում է։

Ահա՝ մի պատկեր։ Մի մեծ քաղաք է ճոխ տուն ու շէնքով. լայն փողոցներում շրջում են մարդիկ ոտով ու կառքով.

սիզար, պապիրոս բերաններն առած՝ փուհ-փուհ ծծում են
մուխը թանձրացած:

Թող ծըծեն, փըշեն, փորերն ուոցընեն,
Ի՞նչ ունին պակաս, որ ինչ հոգս անեն...

Էլի մի պատկեր միենոյն տեղից: Մի խուլ փողոց է
ցեխոտ ու կեղտոտ. խարխուլ տնակներ աջ ու ձախ շի-
նած. երկու դրկիցներ դոան առաջին զրոյց են անումքիթ-
քթի տուած: Եւ հեռուն կանգնած մի աղքատ կնիկ, հա-
գուստն հնամաշ, ոտքերը բոբիկ—մի հիւանդ մանուկ բո-
նած իր գրկում անց ու դարձողին ձեռք է դէմ անում...

Այժմ ձեզ ցոյց տամ մի այլ տեսարան.
Նոյն մեծ քաղաքում, փողոցում մի լայն,
Եղենու ճիւղեր փրոած ձախ ու աջ.
Համբ ընթանում է դիակառքն առաջ.
Թաղնում է շըքեղ—հարուստ է մեռած.
Մեծ բազմութիւն է շուրջը բոլորած:

Առջեց ահա շար-շար քահանայք՝ ծաղկեայ փիլոններ ու-
սերին ձգած և նրանց հետ էլ շատ տիրացուներ՝ մոմ ու
խաչվառներ ձեռքերին բոնած: Իսկ վերջից, տեսէք, կառ-
քերի շարան՝ սեազգեստ կանայք մէջը նստուած: Եւ ի՞նչ-
պէս տիսուր, ի՞նչպէս վշտալից՝ սրանք հետևում են մեռե-
լի ետքից:

Դարձեալ մի պատկեր: Քաղաքի ծայրում հինդ-վեց մը-
շակներ ուսերի վրայ տանում են անբախտ ընկերի դիակ,
որ քանի տարի իր երկրից հեռու, ծանր բեռի տակ մա-
շել է իր կեանք... Զկան յուղարկող ոչ քոյր, ոչ եղբայր.
լացող ու կոծող ոչ հայր ու ոչ մայր... Լուռ է փողոցը,
լուռ են և մարդիկ... Եւ այս ամենին նայում է անձայն
երկինքը միայն...

Մի ուրիշ պատկեր: Բարեկենդան է: Մի շատ ընդար-

ձակ սենեակ ձեր առաջ: Զահեր, լամպարներ վառած ձախ
ու աջ. պատերին կախած մեծ-մեծ հայելիք, չորս կողմն
արդ ու զարդ, ճոխ կահ-կարասիք: Մէջտեղում երկայն
սեղան է ձգած, տասնեակ մարդ ու կին ընթրիքի նստած:

Այս, ի՞նչեր չըկան սեղանի վըրէն—

Ազնիւ գինիներ, անուշ ձըկնեղէն,

Խաւեար ու պանիր, տապակած հաւեր, Տեսակ-տեսակ միրգ, քաղցրաւենիներ...

Ուտում են, խըմում... երգ, քըրքիջ, ծիծաղ—
Բարեկենդանը տօնում են ուրախ...

Ահա նոյն տան կից՝ փոքրիկ խըճիթում ճրագի աղօտ
լոյս... Լուռ կիսամըթում, չոր թախտի վրայ մայր ու զա-
ւակներ Բարեկենդանի ընթրիք են ուտում: Զկայ ոչ սե-
ղան, ոչ համեղ ընթրիք. Զկան գինիներ ու քաղցրաւե-
նիք... Մի հին սուփրայ է առջենին փուած, ուր միայն
պանրի փշրանք է դրած, ու քարթոյ հացի մի քանի կտոր...
ուտում են անձայն, ուտում զլիսիկոր..., Տիսւր է խըճիթն,
անլոյս, աղքատիկ. տիսւր են, տիսւր և մայր ու որդիք:
Միայն չար փիսօն քիչ հեռուն պըպզած, շարժում է պոչը՝
աչքերը պրլզած...

Է՞ն, բաւական է, ի՞նչ որ դուք տեսաք,
ի՞նչ որ ցոյց տուի. գուցէ, յոգնեցաք...

Այժմ ծերուկիս թողէք, որ գընամ,

Եկող անզամը շատ բան ցոյց կըտամ.

Դէն, մընաք բարե, իմ ժիր մանուկներ,

Մէծ ու պըստիկներ, խելօք ու շարեր:

2.

Անցան ամիսներ, տարին բոլորեց, ձեր ծերուկն ահա
նորից երևեց: Եկէք, մանուկներ, իմ աչքի շոյսէր, դառ-
նացած սրտիս դուք միակ յոյսեր: Դարձեալ բերել եմ ձեզ
իմ պանարամ, մի քանի պատկեր նորից ձեզ ցոյց տամ.

սիզար, պապիրոս բերաններն առած՝ փուհ-փուհ ծծում են
մուկը թանձրացած:

Թող ծըծեն, փըչեն, փորերն ուոցընեն,
ի՞նչ ունին պակաս, որ ի՞նչ հոգս անեն...

Էլի մի պատկեր միևնոյն տեղից: Մի խուլ փողոց է
ցեխոտ ու կեղտոտ. խարխուլ տնակներ աջ ու ձախ շի-
նած. երկու դրկիցներ դռան առաջին զրոյց են անումքիթ-
քթի տուած: Եւ հեռուն կանգնած մի աղքատ կնիկ, հա-
գուստն հնամաշ, ոտքերը բորիկ—մի հիւանդ մանուկ բո-
նած իր գրկում անց ու դարձողին ձեռք է դէմ անում...

Այժմ ձեզ ցոյց տամ մի այլ տեսարան.
Նոյն մեծ քաղաքում, փողոցում մի լայն,
եղենու ճիւղեր փրուած ձախ ու աջ.
Համբ ընթանում է դիակառքն առաջ.
Թաղում է շըքեղ—հարուստ է մեռած.
Մեծ բազմութիւն է շուրջը բոլորած:

Առջեից ահա շարշար քահանայք՝ ծաղկեայ փիլոններ ու-
սերին ձգած և նրանց հետ էլ շատ տիրացուներ՝ մոմ ու
խաչվառներ ձեռքերին բռնած: Իսկ վերջից, տեսէք, կառ-
քերի շարան՝ սեազգեստ կանայք մէջը նստոտած: Եւ ի՞նչ-
պէս տիսուր, ի՞նչպէս վշտալից՝ սրանք հետեւմ են մեռե-
լի ետքից:

Դարձեալ մի պատկեր: Քաղաքի ծայրում հինգ-վեց մը-
շակներ ուսերի վրայ տանում են անբախտ ընկերի դիակ,
որ քանի տարի իր երկրից հեռու, ծանր բեռի տակ մա-
շել է իր կեանք... Զկան յուղարկող ոչ քոյր, ոչ եղբայր.
լացող ու կոծող ոչ հայր ու ոչ մայր... Լուռ է փողոցը,
լուռ են և մարդիկ... Եւ այս ամենին նայում է անձայն
երկինքը միայն...

Մի ուրիշ պատկեր: Բարեկենդան է: Մի շատ ընդար-

ձակ սենեակ ձեր առաջ: Զահեր, լամպարներ վառած ձախ
ու աջ. պատերին կախած մեծ-մեծ հայելիք, չորս կողմն
արդ ու զարդ, ճոխ կահ-կարասիք: Մէջտեղում երկայն
սեղան է ձգած, տասնեակ մարդ ու կին ընթրիքի նստած:

Այս, ի՞նչեր չըկան սեղանի վըրէն—

Ազնիւ գինիներ, անուշ ձըկնեղէն,

Խաւեար ու պանիր, տապակած հաւեր,

Տեսակ-տեսակ միրդ, քաղցրաւենիներ...

Ուտում են, խըմում... Երգ, քըրքիջ, ծիծաղ—
Բարեկենդանը տօնում են ուրախ...

Ահա նոյն տան կից՝ փոքրիկ խրճիթում ճրագի աղօտ
լոյս... Լուռ կիսամըթում, չոր թախտի վրայ մայր ու զա-
ւակներ Բարեկենդանի ընթրիք են ուտում: Զկայ ոչ սե-
ղան, ոչ համեղ ընթրիք. չկան գինիներ ու քաղցրաւե-
նիք... Մի հին սուփրայ է առջենին փռած, ուր միայն
պանըի փշրանք է դրած, ու քարթոյ հացի մի քանի կտոր...
ուտում են անձայն, ուտում գլխիկոր... Տիսնւր է խրճիթն,
անլոյս, աղքատիկ. տիսնւր են, տիսնւր և մայր ու որդիք:
Միայն չար փիսօն քիչ հեռուն պըպղած, շարժում է պոչը՝
աշքերը պըլղած...

Էհ, բաւական է, ի՞նչ որ գուք տեսաք,
ի՞նչ որ ցոյց տուի. գուցէ, յոգնեցաք...

Այժմ ծերուկիս թողէք, որ գընամ,

եկող անզամը շատ բան ցոյց կըտամ.

Դէհ, մընաք բարե, իմ ժիր մանուկներ,

Մէծ ու պըստիկներ, խելօք ու չարեր:

2.

Անցան ամիսներ, տարին բոլորեց, ձեր ծերուկն ահա
նորից երեց: Եկէք, մանուկներ, իմ աչքի լոյսեր, զառ-
նացած սրտիս գուք միակ յոյսեր: Դարձեալ բերել եմ ձեզ
իմ պանարամ, մի քանի պատկեր նորից ձեզ ցոյց տամ.

Տըխուր թէ ուրախ—ինչ որ դուք տեսնէք,
Աղաչում եմ ձեզ՝ չըմոնաք երբէք:
Դէն, սկսում է լասաղովնոր պահ քայր ու քա
«Ամառը սարում»:

Տեսէք այս սարը կանաչով պատած, այստեղ ու այն-
տեղ վրաններ գարկած: Վրանների շուրջ հայ, թուրք դիւ-
ղացի—ամենքն էլ կալած մի բան ու գործի: Որը տաշում
է, որը սրում է, որը կար կարում, մանկանն օրօրում.
որը ամանով տաք կաթ է բերում, որը ամանում մածուն
է մէրում: Իսկ մի քիչ հեռուն՝ տաւարն է նրանց—ոչ-
խարի հօտեր, բոլուկներ ձիանց, որ մինչև փորը խոտե-
րում ծածկուած կամ գըլ-գըլ ջրի ափին հաւաքուած,
կանգնել են տըկած, չեն շարժում տեղից, ինչույր
կուշտ են ու գոհ վիճակից:

Եւ գիտէք՝ ով է մոթալ գըգակով
Հաստավիզ մարդը իր դագանակով, զանցի դիմար
Որ աչքը գըցած սարի ծերպերին,
Սարի փէշերին, սուրբ սիրով լեցուն
Մի բան է երգում ձերմակ ամպերին,
Արև-երկնքին ու Տէր-Աստղծուն—
Դա նախրապանն է՝ տէրը տաւարի,
Որ սար է գալիս ամենայն տարի:

«Զմեռը գիւղում»:

Ահա նոյն նախիրն, նոյն հօտն ու ձիեր: Բայց ոչ ա-
մառ՝ սարի խոտերում, ոչ էլ քըշքշան ջրերի ափին, այլ
ձմեռուայ ցրտին՝ գիւղի գոմերում: Մսերը հալուել, չոր
ոսկոր դառել՝ քաղցած են, լղար—ձի, կով ու ոչխար:
Յուրա է ու ձմեռ, խոտ չկայ տալու, սառել են դաշտեր,
գարունն է հեռու...

Սովից մսուրի փայտերն են կըսծում,
Դոփում կընդակով—չըկայ յագեցում...
Մայում, բառաչում, վիզերն են ծըռում,

Թուլացած ընկնում... յաւիտեան լըռում...

Իսկ մեր գիւղացին, ոհ, ինչպէս խըղճուկ
Կանգնած նայում է, թափում արտասուք.

Արիւն է կաթում ցաւ-սըրտի խորքից,
Երբ մի անասուն գընում է ձեռքից...

Նայեցէք, ահա մի ուրիշ պատկեր:

«Գարնան սկզբում գիւղացու յոյսեր»:

Գարնան է, գարնան, ինչ քաղցրիկ անուն: Ծառ ու տունկ
ծաղկել, արտեր կանաչել, ջրերը փուռել, ծաղկունքը բա-
ցուել, գեղջուկ մշակն է յոյսերով լցուել: Կըգայ ամառը,
կը գեղնի ցորեն. կը հնձէ գեղջուկն ու առատօրէն կըտա-
նի ամբար՝ ապրուստի համար: կը հասնեն միրգը, խա-
ղողը բաղի, լի քթոցներով կառնի, կը քաղի ու տուն բե-
րելով, կը կախի շար-շար՝ տան համար պաշար:

Խոտ կայ տաւարին, գարման՝ ձիերին,
Ծաղկունքը՝ մեղուին, մեղրը՝ փոքրերին.

Ահ, մեր գիւղացին ինչպէս երջանիկ,

Ամեն բանն առատ, տուն ու տեղը լիք,

Կանցնէ այս տարին...

Պատկերը փոխուեց:

Ահա նոյն գեղջուկն ամառ ժամանակ՝ տխուր նստած է
իր հին յարկի տակ: Ուր է նրա յոյս՝ ծոխ արտն ու այ-
գին: Ի՞նչու է ժանդոտ մանգաղ—գերանդին:

Մարախը եկաւ, արտերը կերաւ,

Ինչ որ չէր կերած—կարկուտը տարաւ...

Թըրթուրը խըժուեց ծառերի տերեւ,

Պըտուղ չըմընաց—ողջն այրեց արկ...

Սոված մեղուներ փեթակից թըռան,

Բըջիջը մընաց գնուրկ մեղրից ծորան.

Դաշտը չըրացաւ, խոտ չըկայ կովին,

Ամբարն է գատարկ... Վայ էս սև սովին

Ո՞նց պիտ գիմանայ գեղջուկը թըշուառ.

Այս տարին մահ է գեղջուկի համար...

Այս, թողէք, վերջ տամ տխուր պատկերին, այ իմ փոք-
րիկներ, այ իմ սիրելիք։ Այսպէս է բախտը—մարդ նրա
ձեռին մի օր անբախտ է, մի օր երջանիկ։ Այսպէս է
կեանքը, այսպէս է աշխարհ—լացն ու ծիծաղը քոյրեր են
իրար...

Դէս, մընաք բարեւ ես էլի կը գամ,
իմ բարեկամներ, էլի ցոյց կը տամ
Զեզ նոր պատկերներ իմ պանարամում,
ինչ որ կըտեսնեմ նոր բան աշխարհում...

Կ. Մելիք-Շահնազարեան

61.

ՄԵՐՈՒԺԱՆ ԱՐԾՐՈՒԽԻ ԵՒ ՍՄԲԱՏ ԲՅԳՐԱՑՈՒԽԻ

1.

ՄԵՐՈՒԺԱՆ ԱՐԾՐՈՒԽԻ ՀԱՅ Իշխանական ցեղից էր։
Նա շատ փառասէր էր և մտածում էր մի օր հայոց թա-
գաւոր լինել։

Երբ մեռաւ Արշակ Երկրորդը՝ ՄԵՐՈՒԺԱՆՆ օգտուեց այդ
գէպից, դաւաճանեց իր հայրենիքին, ուրացաւ իր հա-
ւատքը, անցաւ պարսից կողմը և դարձաւ կրակապաշտ։
Պարսից թագաւոր Շապուհը, որ վաղուց ուզում էր վե-
րացնել Հայաստանում քրիստոնէութիւնը, շատ է ուրախա-
նում ՄԵՐՈՒԺԱՆԻ հաւատուրացութեան վրայ։ Նա վճռում է
ՄԵՐՈՒԺԱՆԻ օգնութեամբ նուաճել Հայաստանը և հայե-
րին կրակապաշտ դարձնել։ Մատնիշ նախարարին աւելի
զրաւելու համար՝ նա ընծայում է նրան շատ գիւղեր,
կնութեան է տալիս իր քոյր Որմիղդուխտին և խոստա-
նում է տալ նրան հայոց թագաւորութիւնը՝ եթէ միայն
հնապանդեցնէ իրան հայ իշխաններին և մտցնէ իր մայրե-
նի երկրում կրակապաշտութիւնը։

Փառասէր ՄԵՐՈՒԺԱՆՆ ուրախութեամբ ընդունում է Շա-
պուհի առաջարկութիւնը և, ստանալով նրանից բազմաթիւ
զօրք՝ արշաւանք է գործում Հայաստան։ Նա աւերում է
շատ գիւղեր ու քաղաքներ, առնում է մի քանի բերդեր,
գերում է հայ իշխանների կանանց, հաւատացած լինելով,
որ դրանով կը ստիպէ նրանց ամուսիններին՝ անձնատուր
լինել իրան։ Բացի այդ՝ նա շղթայակապ ուղարկում է
Պարսկաստան հայ եպիսկոպոսներին, և քահանաներին, որ
ժողովուրդը մնայ առանց հովիւների. այրում է ձեռն ըն-
կած գրքերը, արգելում է հայերէն խօսել և ստիպում է
բոլորին պարսկերէն սովորել։

Վշացած Ներսէս կաթողիկոսը չդիմացաւ ՄԵՐՈՒԺԱՆԻ-
այդ չարագործութիւններին. նա ուզեց այդ բանի առաջն-
առնել և դիմեց յունաց կայսեր օգնութեան։ Քրիստոնեայ
կայսրը խղճաց հայերին, օգնական զօրք տուեց Յունաս-
տանում գանուող թագաժառանդ Պապին՝ Արշակի որդուն,
և ուղարկեց նրան Հայաստան։

Շքով և հանդիսով եկաւ Պապը հայրենի երկիրը, որն
անհամբերութեամբ սպասում էր իր թագաւորին։ Խորը
խոցուեց Պապի սիրտը՝ երբ տեսաւ, որ ամենքը սկի
մէջ են, երկիրը աւերակ է դարձել և նենգաւոր ՄԵՐՈՒ-
ԺԱՆը տիրացել է իր թագաւորութեան։ Ունենալով պատ-
րասի զօրք՝ նա յարձակուեց դաւաճան իշխանի վրայ և
կարճ միջոցում քշեց նրան իր երկիրց։

Զարասիրտ ՄԵՐՈՒԺԱՆՆ ուզեց իր պարաւութեան վրէժն
առնել հայ նախարարներից։ Նա հրամայեց բերդապահնե-
րին, որ պարիսպներից կախեն գերած կանանց, նրանց դի-
ակները թողնեն գիշակեր թոշուններին, իսկ ինքը փախաւ
Պարսկաստան։

2.

Պարսից արքայ Շապուհը սաստիկ չարանում է իր ըսկ-
սած գործի անյաջողութեան համար. նա հաւաքում է
անթիւ զօրք և նոյն ՄԵՐՈՒԺԱՆԻ առաջնորդութեամբ ու-

դարկում է Հայաստան։ Յունաց կայսրն, իմանալով այդ բանը՝ անօգնական չի թողնում Պալ թագաւորին և տալիս է նրան ընտիր զօրք, որ պաշտպանուի անօրէն թշնամիների դէմ։ Պատերազմը Զիրաւ դաշտումն էր։ Երկու կողմի զօրքերը վատահութեամբ ճակատ ճակատին են տալիս։ Սկսում է կատաղի կռիւր. զէնքերի շաշիւնը, զինուորների աղաղակները դղբեցնում են դաշտը։ Հայ իշխանների մանուկներն իրանց կամքով նոյնպէս վագում են կռուի դաշտն առաջնորդութեամբ Սմբատ Բագրատունու, որ ասպետական ցեղից էր *). Նրանք խրոխտ կերպով ձի նըստած, վահաններով զինաւորուած՝ յարձակւում են իրանց հակառակորդ պարսիկ մանուկների վրայ և նիդակահար մնելով գետինը ծածկում են նրանց զիակներով։ Այս արիւնահեղ տեսարանին վկայ էր Մեծն Ներսէսը, որ, նստած նպատ լերան գագաթին, ձեռքերն երկինք ամբարձած՝ խնդրում էր Սմենակաբողի պաշտպանութիւնը քրիստոնեայ զինուորներին։ Ահեղ էր պատերազմը։ Զինուորները կռում էին անսակլի քաջութեամբ։ կարծես ամեն մէկը ուզում լինէր զարդարել իր զլուխը յաղթութեան պսակով։ Յանկարծ կռուի ամենատաք ժամին, երկինքը ծածկում է ամպերով, մութ է պատում չորս կողմք.., Բարձրանում է սաստիկ հողմ, որ փչում էր ուղղակի պարսից դէմ։ Զայն, աղաղակ է լուսում թշնամի գնդերի մէջ, պարսից զինուորները շփոթում են և յուսահատուած սկսում են փախչել։ Բայց Մերուժանը յետ է մնում փախուկ պարսիկներից։ Նրա ձին վիրաւորուել էր։ Սմբատ քաջը շտապով վրայ է հասնում, կալանաւորում է նրան և լաւ է դատում։ չտանել նրան հայոց բանակը, որովհետև երկիւղ էր կռում, որ Մեծն Ներսէսը կարող էր իր մեծահոգութեամբ խղճալ դաւաճանին և ազատել նրան մահից։ Այս պատճառով Սմբատ քաջը օգտ-

*) Այս ցեղի իշխանները ասպետ էին կոչւում այն պատճառով, որ նրանք էին թագ դնում հայոց թագաւորների գլխին։

ուում է դէպքից։ Նոյն տեղում, կրակի շուրջը նստած են լինում մի խումբ մարդիկ. վերցնում է նրանցից հրաշէկ շամփուրը և, պսակաձև բոլորելով կալանաւոր մատնիչի գլխով՝ ասում է. «Պսակնում եմ քեզ, Մերուժան։ քանի որ դու կամենում էիր լինել հայոց թագաւոր, ես, իբրև ասպետ, դնում եմ այս թագը քո գլխին»։ Զգիմացաւ այս տանջանքին Մերուժանը։ Նա պատճուեց իր անթիւ չարագործութիւնների համար այս խայտառակ մահով։

Կ. Կուսիկեան

Ծառի ձիձուն ծառից է,

Զար թշնամին տանից է,

Վայ այն ազգին, այն տոհմին,

Որի մատնիչն ազգից է։

62.

ԱՐՇԱԿ ԹԱԳԱԽՈՐԸ ԵՒ ԴՐԱՍՏԱՄԱՏ ԻՇԽԱՆՆԸ

1.

Մի անգամ պարսից արքայ Շապուհը, կամենալով հաշտապը ել հայոց թագաւոր Արշակի հետ, ուզարկում է նրան նուերներ և ասում. «Եթէ մենք բարեկամներ ենք, եկ իրար տեսնենք և ապա լինենք միմեանց հետ իբրև հայր ու որդի»։ Արշակը չի հաւատում նրան, պահանջում է, որ նա երդումով հաստատի իր հրաւերը։ Եւ Շապուհը, երդման օրէնքով, բերել է տալիս աղ և, կնքելով նրան վարազակերպ մատանիով՝ ուզարկում է Արշակին՝ ի նշան բարեկամութեան։ Այս երդումից յետոյ հայ իշխանները միամտում են և ստիպում իրանց թագաւորին գնալ պարսից Դուռը։

Եւ արքայից արքան շուք ու փայլով, շրջապատուած իր

զօրքով ու իշխաններով, ընդունում է Արշակ թագաւորին: Արդէն երեկոյ էր: Իրանի մեծ Տէրը հրամայում է ճոխ ինջոյք սարքել: Պալատի ոսկեզօծ դահլիճում բացւում է հացի շքեղ սեղանը: Թէպէտ սովորութիւն էր, որ պարսից և հայոց թագաւորները ինչոյքի ժամանակ մի թախտի բազմած հաց ուտէին, բայց այդ երեկոյ առաջ մեծամեծաների սուփրան են դցում, ապա Արշակ թագաւորինը: Սկսում է ինչոյքը: Իշխանները նստում են ամեն մէկը իր տեղը, իսկ Արշակ թագաւորին բոլորից ներքեւ են նըստեցնում: Նա նեղացած մի պահ նստում է, ապա ոտքի կանգնելով ասում Շապուհին: «Ի՞նձ է վայել այն տեղը, ուր դու ես բազմել, վեր կաց, թնդ ես նստեմ այդտեղ, որովհետեւ դա մեր արշակոնեաց ցեղի տեղն է»: Հենց այս էր հարկաւոր նենգաւոր Շապուհին: Նա այլ ևս չի թազցնում իր չար միտքը, հրամայում է կապել Արշակի ձեռքն ու ոտքը և շղթայակապ ուղարկում է նրան Անյուշ բերդը, որ բանտարկուած պահուի այնտեղ, մինչև որ այնտեղ էլ մեռնի: Այսպէս է խաբւում Արշակը իր կեղծ բարեկամից և ընկնում նրա թակարդը:

2.

Երկար տարիներ տանջւում-տառապում է Արշակը Անյուշ բերդում: Եւ ով միանգամ ընկնում էր այդ սոսկալի բանար, նա այլ ևս չէր տեսնում լոյս աշխարհը: Այդ իսկ ժամանակները պատերազմ է տեղի ունենում Քուշանների և պարսից մէջ: Շապուհը մեծ զօրք է հաւաքում թշնամուդէմ, տանում է կրուի դաշտը հայոց ամբողջ հեծելազօրքը, տանում է և Արշակի սիրելի իշխան Դրաստամատին, որ գտնուում էր Պարսկաստանում այն օրից, երբ Շապուհը բանտարկել էր հայոց թագաւորին: Ահաւոր էր և արիւնանեղ այդ կրիւը: Քուշանները հալածում են պարսից զօրքը, մեծ մասը կոտորում, շատերին գերի են վերցնում, իսկ մացածներին յետ քշում:

Եւ Դրաստամատը մեծ քաջութիւններ է գործում այդ

ահեղ կուռում: Նա առիւծի պէս էր յարձակուում, աջ ու ձախ հնձում իր հակառակորդներին: Նա մահուան ճանկերից է ազատում յուսահատուած Շապուհին և բերում-դնում նրա առաջ Քուշան քաջերի գլուխները: Իրանի հրպարա Տէրը հիանում է Դրաստամատի քաջութեան վրայ, շնորհակալութիւն է յայտնում նրան բոլոր զօրքի առաջ և ասում: «Խնդրիք ինձանից, ինչ որ կամենաս, և ի՞նչ էլ խնդրես, կրտամ քեզ»:

Եւ Դրաստամատը պատասխանում է: «Ես միայն մի բան կ'ուզէի, արքայ: Թնդլ տուր գնամ Անյուշ բերդը, տեսնեմ իմ թագաւոր Արշակին. Թնդ ազատեմ նրան կապանքից, լուանամ և օծեմ նրա գլուխը, պատմուճան հաղցնեմ, արքայավայել կերակրեմ, ուրախացնեմ նրա սիրտը երգ ու երաժշտութեամբ, և միայն մի օրով»: Եւ Շապուհը խոժուում է դէմքը, մի պահ լոռում, ապա խստօրէն ասում: «Ծանը է քո խնդիրքը: Քանի կայ պարսից թագաւորութիւնը, այն բերդը, ուր բանտարկուած է քո տէրը, կոչում է Անյուշ: Եւ չի գտնուել մինչեւ այժմ մի մարդ, որ համարձակուէր յիշեցնել արքային այդ բերդի կալանաւորի մասին: Եւ յիշեցնողը, մեր օրէնքով, պէտք է մահուան պատիժ կրի: Բայց ես ներում եմ յանցանքի: Ես կամենում եմ խօսքիս տէրը լինել: Դու մեծ աշխատանք ունես իմ վրայ: Թնդ տրուի քեզ այն, ինչ որ խընդրում ես. գնա թագաւորիդ տեսութեան: Իսկ ես կարծում էի, թէ քո օգուտը կ'ուզես, մի դաւառ կամ գանձու պատիւ կը խնդրես»:

Եւ երջանիկ է Դրաստամատը: Նա արքայի թուղթը ձեռին, թիկնապահի ուղեցութեամբ գնում է Անյուշ բերդը: Եւ տեսնում է նա իր բնիկ տիրոջը, արձակում է նրան երկաթէ շղթայից, լողացնում-մաքրում, հազցնում ազնիւ պատմուճան, արքայական ընթրիք պատրաստում և միիթարում-ուրախացնում նրան երաժիշտների երգ ու խաղով: Եւ մատուցանում է նրան համեղ խորտիկներ, միրդ ու զինի, վարունգ ու կանաչի, գնում է

նրա առաջ դանակ, որ կտրի և ուսի, ինչպէս կամենայ: Իսկ ինքը խոնարհ կանգնում է իր դժբաղդ տիրոջ առաջ: Եւ Արշակ թագաւորը, հացն ու գինին վայելելուց յետոյ, յիշում է իր անցած փառքն ու պատիւր, յիշում է իր գան ու երկիրը, և խիստ վշտանում: Ապա յանկարծակի ոտքի է ենում և «Վայ ինձ թագաւորիս, ի՞նչ էի առաջ, ի՞նչ եմ այժմ» ասելով՝ խրում է գանակը իր սրտի մէջ: Եւ բազմաչարչար թագաւորն իսկոյն աւանդում է հոգին:

Իսկ նրա հաւատարիմ իշխանը, նրա գանձերի աւագ վերակացուն, չի դիմանում այս դժբախտութեան: Նա մօտ է վազում կայծակի արագութեամբ իր արիւնաշաղախ տիրոջը, հանում է նրա կրծքից մահաբեր գանակը և նոյն գանակով վերջ դնում իր կեանքին...

63.

ՀԱՅՈՅ ՏԱՐԵՐԻ ԳԻՒՏԸ

1.

Հայաստանում առաջին դպրոցները հիմնեց Գրիգոր Լուսաւորիչը: Բայց այդ դպրոցները խորթ էին հայ մանուկներին. չկային մայրենի տառեր, չկային հայերէն գրքեր: Եկեղեցին էլ հարազատ չէր հայ ժողովրդին. նա չէր հասկանում ժամերգութիւնը, որ կատարւում էր օտար լեզուվ: Ս. Գիրքը և եկեղեցական կանոնները զրուած էին յունարէն կամ ասորերէն.

Պէտք էր եկեղեցին ու դպրոցը հայացնել: Եւ այս մեծ կարիքի մասին առաջինը հոգս քաշեց Մեսրոպ Մաշտոցը, որ Տարօն գաւառի Հացիկ գիւղիցն էր: Նա ուսեալ վարդապետ էր, գիտէր յունարէն, ասորերէն և պարսկերէն: Նա յաւում էր, որ հայերն անկիրթ են, չեն ուսանում մայ-

րենի լեզուով. յաւում էր, որ նրանք աւելի կոապաշտ են, քան քրիստոնեայ, թէպէտ վաղուց էին ընդունել քրիստոնէութիւնը: Եւ նա հաւաքում է իր շուրջը բազմաթիւ աշակերտներ, աշխատում է նրանց օգնութեամբ լուսաւորել հայրենակիցներին: Ծանր էր նրա աշխատանքը: Նա ստիպուած էր ո. Գրքից կարդացածը հայերէն թարգմանել ժողովրդի համար: Երկար այսպէս գործելով՝ նա համոզուեց, որ առանց մայրենի տառերի դժուար է ուսուցանել մանուկներին, դժուար է ճշմարիտ քրիստոնեայ դարձնել հայերին:

2.

Այս միտքը տանջում էր և հայոց կաթողիկոսին, մեծն Սահակ Պարթևին: Խորհրդակցելով Մեսրոպի հետ՝ նա հոգուրականների ժողով է գումարում Վաղարշապատում, որ մանուկներին հայ լեզուով կրթելու հնարքը գտնեն: Թագաւոր Վռամշապուհն էլ մտածելիս է լինում այդ բանի մասին. նա յայտնում է ժողովում, որ Ասորիքում եղած ժամանակ լսել է, թէ մի ասորի եպիսկոպոս հնարել է հայոց տառերը: Սահակ կաթողիկոսը դեսպան է ուղարկում եպիսկոպոսի մօտ և բերել տալիս այդ տառերը: Մեսրոպը փորձում է գործադրել նրանց, դասաւորում է յունաց այբուբենի կարգով, մի քանի տարի ուսուցանում է աշակերտներին, բայց նրա փորձը անօգուտ է լինում: Ասորի եպիսկոպոսի տառերը բաւական չէին հայ լեզուի բոլոր հնչիւններն արտասանելու համար. պակաս էին եօթը ձայնաւոր և եօթը բաղաձայն տառեր: Բայց ազգաւէր Մեսրոպը չի վիատում: Նա գիշեր-ցերեկ մտածում է իր գիւտի մասին, ուսումնասիրում է հայոց լեզուի հնչիւնները, շատ աշխատանք է թափում և, յաղթելով բոլոր դժուարութիւններին՝ հնարում է մեր նշանագրերը (406թ.): Եւ այս մեծ գիւտից յետոյ ո. Սահակը և ո. Մեսրոպը բացում են դպրոցներ, թարգմանում են ո. Գիրքը օտար լեզուներից հայերէն: Հեշտանում է ուսման դորձը

աշակերաների համար. այժմ նրանք ուսանում են մայրենի լեզուվ, զրում են մայրենի տառերով։ Ժողովուրդն է, եկեղեցի գնալով՝ արդէն հասկանում է ժամերգութիւնը և մխիթարուած վերադառնում տուն։ Կամաց-կամաց լուսաւորութիւնը տարածում է Հայաստանում և քրիստոնէութիւնը հաստատում հայերի մէջ։ Սահակ-Մեսոպոտեման գալոցներումն են ստացել իրանց սկզբնական ուսումը մեր պանծալի գրողները՝ Եղիշէն, Մովսէս Խորենացին, Եղիշէլը, որոնք գրեցին հայոց ազգի պատմութիւնը և մշակեցին-ծաղկեցը ին մեր լեզուն։ Եւ Մեսրոպ Մաշտոցը դարձաւ մեր ազգի ամենամեծ ուսուցիչը։

Կ. Կուտիկեան

ՕՇԱԿԱՆ ԳԻՒՂԾ

Անողորմ է յուլիսեան արեգակն Արարատեան գաշտում։ Շուրջը ամեն ինչ այրում է։ Քրտնաթաթախ, մոծակներից ու մեղուներից խոցոտուած՝ ես ու ընկերս վաղ առաւոտեան կառք ենք նստում Վաղարշապատ գիւղում։ Մենք գնում ենք ս. Մեսրոպի գերեզմանը տեսնելու, գնում ենք միշտ երեսներս դէպի հիւսիս։ Իսկ հիւսիսի ամենաբարձր կէտից, կապոյտ ու ժապուն երկնքի միջից, մեզ նայում է գեղեցիկ Արագածը։ Մեր ճանապարհը նոր է շինուած, խճուղի է։ Նա ողորւում է բլուրների լանջերով, երկար շրջաններ է տալիս։ Այդպէս չէ հին ժամանակների ճանապարհը. նա նեղ է, ծուռ ու մուռ կտրում-անցնում է ուղիղ և համարձակ, կամ սողում է դէպի բարձր, կամ գլխիվայր ցած է վազում։

Օդը մեղմացել է և զուգութիւն է տարածում։ Մենք սկսում ենք ազատ շունչ քաշել։ Ահա և հոչակաւոր, անմահացած գիւղը։ Մենք բարձրացել ենք մեծ բլուրի գը-

լուխը։ Որքան մեծ ու խոր ձոր է իր համար փողել Քասաղ գետը։ Այգիների մի երկար տեսարան է բացւում։ Դեղեցիկ է Օշականը։ Հին կամուրջի տակով, քարէքար ընկած՝ վազում են Քասաղի պարզ ջրերը։ Կամուրջի միւս կողմը գիւղն է, որ վերևից գալիս է սեղմւում ձորի բաշին, կախ ընկնում նրա լանջերով։ Օշականը գեղեցիկ ըըրջակայք ունի. նա հարուստ է իր այգիներով, բայց և այնպէս, մեր այժմեան սովորական գիւղերից մէկն է իր փոքրիկ տներով, կեղտոտ փողոցներով։ Սակայն ուխտաւոր այցելուին հիացնում է այս հասարակ գիւղի երկարամեայ գոյութիւնը։ Ո՞ր ժամանակներից է նա մաքուր պահել իր անունը։ Հոչակաւոր մայրաքաղաքներ են Եղել, որոնք այժմ մոխրի կոյտեր են. իսկ այս խղճուկ գիւղը հաստատ է մնացել իր ձորի ծայրին, ապրել է և ապրում է։

Մտնելով Օշական, ուր կարելի է ուղել քայլերը, եթէ ոչ դէպի եկեղեցին։ Մեր ժամանակների մի շինութիւն է դա՝ բարձր զանգակատնով, մաքուր և վայելուչ տեսքով։ Աջ կողմի խորանում մի գուռ է բացւում. մի քանի աստիճան ցած էք գնում և ձեր առջև, քարէ կամարների մթութեան մէջ, սպիտակին է տալիս մի ցածրիկ, տափակ ու անզարդ քար։ Ահա ս. Մեսրոպի գերեզմանաքարը...

Եկեղեցին մտնելիս՝ գուք ուշադրութիւն էք դարձրել բակի ծայրում բարձրացած քարէ գեղեցիկ, քառակուսի մի արձանի վրայ։ Այժմ ս. Մեսրոպի գերեզմանից հեռանալիս՝ այցելեցէք այդ արձանը։ Նա հին չէ, շինուած է մեր օրերում։ Նրան կանգնեցրել են ՚ի յիշատակ Վահան Ամատունու, որ Մեսրոպի աշակերտներից էր, հայոց աշխաշի հազարապետ էր կարգուած և հօր պէս էր կառավարում երկիրը։ Բայց Օշականի իշխան Վահան Ամատունին դրանից էլ աւելի աչքի ընկնող գործեր ունի։ Նա Աւարայր գաշտի հերոսներից մինն է, Վարդանի, Վասնդ երէցի ընկերակիցը։ Աւարայրի պատերազմում Ամատունիաց գնդի հրամանատարն էր. պատերազմում անփսաս մնաց, բայց պատերազմից յետոյ միւս նախարարների հետ

Պարսկաստան քշուեց, ուր երկար տարիներ գերութեան մէջ էր գանւում ։ Սակայն վահան իշխանի զիլաւոր երախտիքը այդ չէ։ Նա թաղեց Մհերոպին իր Օշականում։ Մեծ ուսուցչի համար այդ էլ քիչ համարեց և նրա գերեզմանի վրայ եկեղեցի կանգնեց, որի ցածրիկ, ստորերկրեայ խորշում մօտ 1500 տարի է, ինչ պահուում է այդ գերեզմանը։ Ուսուցիչն ու աշակերտը միասին եւ աշակերտը այժմ էլ իր անկիւնից կարծես հիացմունքով է նայում այն պատերին, որոնց ետևում ծածկուած է ուսուցիչը...

զազուն առ ք սցցամիւնեան դԱ պահպառույր լամաւ
զիր մէ զմացրագաղակ զատացու պահում ով յօւպը¹⁴⁰
շաբք թածրոյ առ իսչ մէ զմուրդ պահուն ներս քայլ
է նույն և ք բնար սպառութ զոհ ով յօւպամ է ուստամէ

65

ՎԱՐԴԱՆԱՆՑ ՊԱՏԵՐԱԶՄԸ մինչ պահանջված է առաջ կատարել 1.

Հայոց Վուամշապուհ թագաւորի մահից յետոյ պարսից
թագաւորներն աշխատում էին Հայաստանը բոլորովին ձու-
լել իրանց տէրութեան հետ։ Բայց այդ նպատակին դժուար
էր հանել, քանի որ հայերը քրիստոնեայ էին, իսկ պար-
սիկները՝ կրակապաշտ։ Հայերը, իբրև քրիստոնեաներ, ի-
րանց աւելի մօտ էին զգում յոյներին, որոնց ձեռքումն
էր Հայաստանի արևմտեան մասը։ Բայց յոյներն էլ թըշ-
նամացել էին հայերի հետ այն օրից, երբ Մեսրոպի, Սա-
հակի և նրանց աշակերտների ջանքերով հայոց եկեղեցի-
ներում և գլքոցներում յունաց լեզուի փոխարէն սկսել
էր հնչել հայ լեզուն։

180

ցնէ Արտաշէսին և Նրա տեղ Հայաստանում պարսիկ կուսակալ նշանակէ: Իգուր էր Սահակ կաթողիկոսն աշխատում, համոզում հայոց նախարարներին, որ համբերեն և այդպիսի ազգամիաս քայլ չանեն:

Հայոց իշխաններն, երբ տեսան, որ Սահմակը չէ ուզում
միաբանել իրանց հետ, դիմեցին պարսից թագաւորին և
զրպարտեցին թէ Արտաշէսին և թէ Սահմակին, ասելով թէ
այդ երկուառ միացել են յոյներին։ Պարսից թագաւորն էլ
հէնց մի այդպիսի քանի էր ապամուժ։ Նա օգտուեց հայոց
մեծամեծների չարախօսութիւններից; կամչեց իր մօտ հա-
յոց թագաւորին ու կաթողիկոսին և ըանտարկեց նրանց։

2

Վոամի մահից յետոյ պարսից թագաւոր եղաւ նրա որդի Յաղկերտը։ Սա վճռեց հաւատափոխ անել հայերին և այդպիսով Հայաստանը բոլորովին ձուլել Պարսկաստանի հետ։ Յաւալին այն էր, որ հայ նախարարների մէջ զըտնուեցին փառասէրներ, որոնք ծածուկ օգնում էին Յաղկերտին։ Այդպիսի նախարարներից էր և Միւնեաց աշխարհի հզօր իշխան Վասակը։

Յագկերաը Վասակին Հայաստանի կուսակալ կարգեց և հրովարտակ հանեց, որ իր իշխանութեան տակ եղած բոլոր քրիստոնեաները, այսինքն՝ հայերը, վրացիք և աղուանները թողնեն իրանց հաւատը և երկրպագենն արեգակին ու պաշտեն կրակին:

Այդ ժամանակ հայոց կաթողիկոսն էր Մեսրոպի և Սահակի աշակերտ Յովսէփը։ Նա Արտաշատ քաղաքում հայ աշխարհական և հոգևորական մեծամեծներից մի ժողով կազմեց։ Այդ ժողովում կարդացուեց Յազկերտի առաջարկութիւնը և գրուեց մի համարձակ պատասխան, որ վերջանում էր հետևեալ խօսքերով։ «Մեր հաւատից մեզ ոչ ոք չէ կարող հանել, ոչ մարդիկ, ոչ հուր, ոչ սուր»։

—и то, что вспомнил, и то, что не вспомнил, и то, что

Յարականութեան բառեց ու երկար տարբանի պիրանքան
և առաջանական 3.

Յազկերտն, ստանալով հայերի պատասխանը՝ շատ բար-
կացաւ և հրամայեց հայ նախարարներին՝ գալ պարսից
Դուռը: Նա կանչեց և հայոց զօրքի սպարապետ Վարդան
Մամիկոնեանին, ինչպէս և իր կուսակալ Վասակին: Երբոր
նախարարներն հասան Յազկերտի մօտ՝ այս վերջինը հրա-
մայեց նրանց բոլորին էլ բանտարկել, որովհետև պարսից
թագաւորը պահանջում էր, որ հայոց նախարարներն ու-
ղանան իրանց հաւատը, իսկ նրանք չեին համաձայնում:
Յազկերտը յայտնեց նախարարներին, որ եթէ նրանք չը-
կատարեն իր կամքը, ինքը Հայաստան կուղարկէ մի մեծ
զօրք և բնաջինջ կանի բոլոր հայերին:

Նախարարները խորհուրդ արին և վճռեցին երեսանց ըն-
դունել կրակապաշտութիւն, որպէսզի իրաւունք ստանան
վերադառնալ հայրենիք և պաշտպանել հայ երկիրը Յազ-
կերտի զօրքերի աւերռումներից:

Երբ Յազկերտը լսեց, որ նախարարները պատրաստ են
ուրանալ իրանց հաւատը, սաստիկ ուրախացաւ և վար-
ձատրելով նրանց՝ յետ ուղարկեց Հայաստան, հետները
դնելով մոգերի մի մեծ խումբ և պարսից զօրք: Յազկերտը
հրաման էր տուել մոգերին և իր զօրքին՝ փակել բոլոր
եկեղեցիները Հայաստանում և նրանց փոխարէն կրակա-
րաններ հիմնել:

Հայ ժողովուրդը, երբ լսեց նախարարների ուրացման
գոյժը և մոգերի ու պարսից զօրքի գալը՝ ոտքի կանզնեց
ու պատրաստուեց գէնքով պաշտպանել իր հաւատը: Մո-
գերի հէնց առաջին փորձը՝ կործանել եկեղեցին, ցոյց
տուեց՝ թէ նրգան դժուար էր հայերին բռնութեամբ հա-
ւատափոխ անելլ: Երբ մի գիւղում մոգերն ուզում էին
փակել եկեղեցին, երէց Ղետով ժողովրդի հետ յարձա-
կուեց պարսիկների վրայ և ջարդելով՝ յետ քշեց նրանց իր
սրբավայրից:

Իսկ նախարարներն Հայաստան հասնելուն պէս՝ բա-

ցարձակ յայտնեցին, որ չեն ուրացել իրանց հաւատը:
Վարդան Մամիկոնեանն իսկոյն նախարարների ժողով գու-
մարեց, ուր ամենքը Աւետարանի վրայ երդուեցին՝ մինչեւ
արեան վերջին կաթիլը պաշտպանել ազգային եկեղեցին:
Ոգեսրութիւնն այնքան մեծ էր, որ նոյն իսկ Վասակը
ստիպուած էր միանալ նախարարներին և երդուել Աւե-
տարանի վրայ, որ հաւատարիմ կը մնայ քրիստոնէական
հաւատին:

Այսպէս ահա հասարակ հայ ժողովուրդը, իշխանները և
հոգևորականները մի սիրտ ու մի հոգի գառած՝ թոյլ չը-
տուին քանդել իրանց եկեղեցիները, աւերել իրանց եր-
կիրը և թէ մոգերին, թէ պարսից զօրքը քշեցին Հայա-
տանից:

4.

451 թուականի Զատկի տօները նոր էին անցել, երբ
լուր հասաւ, որ պարսից ահազին զօրքն արդէն հասել է
Ուրմիա լճի արևմտեան ափը, չեր և Զարկեանդ գաւառը:

Վարդանն իսկոյն հաւատէր կարդաց բոլոր հայոց իշխան-
ներին՝ իրանց զօրքերով գալ հաւաքուել Արտաշատ քաղա-
քում: Միաժամանակ, պարսից բանակի գիրքը և թիւը
լրտեսելու նպատակով, նա առաջ ուղարկեց Առանձար
Ամատունի իշխանին 300 կտրիճ հեծեալներով:

Հայոց իշխանները շտապեցին իրանց զօրքերով Արտա-
շատ, ուր ժողովուեց 66 հազար զօրք: Առանձարը տեղե-
կութիւն բերաւ, որ պարսիկները դիմում են Արտազ զա-
ւառը: Վարդանը անցնելով 66 հազար զինուած հայերի
զլուխը՝ դիմեց թշնամու բանակի զէմ: Հայոց զօրքը հաս-
նելով Տղմուտ գետի ափին գտնուող Աւարայր գիւղը՝
այդտեղ բանակ հաստատեց, գետի միւս ափում տեղա-
որուած պարսից զօրքի հանդէպ, Յովսէփ կաթողիկոսը,
Ղետով երէցը և մի քանի այլ քահանաներ հայոց զօրքի
մէջ էին և քաջալերում էին հայ զինուորներին:

Միւս օրը, յունիսի 2-ին, լուսադէմին, հայոց բանակից

արդէն երեսւմ էր, թէ ինչպէս զօրապետ Մուշկանը առաջ էր բերում պատերազմիկ փղերը, որոնց ամեն մէկի մէջ-քին մի-մի մարտկոց էր գրուած, լի սպառազինուած մարտ-կանցով։ Այդ վիթխարի գաղաններից իւրաքանչիւրի եր-կու կողմից Մուշկանը կանգնեցրել էր երեք հազար զին-ուոր։

Վարդանն ազօթելով զօրքի հետ՝ ինքն էլ պատրաստուեց ճակատամարտի համար։ Նա բաժանեց հայոց զօրքը չորս գնդի։ Առաջին գունդը յանձնեց Ներշապուհ, Արծրունուն, երկրորդը՝ Խորէն Խորխոսունուն, երրորդը՝ Թաթուլ Վա-նանդեցուն, իսկ չորրորդը՝ պահեց իրան, օգնական ունե-նալով Արշաւիր Կամարականին և Համազասպ Մամիկո-նեանին, որ իր կրտսեր եղբայրն էր։

Ճակատամարտն սկսուեց նետաձգութեամբ գեափի երկու կողմերից։ Հայերն անցնելով Տղմուտ գետը՝ քաջութեամբ յարձակուեցին պարսից վրայ։ Քաջ Վարդանը կոտրեց պարսիկների ամենաուժեղ թեր։ Արիւնահեղ պատերազմը տևեց ամբողջ օր։ Երբ Վարդանը վիրաւորուած ընկաւ իր քաջ ընկերների հետ՝ հայոց զօրքը, անառաջնորդ մնալով, ցըռւեց, պատերազմի դաշտի վրայ թողնելով 1036 հոդի, մինչդեռ պարսից կողմից ընկել էին 3544 հոդի։

5.

Աւարայրի կոռուից յետոյ հայերը ցըռւեցին և ամրացան Հայաստանի զանազան բերդերում ու լեռների անմատչելի տեղերում և գեռ երկար ժամանակ շարունակում էին կոռւել պարսիկների գէմ։

Յազկերատը, տեսնելով, որ չէ կարողանում կոտրել հա-յերի կամակորութիւնը՝ հրամայեց Մուշկանին դադարեց-նել պատերազմական գործողութիւնները հայոց երկրում։ Վասակին պատուիրեց գալ իր մօտ, իսկ նրա փոխարէն՝ պարսիկ կուսակալ կարգեց։ Յազկերատը իր մօտ կանչեց և կենդանի մնացած նախարարներին, մեծամեծ խոսքումներ տալով նրանց։ մինչդեռ Յովսէփի կաթողիկոսին, Ղւոնդ ե-

րէցին և մի քանի այլ հոգեորականներին հրամայեց կա-լանաւորել և ջորիների վրայ կապած ուղարկել Պարսկա-ստան։ Երբ նախարարներն հասան պարսից Դուռը՝ Յազ-կերատը, հակառակ իր երդման, բանտարկեց նրանց բոլո-րին, իսկ կաթողիկոսին, Ղւոնդ երէցին և միւս հոգեորա-կաններին սաստիկ տաջանքների ենթարկելով՝ սպանել տուեց։

Լ. Սարգսեան

ԱՐԱՔՍԻ ԱՐՏԱՍՈՒՆՔԸ

Մայր Արաքսի ափերով
Քայլամոլոր գընում եմ,
Հին-հին դարուց յիշատակ
Ալեաց մէջը պըտրում եմ։

Բայց նոքա միշտ յեղյեղուկ,
Պըղտոր ջըրով եղերքին
Դարիւ դարիւ խըփելով
Փախչում էին լալագին։

Արաքս, ինչու ձըկանց հետ
Պար չես բոնում մանկական,
Դու դեռ ծովը չըհասած՝
Սըդաւոր ես ինձ նըման։

Ինչու արցունք ցայտում են
Քո սէգ, հըպարտ աչերից,
Ինչու արագ փախչում ես
Այդ հարազատ ափերից։

Մի պըղտորիլ յատակըդ,
Հանդարտ հոսէ խայտալով,
Մանկութիւնը քո կարձ է,
Շուտ կը հասնիս դէպի ծով:

Վարդի թըլիկեր թող բըմնին
Քո հիւրընկալ ափի մօտ,
Սոխակները նոցա մէջ
Երգեն մինչև առաւօտ:

Մըշտագալար ուռիներ
Սառ ծոցի մէջ քո ջըրին
Ճըկուն ոստըն ու տերե
Թող թաց անեն տապ օրին:

Ափերիդ մօտ երգելու
Հովիւք թող գան համարձակ,
Գառն ու ուլը քո վճիտ
Զուրը մըտնեն միշտ արձակ:

Մէջքը ուռցուց Արաքսը,
Փըրփուր հանեց իր տակից,
Ամպի նըման գոռալով
Եսպէս խօսեց յատակից.

«Խիզախ, անմիտ պատանի,
«Նիրհըս ինչու դարեռը
«Վըրդովում ես, նորոգում
«Իմ ցաւերը բիւրաւոր:

«Սիրելիի մահից յետ,
«Ե՞րբ ես տեսել, որ այրին
«Ոտքից գըլուխ պըճընուի
«Իր գարդերով թանկագին:

«Որի համար զարդարուիմ,
«Որի աչքը հրապուրեմ,—
«Շատերն ինձ են ատելի,
«Շատերին ես օտար եմ...

«Կար ժամանակ, որ ես էլ,
«Շքեղազարդ հարսի պէս,
«Հազար ու բիւր պըշրանքով
«Փախչում էի ափերէս:

«Յատակըս պարզ ու վճիտ,
«Կոհակներըս ոլորուն,
«Լուսաբերն էլ մինչև այդ
«Զըրիս միջին էր լողում:

«Մինչ իմ որդիք, — ով գիտէ —
«Ծարաւ, նօթի, անտէրունչ
«Օտար աշխարհ յածում են
«Թոյլ ոտքերով կիսաշունչ...

«Քանի որ իմ զաւակունք
«Այսպէս կըմընան պանդուխտ՝
«Ինձ միշտ սրգուոր կը տեսնէք —
«Այս է անխար իմ սուրբ ուխտ»:

էլ չի խօսեց Արաքսը,
Յորձանք տուեց ահագին,
Օղակ-օղակ օձի պէս,
Առաջ սողաց մոլեգին:

Ո. Պատկանեան



... և կայությար դաւաշ Ազգի
- և կայությագը ցան Ազգի
պահան ուն հետ մղմանն
... և դասու ուն մղմանն

Ամ ամ զո ժամանեակ դաւթէ
ամի զայտ քպարաբեց
խոգևառութեան ու զարան
օրսչղճաւ գլ եւ առջափա

и възглѣдъ на рѣшитъ тѣхъ възглѣдъ
и възглѣдъ тѣхъ възглѣдъ
рѣшитъ тѣхъ възглѣдъ тѣхъ
възглѣдъ тѣхъ тѣхъ възглѣдъ

ՀԱՅՈՒԹՈՒՑ ԲԱՐԱՑՈՒԿՑՈՒԿ

ՀԱՄԱՌՈՑ ԲԱԼԱՅԻՑԱԿ

ՀԱՄԱՌՈՑԳՐԱԹԻՒՆԵՐ

գ.՝ գոյական, ած.՝ ածական, բ.՝ բայ, մ.՝ մակբայ,
շ.՝ շաղկապ, ձ.՝ ձայնարկութիւններ

Ա, ա.

Աբուռ. գ. ամօթ, պատիւ
Ագի. գ. պոչ
Ազի. գ. մայր, նանի
Ազիդ. ած. թանկագին, սիրելի
Ահոելի. ած. վախ բերող, սար-
սափելի
Աղտեղանք. գ. աղբ ու կեղա
Աման. ձ. վայ, աւազ
Ամեհի. ած. կատաղի, ան-
զուսպ, անսանձ
Ամոքել. բ. թեթևացնել
Այլանդակ. ած. անճոռնի, շատ
տոգեղ
Այտ. գ. երես, թուշ
Անբան. ած. անկեզու, անմիտ
Անդունդ. գ. մեծ ու խոր
փոս, խորք, վիճ
Աներկբայ. ած. անկասկած
Անհոն. ած. անձայր, անչափ
Անշէջ. ած. չհանգչող
Անողոք. ած. խիստ, անողործ
Ապստամբել. բ. սոքի ելնել
զէնք բարձրացնել
Աջուջ-մաջուջ. գ. թղուկ

Առօք-փառօք. մ. հանդիսա-
ւոր, պատուով
Արշաւանք. գ. յարձակում,
վրայ վազելը
Արտաքսել. բ. դուրս անել,
բշել
Աքսորական. գ. երկրից ըլ-
շուած, տարագրուած

Բ, Բ.

Բանական. ած. ասուն, խո-
սուն, միտք ու խօսք ու-
նեցող
Բաշ. գ. կտուրի եղերքը, պա-
տի վերին ծայրը, ծիու պա-
րանոցի մազը
Բերրի. ած. լաւ բերք տուող,
արդաւանդ
Բուրմունք. գ. հոտ
Բուրջ. գ. բուրգ, աշտարակ
Բջիջ. գ. խորիսխի ծակ
Բրտանալ. բ. կոպտանալ
Բօլ-բօլ. մ. առատ-առատ

Գ, դ.

Գայթակղիչ. ած. փորձանք
բերող, սխալեցնող
Գեղեղել. բ. անուշ երգել
Գիշատիչ. ած. ծուատող, պա-
տառատող
Գիշակեր. ած. հում միս ու-
տող (ծուատելով)
Գիսակ. գ. երկար մազեր, ժամ
Գոհար. գ. թանկագին քար,
ջուհար
Գոյժ. գ. ախուր լուր
Գուհիկ. ած. անտաշ, կոպիտ,
բռի
Գրող. գ. նա, որ գրում է,
հեղինակ. չար ողի (սա-
տանայ)

Դ, դ.

Դաւադիր. գ. թակարդ սար-
քող, փորձանք հնարող
Դերձան. գ. պինդ ու բարակ
թել
Դիւանբաշի. գ. դատաստանի
գլխաւորը
Դիւցազն. գ. աստուածների
ցեղից, քաջ, հերոս
Դրկից. գ. դրացի, հարևան

Ե, ե.

Եարաբ. շ. արդեօք
Եկամուտ. գ. կայքից, փողից
ստացած, արդիւնքը, հա-
սոյթ
Ենթարկուել. բ. տակը ընկնել
(խօսքի, մաքի, վասանգի)
Երանութիւն. գ. երջանկու-
թիւն

Երերցնել. բ. շարժել

Զ, զ.

Զաղրելի. ած. զղուելի, դար-
շելի
Զմայել. բ. հոգով կշանալ,
հիանալ
Զուլալ. ած. պարզ, մաքուր,
փերա
Զրպարտել. բ. զուր բան հնա-
րել, չարախօսել
Զօլ-զօլ. ած. շերտ-շերտ, շեր-
տաւոր

Է, է.

Էրէ. գ. վայրի, որսի կենդանի

Ը, ը.

Ընթանալ. բ. դնալ, հոսել
Ընկոմել. բ. աակը ընկնել (ջրի
և այլն), խրուել
Ընկնել. բ. ճնշել, խոնարհեցնել

Թ, թ.

Թայ-թուշ. գ. ընկեր, հասա-
կակից, գործակից

Թառակ. գ. այգիների շարք-
թաղ
Թառալել. բ. գլորել
Թառիշ. գ. մախմուր
Թառուտ. գ. խիտ անտառ

Ժ, ժ.

Ժանեղ. ած. խոշոր ատամ-
ներով

Ժանտ. ած. խիստ, չար, դա-
ժան

Լ, լ.

Լալ. գ. աղնիւ քար
Լուլայ. գ. բարակ խողովա-
կածե սառոյց

Խ, խ.

Խարբիկ. գ. լուր
Խաթուն. գ. տիկին, խանում
Խաթը. գ. պատիւ, յարգանք
Խամ. ած. անփորձ
Խայծ-խայծ (կարմրել). տեղ-
տեղ (կարմրել)
Խարխուլ. ած. հին, մաշուած,
քանդուած
Խնամակալութիւն. գ. հոգս
քաշելը, խնամք տանելը,
խնամատարութիւն
Խնջոյք. գ. կերուխում
Խորիսիս. գ. մոմով մեղք
Խորիստ. ած. հաղարտ

Ծ, ծ.

Ծաւալել. բ. տարածել
Ծլկուիլ. բ. ծածուկ փախչել,
պոկ տալ
Ծլունդ լինել. բ. վեր թաչել
Ծմակ. գ. հով տեղ լեռներում
Ծորել. բ. ծոր տալ, ջրի պէս
վացել

Կ, կ.

Կանիիկ (զրամ). ած. նազր
Կարեկիցութիւն. գ. յաւակ-
ցութիւն

Կարկամել. բ. քար կտրել
անշարժ մնալ, կծկուել
Կարտառ. ած. զուարթ, ժիր
կերպաս. գ. մետաքս, աբրե-
շում

Կթոսուել. բ. հալից, ոյժից
ընկնել

Կորնթարդ. գ. կամար, գմբէ-
թածե

Կոկիծ. գ. սիրով այլող ցաւ,
վիշտ

Կրպակ. գ. խանութ, դուքան

Հ, հ.

Հալալ. ած. աղնիւ, արդար,
հարազատ

Հալալ է(քեզ). բ. բարով վա-
յելես, անուշ լինի

Հանդէս. գ. տօնախմբութիւն,
ժողով

Հանդիսական. գ. հանդէսը
տեսնող, հանդիսում եղող

Հանհարեղ. ած. հազուազիւտ
շնորհը ունեցող

Հլու. ած. հնազանդ, խոնարի

Հուժկու. ած. ուժեղ, զօրեղ

Հրապուրել. բ. խելքից հանել,
գրաւել

Հրմշակել. բ. հրել, խթել, բո-
թել

Հրովարտակ. գ. հրամանագիր

Զ, ձ.

Զուլել. բ. միացնել

Ղ, ղ.

Ղալամ. գ. փետրէ զրիչ

Ղարիբ. գ. պանդուխա, օտարական
Հուրբան. գ. մատաղ, զոհ
ձ, ճ.

Ճարպիկութիւն. գ. վարպետութիւն, հնարողութիւն
Ճաճանչաւոր. ած. փայլիլուն
Ճիտ. գ. վիզ
Ճուռ. գ. ոտքի մասը (աղլրից
մինչև ծունկը)

Մ, մ,

Մականուն. գ. աւելորդ անուն
Մանչ. գ. տղայ, զաւակ
Մառախուղ. գ. մշուշ, մըթնաւուն ամպ
Մարմանդ. ած. մեղմ, խաղաղ, հանգարա
Մարտկոց. գ. կոռուի աշտարակ
Մենամարտել. բ. մէկընդմէկ կռուել, կոխ մտնել
Մինարե (թ). գ. մզկիթի աշտարակ
Մկտալի. ած. կսկծալի, վրշտալի, մորմոքելի
Մոդ. գ. կրակապաշտութեան սպասաւոր, կախարդ
Մոլեղին. ած. կատաղի
Մով. գ. կապտութիւն, կապուտ գոյն
Մորմօք. գ. մզմզուք, խշոր-շուք, կսկիծ
Մուլք. գ. կայք, դոյք, սեփականութիւն
Մուշ-մուշ. մ. հանգարատիկ

Մուրհակ. գ. պարտաթուղթ,
բարաթ
Մորիկ. գ. սաստիկ հողմ, փոթորիկ

Յ, յ.

Յագեցնել. բ. կշտայնել
Յածել. բ. թափառել
Յամառ. ած. իր ասածի, կամակոր
Յեղյեղուկ. ած. փոփոխական
Յորդ. ած. առատ
Յործանք. գ. ուժգին, փըրփրանք հոսանք

Ն, ն.

Նենդաւոր. ած. խորամանկ, խարդախ
Նեռ. ած. չար, սուտ Քրիստոս
Նղղել. բ. քունը տանել, նիրհել
Նուագ. գ. երգ, եղանակ
Նուանել. բ. տէր դառնալ

Շ, շ.

Շաղակաթ. ած. յօղակաթ
Շառ. գ. մեղաղբանք, չարիք
Շիրիմ. գ. գերեղման
Շարմաղ. ած. բարակ, երես առած
Շքանք. գ. զարդարանք, պաճուճանք

Ո, ո.

Ողկոյզ. գ. խաղողի ճութ
Ողողել. բ. ջուր կոխել

Զ, չ.

Զարզաթ. գ. գլուխ աղլուխ
(շոր)
Զիվի տալ. բ. սեպ խիել, սեպով ճեղքել
Զօլ. գ. դաշտ, սար ու անտառ

Պ, պ.

Պանծալի. ած. պարծանքի արժանի
Պապակ. գ. սաստիկ ծարաւ
Պատկառելի. ած. յարգելի
Պատմուճան. գ. վերնազգեստ առանց թերերի
Պատսպարել. բ. թերի տակ առնել, պաշտպանել
Պարարտ. ած. գէր, չաղ, մսոտ
Պուտպուտուրիկ. ած. գոյնըգոյն, նախշուն
Պըրանք. գ. զարդարանք, պաճուճանք

Ա, ա.

Աէգ. ած. հպարտ, գոռող
Անանկ. ած. կոտր ընկած
Առկտաքեար. գ. փաճառական
Ատահակ. ած. անկարգ, երես առած
Աքանչելի. ած. հրաշալի

Վ, վ.

Վախտ. գ. ժամանակ
Վարազակերպ. ած. խոզակերպ
Վարաղ. գ. ոսկեփոշի, ոսկենուր

Վիհ. գ. խոր փոս, անդունդ
Վխտալ. բ. բազմութեան մէջ
Վէս-վէն ընկնել
Վհատել. բ. սիրտը կոտրուել,
յոյսը կորցնել
Վսեմ. ած. բարձր, ազնիւ,
փառաւոր
Վստահութիւն. գ. անվախութիւն, հաստատ յոյս ու
հաւատ

Տ, տ.

Տապ. գ. խիստ շոգ, տօթ
Տկղել. բ. տողել
Տուլաշ. գ. ագռաւի նման
թռչուն, ճարեկ
Տուտ. գ. ձայր

Ց, ց.

Ցնորամիտ. ած. խենդումենթ

Փ, փ.

Փարթամանալ. բ. հարստանալ, շքեղանալ
Փափաղ. գ. կարօտ, սաստիկ ցանկութիւն

Ք, ք.

Քջուջ-մջուջ անել. բ. ոտքերով աղը ու հող խառնել,
կերակուր որոնել
Քօլօզ. գ. կամարաձև բրդէ գդակ
Քօթակ. գ. ծեծ

Հայոց ու զամանակակից
բանութիւնը չուն
Քայլութեան ու պատմութեան

Digitized by srujanika@gmail.com

բռուր ,աղստիք .եմ .քէն
եաթիջ զայֆ .եմ .քանչն
ծախունակի .ք .պահպաշտին
ուզդ ,ըշալն .եմ .քանչն
եանս
Անշարք .եմ .քէնցաց Ա

- | | | |
|-----|---|-----|
| 1. | Ճնճղուկի խրատը, Ժողովրդական | 7. |
| 2. | Տաւարածի ճաշը, Ղ. Աղայեան | 7. |
| 3. | Կորիկ (Լ. Տօլստօյից) Ալ. Ծատուրեան | 8. |
| 4. | Ավորոն ու մարգարիտը, Աթ. Խնկոյեան | 9. |
| 5. | Բարեկամներն ու արջը, Խ. Աբովեան | 9. |
| 6. | Սերմացանի երգը, Րաֆֆի, Կրճատ. | 10. |
| 7. | Երկու խոփ | 10. |
| 8. | Երկու գիւղացի ընկերներ | 11. |
| 9. | Մուկն ու կատուն, Խ. Աբովեան, փոփոխ. | 12. |
| 10. | Էշն առիւծի մորթով, Եղոպոս | 13. |
| 11. | Ճանձ, Աթ. Խնկոյեան | 13. |
| 12. | Պապն ու թոռը, Գրիմ | 14. |
| 13. | Պոշտ աղուէսը, Աթ. Խնկոյեան | 15. |
| 14. | Զին ու եղը, Լեսակինգ | 16. |
| 15. | Մայրն ու երեխան (Ուլանդից) Ալ. Ծատուրեան | 16. |
| 16. | Թութակն ու սոխակը, Ղ. Աղայեան | 17. |
| 17. | Թուչնիկներ (փոխադր.) Ալ. Ծատուրեան | 18. |
| 18. | Կամակոր սայլապաններ (Լ. Տօլստօյից) Ղ. Աղայեան | 18. |
| 19. | Գիտուն որդին (Լ. Տօլստօյից) Ալ. Ծատուրեան | 19. |
| 20. | Արջն ու գայլը, Ղ. Աղայեան | 19. |
| 21. | Պարտիզանի կտակը | 20. |
| 22. | Ամրան անձրև (Մայկոնից) Ալ. Ծատուրեան | 21. |
| 23. | Գարուն, Պ. Պոչեան | 21. |
| 24. | Դաշտի վարդը (Գեօթէից) Յ. Յովչաննիսեան | 22. |
| 25. | Եղիայի հանաքը, Ղ. Աղայեան | 23. |

ՏԱԿԱՆ

ԱՐԱՋԻՆ ՄԱՍՆ

(ԵՐՐԱՐԴ ՏԱՐԻ)

26.	Գիւղացին ու ձին, Ղ. Աղայեան	24.
27.	Քար (Լ. Տօլստօյից) Ալ. Մատուրեան	24.
28.	Ագռաւն ու աղուէսը, Աթ. Խնկոյեան	25.
29.	Սողոմնի դատաստանը, Ա. Գիրք	27.
30.	Թագաւորն ու խրճիթը (Լ. Տօլստօյից) Ալ. Մատուրեան	28.
31.	Ագաչութեան հետեակը, Ա. Նազարեան	29.
32.	Հաց տուողը	30.
33.	Անձրեի կաթիլ (Հարտմանից) Ալ. Մատուրեան	31.
34.	Մայրիկիս, Աւ. Խսահակեան	31.
35.	Գառն ու գայլը (Կոկլովից) Ղ. Աղայեան	32.
36.	Էշն ու սոխակը (Կոկլովից) Ղ. Աղայեան	34.
37.	Մաղկազարդ, Ղ. Աղայեան	36.
38.	Թաթախման երեկը, Ծերուկ	38.
39.	Շունն ու կատուն, Յովչ. Թումանեան	39.
40.	Հին զրոյց, Ղ. Աղայեան	42.
41.	Զարի վերջը, Յովչ. Թումանեան	44.
42.	Գողացած ձին, Ա. Նազարեան	49.
43.	Կկու (Գելլէրատից) Ալ. Մատուրեան	50.
44.	Գառնիկ ախպէր, Յովչ. Թումանեան	51.
45.	Ոսկի ձկնիկ (Պուշկինից) Ղ. Աղայեան	57.
46.	Հանելուկներ ու առակաւոր խօսքը	67.

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍՆ

(ՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ)

1.	Իմաստուն ջուլհակը, Գ. Սրուանձտեան	71.
2.	Հատիկ, Յ. Յովչաննիսեան	73.
3.	Առիւծն ու մուկը, Ժողովրդական	74.
4.	Վեշանձնութիւն	75.
5.	Անգրագէտ (Սիրոկօմիից) Յ. Յովչաննիսեան, կրծատ.	76.
6.	Արծիւն ու մեղուն, Ղ. Աղայեան	77.
7.	Շողիկն ու Պէծիկը, Դ. Դեմիրճեան	78.
8.	Բարտին ու վազը, Խ. Աբովիան	80.
9.	Երկու հարուստ (Տուրգենևից) Ալ. Մատուրեան	81.
10.	Արծիւն ու կաղնին, Յովչ. Թումանեան	82.
11.	Տատու, Բաֆֆի	83.
12.	Գիւղի ժամը, Յ. Յովչաննիսեան	85.

13.	Հանդիպում, Բաֆֆի	86.
14.	Մուրացկան (Տուրգենևից) Ալ. Մատուրեան	89.
15.	Մուրացկանի մահը (Թարգմ) Ալ. Մատուրեան	90.
16.	Կատուն ու առիւծը, Ժողովրդական	90.
17.	Անբախտ վաճառականներ, Յովչ. Թումանեան	92.
18.	Առիւծն ու մահապարտը, Ժողովրդական	96.
19.	Այ, սև ամպեր, Ալ. Մատուրեան	98.
20.	Արտը, Վ. Փափազեան	99.
21.	Աերմացան, Ալ. Արարատեան, փոխիս.	101.
22.	Փոկակապ Ակոփապէր, Վ. Փափազեան	103.
23.	Թռչնիկներ (Վ. Հիւգօյից) Ալ. Մատուրեան	109.
24.	Ագռաւների յարձակումը, Շ. Տէր-Նիկողոսեան	110.
25.	Համերգ, Յովչ. Թումանեան	112.
26.	Խողն ու արծիւը, Վ. Փափազեան	113.
27.	Ճնճղուկ (Տուրգենևից) Ալ. Մատուրեան	114.
28.	Կոռնկ, Ժողովրդական, կրծատ.	115.
29.	Էյ, ջան հայրենիք, Աւ. Խսահակեան, կրծատ.	116.
30.	Միծեռնակ, Գ. Դոգոսեան, կրծատ.	117.
31.	Վէզիր Աբդուլը (Լ. Տօլստօյից) Ալ. Մատուրեան	118.
32.	Աքսորական (Վ. Հիւգօյից) Ալ. Մատուրեան	118.
33.	Արտուր, Ռ. Պատկանեան	119.
34.	Պանդուխոր Երգը (Փոխադր.) Ալ. Մատուրեան	120.
35.	Աշունք, Պ. Պոօշեան	120.
36.	Մնաս բարե, Ալ. Մատուրեան	121.
37.	Զմեռ, Խ. Աբովիան	122.
38.	Պարզկայ գիշեր, Աւ. Խսահակեան	123.
39.	Ջրօրհնէք, Պ. Պոօշեան	124.
40.	Ղարիբ Մշեցին, Աւ. Խսահակեան	125.
41.	Երազ, Ս. Շահազիզեան	126.
42.	Գարուն, Ղ. Աղայեան	127.
43.	Մայիս, Ղ. Ալիշան	128.
44.	Երգ, Ալ. Մատուրեան	128.
45.	Առաւոտ, Գ. Սրուանձտեան	129.
46.	Հայրենի տնակ, Ալ. Մատուրեան	131.
47.	Ամառ Երեանում, Խ. Աբովիան	132.
48.	Ազնիւ ընկեր, Ս. Շահազիզեան, կրծատ	134.
49.	Հազարան բիւլբիւլը և Սըհակ թռչունը, Գ. Սրուանձտեան	135.
50.	Մուրատ նահապետը, Պ. Պոօշեան	136.

51. Անի, Խ. Արովեան Անդր. Ա արքքան 139.
 52. Աղասի, Խ. Արովեան (Ամենայիշ) Անդրքան Վ 141.
 53. Աղասու Երգը, Խ. Արովեան, կրծատ. Աշու. Անդրքան Վ 142.
 54. Լեռներում, Աւ. Աչարոնեան Անդրքան Վ 143.
 55. Տորբ-անդեղ, Ղ. Աղայեան Անդրքան Վ 149.
 56. Բշտունցի, Թափփի Անդրքան Վ 151.
 57. Բանաստեղծը և երեխան (փոխագր.) Ալ. Ծատուրեան Վ 152.
 58. Աղքատ կին (Բերանժէից) Մ. Նալբանդեան, փոփոխ. Վ 161.
 59. Դեղեցկութիւն, Դէորդ Բաշինչաղեան Վ 163.
 60. Իմ պանարամը, Կ. Մէլիք-Շահնազարեան, փոփոխ. Վ 165.
 61. Մերուժան Արծրունի և Սմբատ Բագրատոնի, Կ. Կուսիկեան 170.
 62. Արշակ թագաւորը և Դրաստամառ իշխանը, Կ. Կուսիկեան 176.
 63. Հայոց տառերի գիւտը, Կ. Կուսիկեան Վ 178.
 64. Օշական գիւղը, Լէօ Վ 178.
 65. Վարդանանց պատերազմը, Լ. Սարգսեան Վ 180.
 66. Արաքսի արտասունքը, Ռ. Պատկանեան, կրծատ. Վ 185.



671. Տակառական Ա աշուն ինչը և ցածրքն մարդու Վ 181.
 681. Անդրքան Վ ցածրքաշամ անդրք Վ 182.



R559